



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

3999

Φ-31

18921

ԱԼԵՏԳԻՐ

ԹԻՖԼԻՍ 1904



~~0253 - 27~~ | 11/24

~~294 - 19~~ | 11/24

~~302 - 19~~ | 11/24

~~726 - 19~~ | 11/24


~~1068 - 13~~ | 11/24

~~837 - 17~~ | 11/24

03 30/11/24  
26 - 7/10

0367







4

891.542-3

47-31

47.

Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

355

# ԱԼԷՄԳԻՐ

ՊԱՏՄԱՎԷՊ

պարսիկների կեանքից

4374

2003



ԹԻՖԼԻՍ — 1904

Արագասիա Ա. Բուժաթեղածեի, Նիկ. 21.

Երտաս պաճ «Լուսայ» երկաճեոեայ Հանդիսից



4371

27m



ԱԼԻՄԳԻՐ <sup>1)</sup>

(Վէպ պարսկական կեանքից)

I.

Շուկան, Պարսկաստանի մանաւանդ մեծ քաղաքներում, մի տեսակ զբօսավայր է գրեթէ:

Արևը ծագելուց լետոյ, երկու սեռի բազմութիւն հետզհետէ սկսում է ներս լցուել այդ կամտրածածկ փողոցները, որոնք նեղ և երկար՝ տարածւում են զանազան ուղղութեամբ, ևրկու կողմում ունենալով բազմաթիւ խանութներ:

Խանութները բաց են, աղմուկը շատանում է, օդը հեղձուցիչ դառնում և կէսօրուայ մօտերը ժխորով այնպէս լի են անցքերը, որ երթևեկութիւնը դառնում է գրեթէ տաժանելի, մանաւանդ երբ ձիերի, ջորիների երկար շարքեր, փշաբարձ էշերի, բեռնաւորուած ծանրաքայլ ուղտերի կարաւաններ գալիս-մտնում են ամբողջի մէջ և սեղմում նոցա դէպի խանութների առջևը շինուած պատուանդանները:

Գրեթէ միշտ բաց, յաճախ լպրճուն, անհարթ և առանց որոշ յատակագծի շինուած, կիսախաւար ու վերից տեղ-տեղ բացուած երթիկներից լոյս ստացող այդ մութ բազարները աւելի դժուարանցանելի են լինում մանաւանդ տօն և ուրբաթ օրերը: Բազմութիւնը այդպիսի օրերում, աւելի է խոնուած, խանութների մէջ աւելի են յաճախորդներ—մանաւանդ կանայք. ամեն կողմից երևում են նոցա կապոյտ սաւանները և դէմ-

Дозволено цензурою, Тифлисъ, 22-го Января 1904 год

<sup>1)</sup> Պարսկերէն նշանակում է «աշխարհակալ»:



քերը լիովին ծածկող, ծակոտկէն դիմակով երկար քողերը (ըււրէնդ):

Անցնում են ահա հարուստ արքայազնի կամ որևէ մեծաւորի հարեմի կանայք աղախիններով, երբեմն ներքինին իրենց հետ: Նրանց կողքից՝ հրելով, հրմշակելով վազում են մարդիկ, էշեր, ջորիներ, օրորուելով ու ծանրաքայլ՝ գնում են միմեանց կապած ուղտերի երկար շարքեր... Մի կողմից լուում են զանգահարութիւններ. — կերակուր կամ քաղցրեղէն ու չոր միրգ ծախող խանութներն են, որոնք ահագնապէս զանգահարում են՝ անցորդների ուշադրութիւնը գրաւելու համար: Վաճառքը ամէն կողմ բաց՝ ի տես է գրուած դէպ առ դէպ կրպակների առաջ. մի խանութում՝ բազմատեսակ խմորեղէն ու շաքարեղէն, միւս կողմը՝ այլազան չոր միրգ: Թուֆ, թուզ, չամիչ, պիստակ, նուշ ու կաղին. մի այլ կողմ փիլաւ ու չիլաւ եփողի խանութն է, որ սիրտ խառնող ճարպահոտ շոգիով ծխում է անցնողների քթին. նրա դիմաց՝ շաքարի մերկ գլուխներով լի խանութը, ցածում՝ ճոթեղէնների, զէնքերի, հագուստի, գորգերի... խանութներ. մէջ առ մէջ՝ դեղատներ, ասիական այդ աղտոտ բժշկանոցները, ուր ծալապատիկ նստած՝ ինքնակոչ բժիշկները ընդունում են հիւանդը, զեղ են տալիս... Քիչ ցած՝ ու է փակուած խանութի առաջ, պատուանդանի վրայ՝ սափրիչն է, որ կկացրել—նստեցրել է մի աղտոտ թուրքի, կարմիր աղտոտ վարշամակով ծածկել է նրա կուրծքը և անելում է լերկ գանգը: Ուրիշ կողմ երևում է ջուր բաժանողը, որ կուժը մէջքին կապած, սառուցով լի հողէ գաւաթը ձեռքին՝ հրելով ամբոխը՝ գոռում է.

— Սիբիլ—ուլլահ, սիբիլ...

Վազվում են, սպրտում անցորդների միջից՝ թափառիկ թէյ տուողներ, կերակրատան ճարպոտ մանչուկներ, զէլլան տանող սրճատան ծառայողներ. անցնում է մրգավաճառը էշն առաջն արած, կշեռքը ուսին... և խանութուրներն ու ամբոխը անվրգով, սովոր այդ բոլոր խաժամուժին, այդ դժոխային աղմուկին—խօսակցում են, առևտուր անում, կանանց առաջ պարզում խանութի սպրանքը...

Երբեմն, մի սեփհական կառք, գալիս-հրում է, հրմշակում, կառապանը գոռում է «խաբէր դար», մարդիկ կպչում-սեղմուում են այս-այն պատին... Մի այլ ըուպէ, մի ձիաւոր, արշաւակի, մտրակը շառաչեցնելով պատում է ամբոխը և անցնում, իսկ ամեն քայլին՝ մոլլաներ ու սէլիդներ, ապա, աջ ու ահեակ եղած քարվանսարաններից, բաղնիքներից, մզկիթներից դուրս թափուող մարդիկ, աղաղակ, աղօթքի, հայհոյանքի, կռուի, ծիծաղի մի այլանդակ խառնուրդ...

Եւ այդ բոլոր խառնիճադանճի մէջ յաճախ երևում է նաև սևամորթ, շէկ կամ թխադէմ՝ երկար մազերով գէրվիշը, որ վագրի մորթը ուսին, քէշկիւլը <sup>1)</sup> ձեռին, նաջախը <sup>2)</sup> բարձր, դերասանական քայլերով, անվրգով կանգ է առնում իւրաքանչիւր խանութի առաջ, երգում կամ բարձրաձայն ու ողբազին նուիրական ոտանաւորներ արտասանում, ապա տալիս է խանութպանին մի կտոր մետակ կամ մի փուսնջ նանէ <sup>3)</sup> և առած դրամը քէշկիւլի մէջ ձգելով՝ շարունակում իր գնացքը: Յետոյ, երևում է մուրացիկը իր պարբերական, միաձայն նախադասութիւնը կրկնելով. նրան հետևում է տաք և խաշած ճակընդեղ ծախողը, պնակը գլխի վրայ դրած, մեծաձայն գովասանելով սպրանքը...

Եւ այսպէս, ամեն ոք գոռում է, ամեն ոք քայլում, շարժւում, աղմուկում: Ուտում են, խմում, նստած, կանգնած. երգում են, աղօթում, բանաստեղծում, զուարճանում այդ արևելեան երկար շուկաների բոլոր շարքերի երկարութեամբ:

Զբօսնողներ աւելի շատ են: Մարդիկ կան, որոնց միակ զուարճատեղին շուկան է: Այդտեղ նոքա ժամագրում են միմեանց, այդտեղ խմբուում մի ծանօթի խանութի մէջ, այդտեղ խումբ առ խումբ, կուտ, շաքարեղէն և այլն ուտելով՝ ձեմում են պարսիկ երիտա-

<sup>1)</sup> Քոքո ընկոյղի պատեանը, որ ծառայում է դէրուիչներին իրր գանձանակ, ջուր խմելու և այլն:

<sup>2)</sup> Երկաթեայ գաւազան երբեմն «եա Ալի» տառեր ձուլած վրան. ամեն դէրուիչ ունի:

<sup>3)</sup> Անանուխի բոյսը:



սարդ ազնուականները՝ շքեղ հագնուած, այդտեղ նոքա-  
 ճգնում են տեսնել՝ երբեմն շոգից երեսը բաց անող,  
 շատ անգամ դիտմամբ իրենց գեղեցկութիւնը երեցնել  
 ցանկացող կանանց, այդտեղ քսուելով նոքա սիրունների՝  
 խօսք են նետում, խօսակցում յաճախ, կամ իրենց ծա-  
 նօթների խանութների մէջ նստած՝ աշխատում են խօ-  
 սել յաճախորդ կանանց հետ, սիրային արկածներ որո-  
 նել և սակաւ չէ, որ այդ երկար շուկաների խուլ ան-  
 կիւններում տեղի են ունենում սիրային ժամադրու-  
 թիւններ:

Ահա այդպիսի զբօսասէր երիտասարդների մի խումբ  
 էր, որ մի աշնանային օր Թէհրանի մեծ շուկան էր  
 մտնում Եէմս-իւլ-իմարէթի կողմից: Չորս լաւ հագ-  
 նուած գեղեցկադէմ պատանիներ էին. քրքիչներով սկը-  
 սել էին անցնել խանութների առջևից. մէկը գնել էր  
 կուտ ու պիստակ, միւսը շաքարեղէն (շիբինի), երրոր-  
 դը՝ նուշ, յետոյ ծիծաղելով, կատակելով ու հանդարտա-  
 քալլ, այս այն խանութը, այս-այն անցնող կինը գննե-  
 լով՝ մտնում էին շուկայի խորքերը:

Սակայն երկար չը կարողացան նոքա միասին մնալ:  
 Բազմութիւնը շատ էր, շարժումը մեծ: Ծուտով երկու-  
 սի բաժանուեցան, յետոյ, աւելի ցածում, երբ Նոցանից  
 իւրաքանչիւրը ընտրել էր մի մի բան գննելու, ջան-  
 կարծ մի ինչ որ մերկ մարդ, կողմնակի փողոցից ոստ-  
 նելով՝ բազմութեան մէջ ընկաւ և նրանց լիովին բա-  
 ժանեց միմեանցից:

Բազմութիւնը իսկոյն շրջան կազմեց մերկ ու ալ-  
 լանդակ ոստնողի շուրջը. երիտասարդներից ամենակրտ-  
 սերը սեզմուած մնաց շրջանի մի կողմում երկու կա-  
 նանց և առջևից կանգնած աղտոտ գործաւորների մէջ  
 տեղում: Նախ, ոտների ծալրերի վրայ բարձրացած  
 ճգնեց ընկերներին գտնել, ձայնեց նոցա, բայց երբ  
 տեսաւ որ իզուր էր այդ, համակերպութեամբ սպասեց  
 և սկսեց զիտել:

Մերկ մարդն այժմ կանգ էր առել բացուած շըր-  
 ջանի մէջ տեղը և ոստոստելով՝ երգում էր: Բոլորը  
 ծիծաղում էին. մանաւանդ որ երգողը ալլանդակ, հրէ-  
 շաւոր ծամածուութիւններ էր անում, բերանը ահագ-

նապէս բացած՝ լեզուով խապոտ թմբկահարում, կոկոր-  
 դից օւնոցներ վիժում և մեծ գալարումներով օղի մէջ  
 ցատկոտելով՝ երգում էր

Ջան, Ֆէրրաշ Մախմարի,  
 Մախմարի սէն, մախմարի...

Անմիտ այդ երգը, նորա բերնում հնչում էր այն-  
 քան ծիծաղաշարժ, որ պատանին իսկոյն մոռացաւ ըն-  
 կերներին ու սկսեց սաստիկ զուարճանալ:

Այդ միջոցին էր, որ նա զգաց իր վզի վրայ մի  
 ինչ որ տաք, գգուող շունչ և դառնալով նկատեց եր-  
 կու կանանց: Մէկը, աւելի շքեղ հագնուած, հարուստ  
 հարեմի կին էր երևում, իսկ միւսը, աւելի պարզ սա-  
 լանով՝ աղախինն էր: Երկուսն էլ ծիծաղում էին և  
 որովհետև բազմութիւնը շատ խռնուած էր, զրեթէ  
 կպել էին պատանուն:

Ֆէրրաշ Մախմարին—այդ էր խենթ ոստոստողի  
 անունը—դեռ շարունակում էր իր ծամածուութիւններն  
 ու երգը: Անվնաս մի խենթուկ էր, որ նոր էր յայտ-  
 նուել Թէհրանի փողոցներում: Սակայն նա հռչակ ու-  
 նէր, որպէս լաւ դուշակող, երգելուց, ոստոստելուց լե-  
 տոյ, իբր թէ, նա ընդունակ էր դառնում ճշգրիտ գու-  
 շակելու. մանաւանդ որ փող էլ չէր պահանջում. առ-  
 նում էր ինչ տալիս էին, գուշակում էր, եթէ չը տա-  
 լին իսկ:

Ու պատանին այժմ երկու զբաղմունք ունեցաւ—  
 խենթուկի ծամածուութիւններն և իրեն՝ ետևից սեղ-  
 մող կանայք: Առիթ որոնեց խօսակցութիւն սկսելու  
 մանաւանդ պերճ սաւանով կնոջ հետ, սակայն դեռ չէր  
 համարձակոււմ. զիտէր որ վտանգաւոր բան էր այդ-  
 պիսի բազմութեան մէջ, խօսք ուղղել որևէ անձա-  
 նօթ կնոջ:

Առիթը սակայն ինքն իրեն ներկայացաւ: Աղախի-  
 նը սոսաջ տիրուհուն.

—Խանո՛ւմ, կուզէս քեզ համար էլ գուշակել  
 տանք Ֆէրրաշին. շատ ճիշտ բաներ է ասում:

—Յիմարութիւն...արեցարհամարհութեամբ տիրու-  
 հին—խենթ է, ուրիշ ոչինչ...

Պատանին, մի ըրպէ վարանեց, ապա, գողգոջուն



և ամաչկոտ՝ դարձաւ տիկնոջ և մեղմ ձայնով ասաց.

— Խանու՛մը իրաւունք ունի, ճիշտ խօսք էրբ կարելի է լսել մի խենթից:

Կինը կռացաւ և քողը շատ քիչ բարձրացնելով՝ զննեց պատանուն, յետոյ դարձաւ իր աղախնին, կպաւ նրա ականջին ու մի բան փսփսաց.

Աղախինն էլ կռացաւ ու նայեց, յետոյ երկուսն էլ լռեցին: Պատանին ոչ մի պատասխան չստացաւ:

— Յիմմօր բան ասացի արդեօք, խօսեց նա կարմրելով— ներեցէք...

— Հը՛մ... արեց աղախինը ու տիրուհուն նայեց:

— Գնանք, ասաց տիրուհին աղախնի թեւը բռնելով: Ապա, երբ շարժուել էին, աւելացրեց հեգնօրէն.

— Ասա այդ երիտասարդին, Փաթմա՛, որ շատ անգամ ճիշտ խօսքը միմիայն խենթի բերնից կարելի է լսել...

Ու մէջքը դարձնելով՝ դուրս սահեց բազմութիւնից:

Պատանին կնոջ թարմ ձայնից գրաւուած, նայեց երկար նոցա ետեից, յետոյ ինքն էլ դուրս ելաւ ու սկսեց հետևել:

Գիտէր որ վտանգաւոր բան էր արածը, սակայն չը կարողացաւ զսպել իրեն, ուզում էր տեսնել կնոջ դէմքը. հեռուից էր քայլում, մինչև որ ստուգեց թէ ծառայ չը կար նրանց հետ: Երբ մտել էին շուկայի մի ուրիշ թեւ, աւելի մօտ գնաց և մտադրեց մինչև վերջը հետևել, մինչև որ կամ խօսէին և կամ գոնէ տիրուհու դէմքը տեսնէր ուէ կերպով:

Շուկայի խորքում երկու կանայք մտան մի խանութ: Պատանին յանկարծակիի եկաւ: Խանութը ճոթեղէնի էր, խանութպանը անձանօթ: Ինչպէս ներս գնալ և ինչ պատրուակով: Հետաքրքրութիւնը և ցանկութիւնը տեսնելու տիկնոջ— աւելի մեծանում էր. այժմ նա մոռացել էր ընկերներին, և մինչև իսկ գրպանի միջի չոր մրգեղէնին էլ ձեռք չէր տալիս: Հեռու կանգնած, աչքը խանութի վրայ, մի հնարք էր մտածում:

Այդպէս նա քիչ ետ ու առաջ գնաց, կանգ առաւ մօտակայ մի խանութի մօտ, բայց ոչ մի հնարք զեռ գտնել չը կարողացաւ: Կանայքն էլ այնտեղ հանդարտ

նստել էին և զննում խանութպանի մէջտեղ բերած կտորները: Ինչ անել:

Շուարած շուրջն էր նայում, երբ զգաց որ մէկը բռնում է իր թեւը:

— Ինչ կայ, Միրզա Խոսրէվ, լսեց նա մի հաստ ձայն. փո՛ղ չունիս թէ մարդու ես սպասում:

Ծանօթ շահագող էր. մի ընկեր:

— Ո՛չ, ասաց երիտասարդը— ուզում եմ մի կերպով մտնել այդ խանութը, բայց պատրուակ չեմ գտնում:

Շահագողէն նայեց և իսկոյն հասկացաւ թէ բանը ինչո՛ւմն էր:

— Հը՛. արեց նա ժպտելով այդ երկու կանանցից մէկը...

Խոսրէվը գլխովը դրական շարժում գործեց:

— Երեխայ ես, ճշմարիտ, գոչեց շահագողան. արի ինձ հետ:

— Բայց ինչ պատրուակով, շփոթուեց Խոսրէվը— մենք խօ կին չենք, որ ճոթեղէն առնենք:

— Յիմար ես, ահա թէ ինչ. դու երևի Ալի աղալին չես ճանաչում:

— Ալի աղան... Ո՞վ է այդ:

— Խանութի տէրը... Մի շնճեր մօլլա է, որ շատ է սիրում գեղեցիկ երիտասարդների այցելութիւնը... Վատ բան չը մտածես. ճարպիկ մարդ է. գիտէ որ գեղեցիկ տղամարդիկ իր խանութի մէջ նստած, կը գրաւեն կանանց և առևտուրը լաւ կլինի... Գնանք այժմ, ես ծանօթ եմ այդ շնճերի հետ:

Յետոյ, առանց պատասխանի սպասելու, բռնեց Խոսրէվի թեւը և համարձակ՝ մտաւ խանութը:

Շահագողէս սակայն սիրուն տղամարդ չէր. հաստ, կարճիկ, տգեղ քթով և չեչոտ այտեր. աչքերն իսկ ճարպոտ և փոքր էին: Թէհրանին յայտնի կնամուղ և զուարճասէր երիտասարդ էր, որ կեանքն անց էր կացնում քէֆերի և կանանց մէջ:

— Սալամ... Ալի աղա՛, գոչեց նա ներս մտնելով— թող կը տան քիչ քիչ մօտ նստել, շատ յոգնած ենքի մանաւանդ այս հետիս շահագողէն, որ գեռ պատան է, այսքան փխրուն ու քայլելու անսովոր:



—Ալէէքսանտրոս-սարգս, Մէհմէդ խան, համեցէք, համեցէք. գոչեց Ալի աղան-նստէք որքան կուզէք. ո՞վ է այդ սիրուն պատանին:

—Իմ բարեկամս է... Բայց դու առետուրդ արա խանու՞մների հետ, մենք չենք ուզում խանգարել զործդ:

Կանայք նայեցին նրանց. տիրուհին մի շարժում գործեց, կռացաւ դէպի աղախինը և մի բան փսփոսաց:

—Տասնևհինգ արշին կտրեմ, խանում. հարցրեց խանութպանը այդ միջոցին:

—Այո՛, ասաց խանումը գրաւիչ ձայնով—սակայն թանգ ես հաշուում այս կտորը:

—Աստուած էլ գիտէ որ վնասով եմ տալիս, խանում. բայց ձեզ թող դուրբան լինի ողջ ունեցածս... Ուրիշ ինչ կը հրամայէք. կուղէք այս հնդկական դիպակից, լաւ վերմակացու է. կամ այս թաւիշներէց, որոնցից ո՛չ մի տեղ չէք գտնիլ... անցեալ օր, ահա, այս շահագաղէի մայրը 20 արշին տարաւ...

—Շահագաղէներ են այդ աղաները՝ ընդհատեց խանումը նրան և նայեց երիտասարդների կողմը:

—Ձեր ծառայութեան համար պատրաստ. լանդգնաբար մէջ մտաւ Մէհմէդ-միրզան:

—Ես ձեզ հետ չը խօսեցի. ասաց խստութեամբ խանումը. լետոյ դարձաւ խանութպանին և աւերացրեց

—ո՛չ, չեմ ուզում. իսկ այդ աղային ասա, որ չը լանդգնի ուրիշի կանանց հետ խօսելու:

Խօսելը գունատուեց և տեղիցը շարժուեց ելնելու:

—Ի՞նչ մեղք արինք, խանում, որ մեզ վռնդում ես. ասաց դարձեալ շահագաղէն ժպտելով-յոզնած մարդիկ ենք և եկանք, քիչ հանգստանալու. բայց, եթէ կը հրամայէք, կերթանք:

—Նստեցէք. ասաց հրամայական ձայնով կինը—խանութը իմը չէ և ով կամենայ կը մտնի, բայց չեմ ուզում որ ինձ հետ խօսես՝ երբ ես քեզ հետ չեմ խօսում...

Ալի աղա, ցոյց տուր ինձ ուրիշ դիպակներ ևս: Ի՞նչ տուածդ ամբողջը կառնեմ, մի կողմը դիր:

Թէ խանութպանը և թէ շահագաղան հասկացան տիկնոջ ձևերը, դրա համար էլ ժպտուն՝ լռեցին: Իսկ Խօսելը ամօթ զգաց և դառնալով շահագաղային՝ ասաց:

—Ես գնում եմ, դու կուզես՝ նստիր:

—Ո՛ւր է գնում այդ երիտասարդը. բացականչեց կինը, որ լսել էր—Ալի աղա, ասա որ ես հրաման եմ տալիս մնալու. թէյ հրամցուր նրանց:

Շահագաղէն ժպտեց և թևովը կպաւ Խօսելին ու աչքովը ակնարկեց՝ որ նստի:

Շուկայի ընդհանուր աղմուկի մէջ՝ ո՛չ մի անցորդ ուշք չէր դարձնում նոցա և ոչ էլ լսում այդ խօսակցութիւնը: Խանութի մի ծառան թէյ բերեց: Խօսելը լուզուած՝ սկսեց խմել:

—Այս դիպակը... խօսում էր կինը խանութպանին-շատ լաւը չէ. ցոյց տար թաւիշներդ... Եւ ո՞վքեր են այդ շահագաղէները, Ալի աղա. ո՞վ է այդ պատանին, որ համեստ է երևում. ինչո՞ւ չէ խօսում երբէք: Լաւ, այս թաւիշը հաւանում եմ, բայց աղախնիս համար կառնեմ. ես չեմ հագնում այսպիսի բաներ... Կարող ես ասել դոցա որ խօսեն միմեանց հետ, բայց ինձ հետ ոչ... Փաթմա, հաւանում ես այս թաւիշը...

—Խօսիր, անմիտ. ատամների միջից ասաց շահագաղէն Խօսելին-խօսիր, յիմար, մի բան ասա, չէս տեսնում որ կինը ուզում է խօսակցել քեզ հետ:

—Ի՞նչ խօսեմ... դողում էր Խօսելը, որ երբէ՛ք չեմ եղել այդպիսի հանգամանքներում:

—Իսկ ինչ են փսփսում այդ շահագաղէները. ասաց խանումը խստութեամբ—քաղաքավարի բան չէ այդ. ինձ վրայ են խօսում... հրաման չեմ տալիս... Փաթմա, քիչ այսպէս նստիր, շոգ է, ուզում եմ երեսս բաց անել. այնպէս նստիր որ այդ մարդիկ երեսս չը տեսնեն...

Սակայն նա երբ երեսը շրջած՝ քողը վերցրեց, դիտաւորութեամբ այնպէս դարձաւ, որ Խօսելը տեսաւ նրա հմայիչ գեղեցկութեամբ և կախարհող ժպտուն սև աչքերը:

Կինը երկար նայեց պատանուն, մինչև իսկ քիչ ժպտաց լետոյ, մէկէն, երեսը ծածկեց քողով և դարձաւ խանութպանին.

—Ալի աղա, ասաց. շատ շոգ է այստեղ... Ծալիր այդ բոլորը և ուղարկիր նասրուլլահ խանի տանը. Ալիշէ-խանումի համար... Իսկ ինչ է այդ միւս շահագաղէի



անունը.

— Մէհմէդ խան... շտապեց ստել շահգադէն, Խոսրէվի խօսելուց առաջ:

— Ես քեզ չեմ խօսում. գոչեց կինը-դու անամօթն ես երևում... Այլ աղա, ուրիշ անգամ չեմ ուզում որ այդ անամօթը այստեղ գայ, երբ ես գալիս եմ...

— Իսկ էս... հարցրեց ամաչելով Խոսրէվը.

— Դու կարող ես. ասաց աւելի մեղմ ձայնով կինը-դու անամօթ չես...

— Հը՛մ, հը՛մ... մոմուաց շահգադէն- աւելի լաւ է ասես՝ որ սիրուն է...

— Մնաք բարև. ելաւ կինը-ուղարկիր և փողը ստացիր:

Յետոյ պարուրուեց սաւանի մէջ, մի անգամ էլ նայեց Խոսրէվին և իջաւ շուկան աղախնի հետ:

— Ետեկից գնա՛, շուտ... բոթեց շահգադէն Խոսրէվին.

Պատանին առանց այն էլ, ելել էր և երբ կանայք քիչ հեռացան, ցատկեց շուկայի մէջ և սկսեց հետեւել նոցա:

Քիչ հեռու կանայք դարձան և նրան նայեցին և այդպէս բաւական տեղ, մի քանի անգամ կրկնեցին նոյն շարժումը:

Երկար նոքա շուկայից շուկա անցան և երբ հասել էին մի աւելի խուլ տեղ, մէկէ՛ն աղախինը ետ մնաց, սպասեց Խոսրէվին և երբ սա մօտեցել էր, արագութեամբ ասաց.

— Հետեւիր մեզ և սպասիր մինչև ես գամ իմաց տամ... Խանումս ուզում է խօսել քեզ հետ...

Ապա, սրայէս թէ մի տեղեկութիւն էր հարցրածը, շնորհակալութիւն յայտնեց բաբառաւոր և առաջ անցաւ:

Խոսրէվը մի բոպէ, սրտի ուժգին բաբախումից, կանգ առաւ գունատ և լուզուած: Անակնկալը խիստ էր:

Բայց երբ կանայք հեռացան, թոթուեց իրեն և արագ քայլերով, անցորդներին հրելով՝ գնաց նրանց ետեկից:

Քիչ յետոյ փողոց ելան. կանայք պատի տակից

Խոսրէվը փողոցի մէջ տեղից, ետ մնացած, սակայն գաղտագողի աչքը միշտ նրանց, գնաց ուր նոքա գնացին:

## II

Յերեկով կատարելապէս լի երկար շուկաները, ամալի, մութ և դատարկ են լինում գիշերները:

Մթնանայուն պէս, գրեթէ բոլոր խանութները գոցուած են: Մնում են շարքերի ծայրերում միայն՝ ընդեղէնի կամ մրգեղէնի մի քանի կրպակներ, որոնք ժամը 8-ից յետոյ նոյնպէս փակուած են: Ապա, այլ ևս ոչ ոք չէ մնում շարքերի մէջ, եթէ ոչ՝ բազարում վրտացող բազմաթիւ շներն՝ իրենց անհամար լակոտներով: Տեղ տեղ, միմեանցից շատ հեռու՝ ծխում են աղօտ փայլով ձէթէ փոքրիկ ճրագներ և նրանց կողքերին կուչ են եկել պահսորդները, որոնք հսկում խանութներին (գարուղներ):

Ընդարձակ կամարների տակ հնչում է միայն շների ձայնը. պահսորդները սակաւ են միմեանց ձայն տալիս. բայց եթէ ուէ ուշ մնացած անցորդ առանց լապտերի մտնէ այդ մութ կամարների տակ, իսկոյն շների վոհմակներ ամեն կողմից թափուած են նրա վրայ կամ բղկտելու և կամ եթէ անցորդը փայտով զինուած է, անընդհատ հաջոցներով ընկերանում են մինչև շուկայից դուրս գնալը:

Սակայն դրանցից դուրս, շուկայի մէջ գիշերով անցնում կամ նրանց պատուանդանների վրայ կծկուած երևում են նաև ուրիշ տեսակի բնակիչներ, որոնք հին ու զգզուած վերմակ կամ կարպետ վրանին առած, սպրտելով մտնում են մթութեան մէջ, կծկուած մի անկիւն ու լուռ, անշարժ մնում մինչև լոյս: Ոչ շներն են հաջում նրանց վրայ, ոչ էլ պահսորդները տեսնել ձևացնում, թէև նրանց անցնելու ժամանակ ձայն են տալիս միմեանց և աչքի տակով զննում՝ թէ ուր գնացին և կամ որ կողմը կծկուեցին:

Շուկայի և խանութների համար նոքա անվտանգ մարդիկ են. շներն ու պահսորդները լաւ գիտեն այդ.



խէսփուշը<sup>1)</sup> գողանալ չը գիտէ. և եթէ նա օպիուս ծխող-  
ներէց էլ է, անշուշտ մի մուժ անկիւնում կծկուելու  
և կամ քնելու է կողմնակի բաղնիքներից մէկի մոխ-  
րատան տանիքի վրայ:

Սյշպիսի տարօրինակ մի խէսփուշ էր նաև Սէլիդ  
խանը, որ Էմիրի շուկայի անկիւնում, ըստ իւր սովո-  
րութեան, ժամը 7-ից սկսած արդէն, եկել կծկուել էր  
և անշարժ կարծես ննջում էր: Փաթաթուած էր աղ-  
տոտ կապտագոյն հնամաշ վերարկուի մէջ. ալեխառն  
մօրուքն ու մազերը հազիւ երևում էին. գլխին աղտոտ  
թաղեայ գլխարկ, բոբիկ ոտներին՝ գիվէ կոշուղ կօ-  
շիկներ:

Չը նայելով անշարժութեանը—չէր քնել: Օպիու-  
սի մօլին այժմ գտնուում էր մի տեսակ անզգայութեան  
մէջ և աչքերը բաց՝ նստել դողում էր: Հազիւ ուրեմն  
շարժում էր աջ ձեռքը՝ մօխիրով ծածկելու համար  
կրակը, որ կողքին դրուած կրակարանի մէջ պլպլում  
էր: Սէլիդ խանը, որպէս ամեն օպիուս գործածող, ա-  
մառ թէ ձմեռ՝ մրսում էր:

Սյդ միջոցին փակում էին նաև շուկայի ծայրե-  
րում գտնուող մրգեղէնի կրպակները. ուշ մնացած ան-  
ցորդները շների ընկերակցութեամբ դուրս գնացին բա-  
զարից և քիչ լետոյ խուսեց պահնորդների առաջին կոչը:

—Խաբէր դարձ<sup>2)</sup>...

Ի երբ այդ առաջին ձայնի արձագանքը կամարներին  
բաղխելով մտաւ միւս անցքերի մէջ, մթութիւնից  
դուրս վիժեց նրան պատասխանող կոչը ուրիշ կողմից.

—Խաբէր դարձ...

Ծները սկսեցին նորից հաջել, ապա իսկոյն լռեցին,  
թէև շուկայ էր մտել կապերտով փաթաթուած մի երկ-  
րորդ անձ ևս, որ հանդարտ քայլերով անցաւ պահնոր-  
դի առջևից և եկաւ կանգնելու Սէլիդ խանի առաջ:

—Բարի երեկոյ, Սէլիդ խան:

1) Խէսփուշ և ո՛չ թէ խասփուշ, Խէսփուշ, նշանակում  
է վատ, ցնցոտի հազնուած, իսկ խասփուշ՝ լաւ, թանգազին  
կառներ հազած:

2) «Զգոյշ եղիր»:

Վերջինս առանց շարժուելու՝ ասաց.

—Սալէմ, Ս.բպէր:

Յետոյ մի կողմ քաշուեց և տեղ տուաւ: Ս.բպէրը չը  
բարձրացաւ պատուանդանի վրայ, այլ կրթնեց նրան և  
քիչ լռելուց լետոյ՝ ասաց.

—Սէլիդ Համզայի աւերակները գնանք, Սէլիդ  
խան:

Սէլիդ խանը լուռ՝ չը պատասխանեց:

—Չես ուզում գալ, կրկնեց Ս.բպէրը:

—Ի՞նչ կայ այնտեղ. մըմնջաց Սէլիդ խանը— ձանձ-  
րալի է:

—Շատերը կը լինեն... Սղալար խանը, Մուլա Նէ-  
ջէֆկուլին...

Սէլիդ խանը քիչ էլ լռեց, լետոյ ծանրութեամբ  
շարժուեց, ելաւ, ոտները ցած կախեց պատուանդանից  
և ասաց.

—Գնանք: Միւնոյն է. այստեղ կամ այնտեղ:

Երբ բոլորովին իջել էր, կրակարանը մօտ քաշեց,  
խնամքով մօխիրը հաւաքեց առկայծող մի քանի կտոր  
կրակի վրայ և դրեց պատուանդանի տակը գտնուող  
ծակի մէջ, ապա կուչ եկաւ վերարկուով և առաջ  
անցաւ:

Ս.բպէրը նրա կողքից էր քալում: Տասը բոպէ լուռ  
ու հանդարտ՝ անցան նոքա մուժ անցքերով՝ առանց  
մոլորուելու. այնպէս որ կարծես լապտերով էին քայ-  
լում, լետոյ ծոցին դէպի Սէր-Չէշմէ և մտան աւելի  
լայն շուկայ: Մի փուռի մէջ վառուող կրակը խոշոր ե-  
փուռ լոյսի շրջան էր գծում այնտեղ թաց գետնի և  
սև պատերի վրայ:

—Հաց են թխում վաղուայ համար. խօսեց Ս.բպէրը  
անօթի չես, Սէլիդ խան:

Սէլիդ խանը ուտերը թոթուեց.

—Վարձեմ... Բայց անօթութիւն չեմ պղում...

Խէսփուշը միշտ անօթի է և... երբէք չէ զգում:

—Իրաւունք ունիս:

Նորից լռեցին: Ծները նրանց տեսնելուն պէս հա-  
չում էին, երբ մօտենալով հտոտում էին և ճանաչում՝  
լուռ էին: Մուժը հետզհետէ թանձրանում էր: Շատ



Հեռու, խորքում, երևում էին ձեթե ճրագները՝ մի տեսակ դեղին ամպի մէջ աղօտացած:

Երբ երկար լուել էին, Աքպէրը կծկուեց իր կարպետի մէջ և ասաց փիլիսոփայօրէն.

— Ասա տեսնենք, Սէյիդ խան, ինչից է որ երբ անօթի ես, մուրալ անգամ չես ցանկանում:

— Պարզ է. խօսեց Սէյիդ խանը. խէս-փուշ ենք. խէս-փուշը մուրալ չը գիտէ. եթէ պէտք ունի՝ առնում է:

— Իսկ եթէ չը տան:

— Առնում է. պնդեց Սէյիդ խանը առանց շեշտի, հաւասար ձայնով:

— Հը՛մ. արեց Աքպէրը-իրաւունք ունիս...

Ապա նորից մտածեց քիչ և հարցրեց.

— Իրաւացի է, օրինակ, Սէյիդ խան, որ մեր ընկերները— Ջաւադը, Իսմայիլ խանը այժմ իրենց տներում քնեն, իսկ մենք՝ աւերակների մէջ:

— Իրաւացի է. պնդեց Սէյիդ խանը-մենք խէս-փուշ ենք.

Յետոյ երբ ընկերը սպասում էր, աւերացրեց.

— Մենք էլ պառկել ենք մեր տներում: Բայց այժմ... Միւնոյն է... Մենք աւելի երջանիկ ենք. կորցնելու ոչինչ չունենք...

Երևի Աքպէրը այլ ևս չը կարողացաւ այդ ուղղութեամբ մտածել կամ նրա ասածներին առարկել, որով-հետև խօսքը փոխեց:

— Այսօր ծխել ես, հարցրեց նա:

— Ծխել էի...

— Ե՛ւ...

— Մենք ապրում ենք՝ քնած ժամանակ:

— Իսկ ինչ ես մտածում այժմ:

— Որ զարթուն եմ...

— Իրաւունք ունիս:

— Այնտեղ ափիօն չի լինիլ:

— Գուցէ:

Նորից լռեցին: Բայց այս անգամ ընդհանուր լուր-թիւնը մէկէն խանգարուեց: Առկաջի բերնի կողմից լանկարծ լուրեց շների բուռն հաջելու, ապա պահնորդի



ձայնը.— Խաբէր դար...

Սէյիդն ու Աքպէրը կանգ առին. լուում էր վազող ոտների ձայն թաց գետնի վերայ. շները հետապնդում էին, իսկ պահնորդները իրար անցած՝ անընդհատ գոռում էին միմեանց:

— Ո՛վ պիտի լինի. մոմօաց Աքպէրը:

— Կը տեսնենք:

Վազողը մօտենում էր: Բանն այն է, որ շներին բացի, ոչ մի հետապնդող չը կար. պահնորդները իրենց տեղերում կանգնած էին միայն գոռում, իսկ վազողը, հալածուածի նման կարծես փախչում էր:

Երբ հաւասարուել էր խէս-փուշներին, Աքպէրը մթան միջից քիչ լաւաջացաւ, ոտը դէմ տուեց և վազողը արգելքի հանդիպած՝ փուռեց գետին: Ծները յարձակուեցին, բայց Սէյիդ խանը աքացիներով վանդեց նրանց:

Մինչ այդ, Աքպէրը բռնել էր ընկնողին թւից և ճգնում էր մթան մէջ իմանալ թէ ով էր:

— Խէսփուշ է. ասաց քիչ յետոյ— ապա, ելիր, մարդ, ո՛ւր ես փախչում:

Ձայնից կամ շարժուածքներից գուցէ, ընկածը իմացաւ որ խէսփուշների հետ գործ ունի: Ելաւ, տրորեց ծնկները և գոչեց.

— Ինչո՞ւ էք արգելք լինում ինձ, մարդիկ. ես խօզող չեմ:

— Աւելի լաւ. ո՛ւր էիր վազում:

— Աղան հրամայեց Սէյիդ խանին գտնել:

— Հը՛մ, արեց Աքպէրը— այդ ինչ աղայ է, որ ազալի գտնել է հրամայում:

— Ս՛ողա Նէջէֆ-կուլին:

— Սէյիդ Հէմզէթից ես գալիս:

— Այո, իսկ դ՞ու ով ես:

— Ի՛նչ է եղել այնտեղ. հարցրեց Սէյիդ խանը առաջ գալով:

Խէսփուշը ճանաչեց նրան:

— Աղէն խնդրում է քեզ անմիջապէս գալ, մօտ 20—30 մարդ է հաւաքուել այնտեղ:

— Փրտտակների մէջ, հարցրեց Աքպէրը— ինչ կայ:

1001  
4374



որ. նոր բան է եղել:

— Սպանուած են գտել:

— Սպանուած...:

— Սէյիդ Հէմզէի մէջ ձգուած. շարունակեց խէսփուշը-կուրծքը դաշոյն խրած... յաւ հագուած մարդ... ճիշդ փլատակների մէջ... Աղան խնդրեց որ Սէյիդ խանը շուտ գար...

— Ես դատաւոր եմ...

— Այ ոք չը ճանաչեց սպանուածին...

— Հը'մ... մումաւոց Աքպէրը-Սէյիդ խանը կը ճանաչի:

— Աղէն ասում էր որ Սէյիդ խանը հին խէսփուշ է...

— Իրաւունք ունիս. ասաց Սէյիդ խանը-Շահը գեռ նոր էր գահ նստել... գնանք, ես կը ճանաչեմ:

Ու սկսեցին քայլել. շները լուծ էին. պահնորդներին մէկը, որին երևի ուղարկուած էր գաղտնապէս տեսնելու թէ ով էր եկողը, այժմ երբ տեսաւ որ երեք խէսփուշ են անցնում, լուեց և քաշուեց միտան մէջ ու թողեց անցնելու:

Բայց այնքան հեշտ չեղաւ նոցա անցքը շուկայի բերնի մօտ: Այնտեղ պահնորդը նրանց առաջը կտրեց և գողաց.

— Ո՞վ է այն:

— Չայնդ կտրիւր, ախմախ, գոչեց նրա երեսն ի վեր Աքպէրը— չէս տեսնում որ խէսփուշ է...

Պահնորդը ապշած՝ մօտեցաւ աւելի լաւ տեսնելու:

— Ո՞վ է այն, ասում եմ, կրկնեց նա փայտը բարձրացնելով:

— Ասացին քեզ՝ որ խէսփուշ է. գողաց մէկէն Սէյիդ խանը և գէն հրեց նրան— Անպիտան, վաղուց է որ Սէյիդ խանին չես ճանաչում:

Պահնորդը քաշուեց և թողեց անցնելու:

Շուկան դէպի աջ, զանազան ծուռ ու մուռ թևերով՝ հանգում էր նեղլիկ, ցեխոտ ու գալարուն փողոցներով աղտոտ թաղի, որ Սէր-Չէշմէ է կոչուում: Խաւփուշների այնտեղ մտած ժամանակ, բոլոր փողոցները ամալի էին. միմիայն շներ կային ամէն պատի տակ,

որոնք աղաղակներով ընկերանում էին նոցա մինչև իրենց թաղի գլուխը, ապա թողնում որ անցորդները մտնեն միւս թաղի շների աղմուկի մէջ:

Բայց այդ բոլորը անդրդուելի էին թողնում խաւփուշներին, որոնք պարուրուած իրենց ցնցոտիներով, հանդարտ, չափուած քայլեր էին անում, անխտիր կոխում ցեխ, ջուր, աղբակոյտ. ոչ իսկ շարժում էին գործում ետևից խմբովին եկող և աղմուկ շներին բշտուած միտան մէջ, ճանապարհը շատ լաւ գիտենալով, հետզհետէ մտնում էին թաղի աւելի խուլ, աղտոտ ու նեղ փողոցները:

— Իսկ երբ է ձգուած դիակը, հարցրեց Սէյիդ խանը, երբ խրուած մի ցեխակոյտի մէջ, համակերպութեամբ, առանց տրտունջի՝ ձգնում էր կոշիկը չը թողնել այնտեղ:

— Այսօր չէ յամենայն դէպս. ասաց եկուոր խէսփուշը— ամենից առաջ այնտեղ եկող խումբն է տեսել... Աղան է եղել... Իսկոյն մարդ է ուղարկել շատերի իմաց տալու որ գան, որովհետև ամենքը գիտեն որ Սէյիդ Համզէն մեր հաւաքուելու տեղն է և եթէ դիակը գրտնեն՝ կը կարծեն թէ մենք ենք սպանել:

— Հը'մ... արեց Աքպէրը— չէիք կարող վերցնել և տանել ձգել մի ուրիշ փլատակի մէջ, օրինակ, հէնց դարբասի փոսերում:

— Նախ որ տանելիս կրտեսնուէր և երկրորդ՝ որ աղէն չը թողեց:

— Աղան բան է մտածում դիակի մասին:

— Չը գիտեմ. բարկացած էր, հայհոյում է թագաւորին, սաղբազամին... բոլորին:

— Հը'մ... արեց Սէյիդ խանը— սպանուածը երիտասարդ է:

— Բոլորովին երիտասարդ:

— Հասկանում եմ ուրեմն:

Եւ չը նայելով միւս երկու խէսփուշների սպասողութեան, որ Սէյիդը բացատրէր ասածը՝ լուեց ու շարունակեց ճանապարհը այս անգամ քայլելով ջրալի ցեխի մէջ, որ գոյացել էր փողոցի միջի աղտոտ առուակից:



—Սպանուածը պատանի է. աւելացրեց խէսփուշը կամենալով Սէյիդ խանին խօսեցնել:

—Սյո... մոմուաց Սէյիդ խանը և ապա յանկարծ աւելացրեց խուշ ձայնով:

—Սէյիդ խանը չէ հրաւիրուում դիակը ճանաչելու:

—Սպա... վրայ տուաւ Աքպէրը հետաքրքրութեամբ:

—Հասկանում եմ դարձեալ. ասաց Սէյիդ խանը անվրդով ու դարձեալ լռեց:

Միւս երկուսը յուսահատուեցին: Սէյիդ խանին խօսեցնելու փորձեր անելուց և լուռ՝ քայլեցին նրա ետևից:

Չուտով դուրս եկան ձիաքարշի գծի վրայ. ալստեղ շները նրանց հանգիստ թողին. ցեխ էլ չը կար: Սէյիդ խանը արագացրեց քայլերը:

Գծի ծռուած տեղում նա մի անգամ ևս դարձաւ հրաւերը բերող խէսփուշին և հարցրեց.

—Կողոպտուած է...

Խէսփուշը հասկացաւ որ խօսքը դիակի մասին էր:

—Ո՛չ... վրան գտնուեց ոսկի ժամացոյց և մի քրօսակ ոսկի...

—Ս.հա թէ ինչ... մոմուաց Սէյիդ խանը—ոսկի ժամացոյց... քրօսակ ոսկի... Հասկանում եմ...

*Մու* III.

Ժողովը բազմամարդ էր փլատակների մէջ: Ընտրել էին աւերակ մզկիթի ամենալայն մասը, ուր դեռ կային չորս պատեր և գետնի վրայ ընկած քարեր ու սալեր. առաստաղը չը կար. աստեղալից երկինքն էր փայլում վերևում:

Պատերից մէկի փլուածքից ներս էին մտել այդ այլանդակ դէմքերով ու բազմազան ցնցոտիներով մարդիկ և տեղ բռնել զանազան կողմերում խառն ի խուռն, իրար մօտ, կկգած, պառկած, թիկն տուած կամ յետոյքի վրայ նստած, ծնկները ցցած ու գլուխնին ծնկներէ ծայրին կռթնեցրած:

Ոչ մի լոյս չէր վառուած. մթութեան մէջ պլպլում էին երբեմն չիբուխների եփուն կայծեր, երբեմն էլ մի

վառուող լուցկի ի ցոյց էր հանում մի գիսախուլ, սև և ալլանդակ դէմք և իսկոյն հանգում:

Չէին խօսում բարձրաձայն. խուլ փսփոց, փոքրիկ շշուկ—և ահա բոլորը:

Ոչ ոքի դէմքը պարզ չէր երևում. սև ուրուականների էին նման՝ որոնք շարժուում էին այս այն կողմ:

Պատի թէ առաստաղի փլուածքից մի խոշոր կտոր գլորուած՝ ընկել էր մուտքի մօտ և այդ խոշոր բարձր կտորի վրայ նստած կային երեք անձեր: Երկուսը չոր ու երկար, միւսը կլորիկ ու արալի մէջ փաթաթուած. երևում էր երբեմն նրա գլխին եղած սպիտակ ապարօշք: Եւ երբն էլ ծխում էին. երեքի բերնի մօտ էլ պլպլում էին չիբուխների կայծեր և նրանց կարմրութեան մէջ պահ մի օձապտոյտ ելնում էին երեք սև ծուխի սիւնակներ:

Իրսումն էլ ոչ մի աղմուկ: Աւերակը բնականութիւններից հեռու, բազմաթիւ փլատակների խորքումն էր և գիշերուալ այդ պահուն ոչ ոք չէր համարձակուիլ մտնել քաղաքի այդ փլատակային մասը: Ըներ իսկ չը կային: Թաղը վաղուց ամալի էր գտնուում էր Շահաբգիւլազի մի դարբասի մօտերը և ոչ մի օգուտ չէր ներկայացնում շների համար:

Եւ հետզհետէ, ընդհանուր լուութեան մէջ, փլուածքից ներս էին լցում սև ստուերներ, անխօս՝ անցնում խառնուում էին գետնի վրայ նստածների մէջ ու լայն աւերակը լցում էր ցնցոտիազգեստ ամբոխով:

Վերջապէս փլուածքի խոշոր կտորի վրայ նստողներից միջինը հանեց բերնից չիբուխը, խփեց նրա գլուխը իր մօտի քարին, դատարկեց մոխիրը և կարծես ընդհատուած մի խօսակցութիւն շարունակելով, գոչեց.

—Մարգարէն վկայ թող լինի... Համբերութեամբ տարինք ամեն բան. մեզ կեղեքեցին, մեզ զրկեցին ամեն իրաւունքից, մեզ յօշօտեցին, տանջեցին, մեզ մի օր, մի ժամ հանգիստ չը թողին մեր ցաւերի հետ. մեր որդիներին էլ, այժմ ահա այդպէս, դաշոյնահար, ո՞վ գիտէ ինչպիսի անզգամ գործից յետոյ, բերում ձգում են խէսփուշների հաւաքատեղին, որ վաղը մեզ բոլորիս բռնեն՝ բանտերում փթեցնեն և ասեն թէ խէսփուշ-



ները մարդասպան են, կողոպտող են...

Ոչ ոք չը պատասխանեց. չիբուխների կայծերը միայն պլպլացին այս այն կողմ, լուռ ու անշարժ բերաններ ու դեմքեր լուսաւորելով:

Խօսողը սպասեց մի վայրկեան, յետոյ ապառօշք վերցնելով սրբեց գլուխը և աւելի մեղմ, վշտալի ձայնով՝ շարունակեց.

— Ի հարկէ, կը լռէք, երբէք ձայն չէք հանիլ. կը համբանաք ձկան նման... կը կրէք ամեն բան, խէսփուշներ. թող ձեր ամեն բանը, ձեր ստացուածքը խլեն...

— Ստացուածք... լսուեց մթան միջից մի ծաղրող ձայն:

— Ծիշտ է, ծաղրող շուն, գոչեց ուժգնաբար ճառողը, որ կարծես մի առիթի էր սպասում աւելի բարկանալու համար— Ծիշտ է. Գուք և ես ստացուածք բառի մասին գաղափար չունինք, որովհետև ոչինչ չունինք. բայց, դ՛ու, քոսոտ մուրացիկ, դու պատիւ էլ չունիս, դու սիրտ էլ չունիս... իսկ այդ երկու բանը քո ստացուածքը չեն, շան գաւակ... Եթէ այժմ էլ կը ծիծաղես, ես քեզ շան սատակ կանեմ այս սրբատեղիի խոշոր քարերով... Խօսիր, փետէր սուխտա՛, <sup>1)</sup> ինչո՞ւ ես լուռ...

— Աղան շատ է բարկացած. լսուեց յանկարծ մի ձայն մուտքի կողմից— աղան հայհոյում է վատ կերպով: Ծիշտ է, մեր լեզուն էլ մեր ստացուածքն է, բայց և ականջը նոյնպէս, որ չը պիտի հարստահարել...

Ճառախօսը կատաղեց, շարժուեց ոտքի ելնելու, ոչ ոք չը գիտէր թէ ինչով՝ խփեց ծնկան և ասաց.

— Ո՞վ էր խօսողը:

— Ես էի. ասաց ձայնը և առաջ եկաւ՝ գատուելով մուտքի մօտից— ես էի, Սէյիդ խանը:

— Սէյիդ խան... ձայնեց ուրախութեամբ ու բորբոքովին մեղմանալով ճառախօսը— եկար ուրեմն: Այստեղ, վեր համեցէք դեռ... Երաւունք ունիս, այս երեկոյ իմ ականջը չէ լսում իմ բերնի ասածը... այս երեկոյ ես կատաղած եմ:

<sup>1)</sup> «Հայրդ պրուած». մի սովորական հայհոյանք է:

— Հասկանում եմ... սպանուածը պատանի է ուրեմն:

— Բոլորովին պատանի. ասաց ճառախօսը դողդոջուն

ձայնով— բորբոքովին... Մի անմեղ, մի սիրուն տղայ...

— Հասկանում եմ... Տեղ տուէք ինձ... Ո՞ւր է

դիակը:

— Այստեղ է. լսուեցին մի քանի ձայներ ցածի կողմից:

— Կը մորթեմ եթէ մի բան պակասել է վրայից. դարձաւ ճառախօսը յանկարծ դէպի այն կողմը:

— Խէսփուշը գող չէ. գողաց մի ձայն— ասելիքը

ասա:

Բայց ոչ ոք նրան չը պատասխանեց. բարձրութեան վրայ տեղի ունեցաւ մի շարժում: Սէյիդ խանն էր տեղաւորուում Մուլա Նէջիֆի կողքին. միւսները քիչ ետ էին քաշուում:

— Զիբուխ կուզես. հարցրեց Մուլա Նէջիֆը:

— Լեցնուր:

Աքպէրը և միւս խէսփուշը խառնուեցին գետնի վրայ նստողներին, որոնց մէջ այժմ սկսեց շշուկ բարձրանալ, որովհետև Աքպէրը հարցուփորձ էր անում երազի մասին:

— Լուռ թիւն այդտեղ. գոչեց բարձրից մուլան— ես դեռ չեմ վերջացրել...

— Իե՛ռ չես էլ սկսել. միջահատեց Սէյիդ խանը— ճառք թող յետոյ. փաստը ցոյց տուր մեզ. ասա եղածը:

— Եղածը սա է, դարձաւ դէպի նա մուլան— Մըտնում ենք այստեղ մեր սովորականի կերպով: Վեց հոգի ենք: Տեղաւորուում ենք մի անկիւն, երբ մեզնից մէկը, կարծեմ Հասանն էր...

— Ալին էր. լսուեց մի ձայն վարից:

— Ալին թող լինի... Կպչում է մի բանի և երեսի վրայ ընկնում մի այլ փափուկ բանի վրայ ու զգում որ երեսին կպածը քար չէր՝ բայց սառն էր: Վառում ենք լուցկի, տեսնում ենք դիակ. դիակ՝ կրծքի մէջ խրուած մի դաշոյն, մեռած և այսօր սպանած անշուշտ. Ա.յո՛. չէ հոտել, բայց արիւն էլ չէ մնացել: Կողոպտուած չէ. ոսկի ժամացոյց, քսակ ոսկի... լաւ հագուստ... և... և պատանի, առնչք, ծաղիկ հասակում...



Այստեղ մոլլայի ձայնը դաբձեալ զողաց ու նա խորին վշտով շարունակեց.

— Չորանայ այն ձեռքը, որ կտրոււմ է կոկոնը... Կոկոն է կտրուած, վարդի շքեղ, թարմ կոկոն և ո՞վ գիտէ, որպիսի աղտոտ կերպով բռնաբարելուց յետոյ...

— Մի՞թէ բռնաբարուած է...

— Չը գիտեմ... Ինչո՞ւ ուրեմն սպանել այդպիսի մի անմեղ, հրեշտակի դէմքով պատանու և այն էլ այստեղ ձգել, այստեղ սրբատեղիի մէջ... Աստուած է վկայ, եթէ բարիներին չը ճանաչէի, կասէի որ նոքա են... բայց, էյ, խէս-փուշներ. եթէ չը գիտէք դուք, ես կասեմ ձեզ որ ո՞չ մի բարի դեռ չի տուել աւազակ այնքան անզուժ, մարդասպան այնքան ստոր, որ թափէր մի կոկոնի տերեւները, խաւարեցնէր այդպիսի մի երիտասարդ արև... ո՞չ մի բարի, ո՞չ մի գէթը, այն... Ամեն կեղտ, ամեն ստորութիւն միմիայն միւսիմանն է անուժ այս անիծեալ տէրութեան մէջ... ելդու՛ւմ եմ մարգարէի մօրուքով...

— Յուց տուէք ինձ գիտիք. ցած իջաւ Սէյիդը բարձրութիւնից և գնաց գէպի խաւար անկիւնը— ո՞վ լուցկի ունի, թող վառի գիտի գէմքի մօտ:

Տեղի ունեցաւ մի թեթև իրարանցում, յետոյ լըսւեց լուցկու ձայն և փլատակի աջ անկիւնում ցոլաց մի լոյս: Սէյիդ խանը մօտ գնաց ու կռացաւ:

Գետնին, երեսի վրայ պառկեցրած էր մի գեղեցկադէմ պատանի, խիստ գունատ, աչքերը բաց և սոսկումով լի:

Հագուստը թէև ցեխոտ էր, բայց ճոխ: Իսկ, որը քստմանեցուցիչ էր, ձախ կուրծքի վրայ բացուած մի խոր վերքից, դաշտին տակով դուրս էր բղխել արիւնի հոսանք և սևացել ծածկել էր կուրծքը: Գաշտինը մինչև երախակալը մնում էր վերքի մէջ:

Սէյիդ խանը պահ մի նայեց գէմքին, զննեց շորերի փոշին ու ցեխը, գլուխը երերեցրեց, փլատակի գետնին նայեց, ապա խնդրեց մի լուցկի ևս վառել և երբ շատ գլուխներ կռացել էին գէպի նա՛ լուցկիի լոյսի մէջ, իջաւ, քանդեց գիտի վերարկուն, բռնեց դաշտին երախակալից ու բուռն շարժմամբ հանեց կուրծքից:

Ոչ մի կաթիլ արիւն ոչ վերքից և ոչ իսկ դաշտինից:

— Ուղղակի սրտին... մռմռաց նա— և լաւ է խըփւած... Ապա դաշտինը ծոցը դրաւ ու աւելացրեց.

— Լաւ. տեսայ ինչ որ ուզում էի .. Հասկանում եմ...

Եւ երբ վերագարձել էր մոլլայի մօտ, մի լուպէ լուռ ու մտախոհ նստել, երբ բոլորը անշշուկ սպասում էին նրա խօսելուն, մոլլան հարցրեց.

— Տեսա՞ր...

Սէյիդը մի վայրկեան ևս լռեց և տաց.

— Տեսայ... Սպանուած է հեռու, ձգուած է այստեղ գիտմամբ: Զգողը գիտէ որ խէսփուշների ժողովատեղին է այս. կամեցել էիր մեղքը մեր վզին փաթաթել... Գաշտինը պարզ դաշտին է. ո՞չ մի բռնաբարութիւն... սպանուած է անյայտ պատճառով... թողէք մտածել...

Ապա մէկէն գոչեց.

— Ո՞վ ափիօն ունի...

— Այստեղ. ձայնեց մէկը:

— Իսկ բաֆուր...

— Չը կայ. ուտելու համար է:

— Լաւ, մի նոխուղ տուր... պէտք է լաւ մտածել:

Սէյիդ խանը ուզում է գարթնել և մտածել...

— Մի՞թէ Սէյիդ խանը գարթուն՝ չէ. հարցրեց մի ձայն:

— Ո՞չ... քնած է. տուէք ափիօնը... Ո՞վ կարող է տեսել. ո՞րն է Սէյիդ Համզային լամենամօտ մեծաւորի տունը...

— Նասրուլլահ խան...

— Հը՛մ... Կարող են և հեռուից բերած լինել:

— Առանց տեսնուելուն. ասաց մոլլան:

— Իրաւունք ունիս... Գաղտնիքը այդ Նասրուլլահ խանի տան մէջ է: Թողէք ես մտածեմ թէ ո՞վ է նա... Սյո՛... գանձապահ, շատ հարուստ... որդիների և կանանց տէր... Հը՛մ, Հը՛մ... ինքը ծեր, բայց լիբբ մարդ... Սակայն, պատանին բռնաբարուած չէ...

Ու հետզհետէ աւելի մեղմ ձայնով սկսեց ինքն ի-



րեն դատել, մտածութիւնները կցկտուր արտայայտել, սակայն այնքան գած ձայնով, որ մոլլան իսկ այլ ևս չէր հասկանում նրա մոմոռոցները:

Պահ մի լուսթիւն տիրեց փլատակներում, դարձեալ վառուեցին չիբուխներ. մոլլան լուս՝ վառած չիբուխը պարզեց Սէյիդին. սա առաւ, ծխեց մի քանի կում և դարձեալ սկսեց քթի տակից մոմոռալ:

—Թողնենք որ Սէյիդ խանը, որի մեզնից խելօք ու փորձուած լինելը լաւ գիտենք—մտածէ ու լուծէ հանելուկը,—խօսեց դարձեալ մոլլան—թողնենք նրան մտածելու, բայց ինքներդ էլ լսեցիք որ այս բանը կատարուել է դիտմամբ՝ մեզ—խէսփուշներիս վնասելու նպատակով...

—Ո՛չ... միջահատեց Սէյիդ խանը յանկարծ—ո՛չ դիտմամբ մեզ վնասելու, այլ յանցանքը ուրիշի վրայ ձգելու, ով որ էլ լինէր այդ ուրիշը... Ամենամօտ տեղն են ձգել այդ դիակը և ընտրել այնպէս տեղ, դէպի որը մի դիակ տանելիս՝ ոչ որի հանդիպել չէ կարելի գիշերով... Այո՛, այդպէս է եղել...

—Յամենայն դէպս խէսփուշները, մենք, մնում ենք պատասխանատու: Դիակը կամ պիտի թողել այստեղ իսկ և լուել ու անցնել և կամ... Բայց խէսփուշը գաղտնիք չէ սիրում. այստեղ կանք աւելի քան 30 հօգի. վաղը Թէհրանի երեսուն տեղում կիմացուի որ Սէյիդ Համզայում դիակ է գտնուած... կը գան Փէրրաշները և կըսկսեն մեզ բոլորիս բռնել մէկ մէկ:

—Մենք կը լուենք... ձայնեցին ամէն կողմից:

—Լուել... գոչեց մոլլան զայրացկոտ—լուել... Ո՛չ. բաւական է լուել: Պէտք է գոռալ այժմ, պէտք է մըզկիթների, հրապարակների մէջ գոռալ, որ մեծամեծները մորթում են ժողովրդի զաւակներին, դիակները ձրգում խէսփուշների բնակարաններում և իրենք անպատիժ մնում... Պիտի գոռալ որ նոքա մեր մէջ այլ ևս պատիւ չը թողին որ չը խլեն, սիրտ չը թողին որ չը պատառտէին... և, ասում եմ ձեզ, դիակի վրայից ոչինչ չը կորսուի պիտի. մենք կապացուցանենք զբանով միայն, որ մենք չենք մարգասպտնը, գողը, աւազակն ու հարստահարողը, այլ այդ մեծամեծները, պաշտօ-

նեաները, այդ վեզիր-վեզարէթը, այդ բոլոր պաշտօնական կողոպտողներն ու աւազակները... Այո՛, պիտի գոռալ, կանչել ու այնպէս գոռալ որ մարգարէն իր գերեզմանում գողայ, թագաւորը իր գահի վրայ, մեծամեծները իրենց հարեմներում...

—Աւելորդ բաներ... ասաց Սէյիդ խանը—ճառ աւելորդ. գործ պէտք է... Բայց, Սէյիդ խանի ուղեղը չէ գործում... Տուէք ափիօնը: Սէյիդ խանը փորձում է դիակի վրայ մտածել, բայց ափիօնին է խելքը, ափիօնին՝ որ այդ մարդի գրպանումն է... Տուր ափիօնը—գոչեց նա յանկարծ աւելի ուժգին և շարժուելով—տուր, թէ չէ՝ ես կառնեմ...

Ու այնքան զայրացկոտ էր նրա շարժումը, որ մոլլան իսկ վախեցաւ: Մոլի ծխողի ցանկութիւնը զարթնել էր Սէյիդ խանի մէջ. գուցէ և խեղդէր ափիօն ունեցողին, եթէ նա չը տար:

Բայց խէսփուշը շարժուեց, մօտեցաւ և դրեց Սէյիդ խանի ափում մի կլորիկ դեղահատ, որ իսկոյն ընկաւ Սէյիդի բերանը:

—Սլսպէս... ասաց նա աշխուժացած ու աւելի կենդանի ձայնով—Սլսթմ Սէյիդ խանը երկար չի մտածիլ, որովհետեւ նա ձեզ ահա թէ ինչ խրատ կը տայ...

Բայց այդ միջոցին յանկարծ մուտքի կողմից լուսեց մի քարի գլորուելու ձայն և պատի փլուածքի վրայ յայտնուեց մի երկար ստուեր սպիտակ պարեգօտի մէջ ծածկուած:

Բոլորը ապշած ու լուռ այն կողմը նայեցին: Ստուերը պահ մի անշարժ զննեց բոլորին, յետոյ ցնցեց սպիտակ երկար վերարկուն և ծանրաքայլ իջաւ դէպի խէսփուշները:

IV

Եկողը խէսփուշ չէր, ոչ էլ մուրացիկ: Աւելի դերւելի էր նման. հարուստ հագնուած դերւելի, որովհետեւ մինչև ոտները հասնող վերարկուն ձիւնի պէս սպիտակ էր ու մաքուր: Դլխին կրում էր գորշախառն ապարօշ, որին խէսփուշները գեռ որոշել չէին կարողա-



նում՝ թէ ինչ տեսակ գլխարկ է:

Մուլան, Սէլիդ խանն իսկ կռացել, հետաքրքրու-  
թեամբ գննում էին ներս մտնողին:

— Խէսփուշներ էք այտեղ թէ գողեր կամ աւա-  
զակներ. ասաց եկողը զիլ ու արծաթահանիւն ձայնով՝  
կանգ առած դեռ ևս յատակից բարձր մի քարի վրայ:

Ոչ ոք ձայն չը հանեց. չիբուխներն իսկ չէին առ-  
կայծում: Սէլիդ խանը սակայն, որ սկսում էր քիչ կեն-  
դանանալ— բոլորովին թմրութեան մէջ ընկնելուց առաջ  
— ոտքի ելաւ և կամենալով մօտից տեսնել նոր անձին,  
իջաւ պատուանդանից ցած:

— Ուրեմն սխալուած եմ եղել, շարունակեց նորեկը  
— ինձ ասել են որ այտեղ կը գտնեմ խէսփուշների...

— Իսկ դու ով ես, յանկարծ ձայնեց նրա երեսն ի  
վեր Սէլիդ խանը, որ մօտեցել էր նորեկի կանգնե-  
քարին:

— Մի Աստուծոյ արարած, որ կամենում է խօսել  
խէսփուշների հետ:

— Խօսիր, ասաց իր նստած տեղից Մուլան— բոլորս  
այտեղ խէսփուշներ ենք... և, վայ քեզ, եթէ որևէ  
վատ մտքով ես մտնում մեր մէջ... նախ քան խօսելդ,  
եկ այս կողմ ինձ մօտ, որ տեսնենք քո երեսը:

Նորեկը լուռութեամբ իջաւ քարից և քայլեց դէպի  
մուլայի բարձրութիւնը: Երկարահասակ էր ու նիհար.  
Հագած էր բոլորովին սպիտակ և այժմ, երբ անցնում  
էր խէսփուշների միջով, մի քանի վառուող լուցկիներ  
պարզուած դէպի նա, ցոյց տուին համակրելի դէմքով մի  
երիտասարդի, որ նախ, բոլորովին անգէն էր և ապա,  
մի հպարտ ժպիտ դէմքին, ինքնավստահ քայլերով մօ-  
տեցել Մուլա Նէջէֆ-կուլիին, ինքն էլ փոխադարձաբար,  
վառուող լուցկիի լոյսով, գննում էր բարձրութեան վրայ  
նստած անձերին:

— Դու Մուլա Նէջէֆն ես. ասաց նորեկը մատը  
պարզելով դէպի մուլան— ես քեզ ճանաչում եմ:

— Չատ կարելի է. ինձ ամենքը ճանաչում են Թէհ-  
րանում. իսկ ինչ է քո անունը:

— Սէլիդ Հարիրուլլահ...

— Լաւ ուրեմն, Սէլիդ աղա, ահա մի տեղ իմ կող-

քին. եկ նստիր և եթէ խօսելու բան ունիս խէսփուշ-  
ներին՝ սկսիր. այտեղ է խէսփուշների ամենալաւ մասը:

Մինչ այդ, Սէլիդ խանը մնացել էր իր իջած տե-  
ղում. թմրութիւնը սկսել էր. օպիումը կատարում էր  
իր գործը. մի քանի բոպէից յետոյ կծկուեց նա քարի  
կողքին և մինչ նորեկը սկսում էր խօսել, ափիօն ծխո-  
ղը ընկնում էր երազների մէջ:

Միւս բոլոր խէսփուշները խիստ հետաքրքրուած,  
փոքր ինչ կասկածաւոր, ականջները սրած՝ սպասում  
էին, թէ ինչ կասէր անձանօթ սէլիդը, որին ոչ ոք  
չէր լիշում որևէ տեղ տեսած լինելը:

— Դու Թէհրանցի չես. ասաց մուլան նրան— ես  
քեզ երբէք չեմ տեսել. ո՞րտեղից ես գալիս:

— Խելարդէշտից... ծովի ափերից ոչ հեռու, Գէ-  
մալէնդի ստորոտներից. բայց ես մի ամիս է որ Թէհ-  
րան եմ և մի ամբողջ ամիս է, որ գննում եմ ժողո-  
վրդի, ձեր բոլորի կեանքը... Դուք խէսփուշներ էք,  
այդ ես գիտեմ. բայց միթէ խէսփուշին հարկաւոր է

անպատճառ մնալ միշտ այսպէս թշուառական ու ողոր-  
մելի, եթէ ոչ սողոսկող, գոնէ միշտ մուր ու խուլ տե-  
ղեր փնտռող արարած: Չէ որ խէսփուշը իր ցնցոտի  
հագուստի տակ ունի մի համարձակ, վեհանձն ու զթոտ

սիրտ— ինչպէս ասել են ինձ— չէ որ զիտէ նա խօրա-  
պէս զգալ, երբ տեսնում է իր ընկերոջ թշուառու-  
թիւնը, ճնշուած ու հարստահարուած լինելը. զիտէ

բողոքել, երբ խսփուշները այլ ևս հոգի, կեանք, ա-  
րև չեն թողնում ժողովրդի մէջ, երբ օտարը շնորհիւ  
մեր պետութեան թուլութեանը, բուն դրած մեր մէջ,  
ձեռք է դնում մեր ամեն սեփականութեան վրայ և

երբ մեր սուրբ կրօնի հակառակ սուկալի իրողութիւն-  
ներ են կատարուած ամբողջ երկրում... Խէսփուշները  
ասել են ինձ, որ ճնշուող, հաւատացեալ և լաւ ժո-

ղովրդի գաւակներ են, որ նոքա չեն իմանում վախ, որ  
նոքա զիտեն մեռնել, որովհետև կեանքի վրայ արհա-  
մարհաբար են նայում. բայց խէսփուշները, ինչպէս տես-  
նում եմ այժմ մօտից, կործես ընկել են, թուլացել,  
վատահոգի դարձել և նմանում են այն ողորմելի կա-

նանց, որոնք բացի ուտել ու քնելուց, ուրիշ ոչինչ



նպատակ չունին կեանքի մէջ...

Նորեկ Սէյիդի այդ լանկարծական դայրացիոտ ու բուռն լանդիմանութիւնները, լեզուի այնքան շքեղ դարձուածքները և պերճախօսի ձայնն ու վայելուչ շարժուածքները, սկսում էին սաստիկ ազդել:

—Սհա լաւ, մարդարիտի նմանող խօսքեր, մարգարէն է վկայ. գոչեց մոլլա Նէջէֆը մեծ ուրախութեամբ—ասա իմ ասածների շարունակութիւնը, իմ սրտի եղածը և իմ ցանկութիւններն ու երազները... Խօսիր դարձեալ, Սէյիդ աղա, այս—ցածու՛մ նստած ապուշները շատ կնամարդի են դարձել, խօսիր և ասանրանց, որ մեր ժողովուրդը հարստահարուում է, զիւղերը թալանուում, մարդիկ են սպանում — ոչնչացնում, որ մեր կրօնը պղծուում է ամէն մի բոպէ և որ օտարները գալիս խլում են մեր ունեցածը ու հարամ անում մեր կերածը...

—Աւելորդ բան. ճառերն աւելորդ... Լսուեց Սէյիդ խանի խօսը, կցկտուր բառերը ներքևից—այո՛, հասկանում եմ... Մոլլա Նէջէֆի որդին սպանել են... Հը՛մ... ի հարկէ, դա անգթութիւն է... Կանայք... Բայց, աւելորդ բան ճառը...

Մոլլա Նէջէֆը լանկարծակի եկաւ և նա մանաւանդ ցնցուեց երբ ականջ դրաւ Սէյիդ խանի բարբառանքներին:

—Լաիբ, Սէյիդ խան... Լաիբ, թէ Աստուած կսիրես... Ես քեզ կը խեղտեմ, եթէ էլի խօսես, գոչեց նա զայրագին:

—Աւելորդ բան... Հը՛մ... Հասկանում եմ... մըրմնջաց նորից արբածը և այս անգամ բոլորովին լռեց:

—Սփիօն է կերել. դարձաւ Սէյիդին մոլլան:

—Տեսնո՞ւմ էք, գոչեց Սէյիդ Հաբիբուլլահը վշտալի կերպով—տեսնո՞ւմ էք, միւսիլմաններ. մինչդեռ ամէն կողմ արտասուք է հոսում, մինչ այլ ևս չունչ չի մնացել մեր բոլոր—զիւղացիներէս, հասարակ, գործող ժողովրդի մէջ, մինչ ժողովրդի տասից իննը օրուայ հացի կարօտ՝ մուրացկան եղած, իր երկրից վաճառուում է օտարների ձեռքով և օտարը գալիս տէր է դառնում մեր երկրին, մինչ մեր կրօնը պղծուում է ամէն մի

քայլում, դուք այստեղ ափիօնով հարբում էք, քնում փլատակների մէջ և ծիծաղում այդ բոլորի վրայ... Բայց սպասեցէք, շուտով թէ ափիօն և թէ ծխախոտ-ամեն, ամէն բան դուք օտարներից, թանգ գնով, աղաչելով ձեռք պիտի բերէք և Քրանգին տուրք պիտի դնի նոյն իսկ ձեր բաժնուրների, ձեր չիբուխների վրայ. շուտով Քրանգիները ձեռք կը տան ձեր ուտելու հացին, ձեր խմելու ջրին և այլ ևս դուրանի ո՛չ մի խօսքը սուրբ չի համարուել, միւսիլմանութիւնը կը վերանայ այս երկրում... Սհա, այդպէս էք դուք, ողորմելի խէսփուշներ, որ պարծենում էք թէ թշուառի, կրօնի, հալածուածի և զրկուողի պաշտպան էք եղել, որ պարծենում էք թէ չը նայելով խէսփուշ էք բայց խաս սիրտ ունիք... Որ թէ և ցնցոտի, աղքատ հագուստ էք հագնում, միշտ անօթի է ձեր փորը, բայց հարուստ և լայն է ձեր սիրտը և ազնիւ ու բարձր՝ ձեր զգացմունքները... Բայց այդ է ուրեմն ձեր լայն սիրտը, ազնիւ զգացմունքները, խէսփուշները արգեօք իսկապէս ցնցոտի սրտի տէր և կուշտ ուտել երազո՞ղներ են եղել... Եթէ այդ է բոլորը, ուրեմն ես խիստ սխալուել եմ ու այլ ևս գործ չունիմ անհաւատ, անսիրտ և մուրացիկ մարդկանց մէջ: Ես չեմ եկել խոզերի խօսելու, այլ ճշմարիտ միւսիլմանների և լաւ սրտի տէր մարդկանց... Մնաք բարև. մնացէք միշտ այդպէս ողորմելի, ցնցոտի սրտով, ծխէք ափիօն, մինչև իսկ զինի—արագով հարբեցէք, ծիծաղէք ոչնչացող եղբայրների տանջանքներին վրայ և թող այլ ևս չասեն որ արտաքինով խէսփուշները սրտով խաս են... Մնաք բարև բռնաւորների ընկերներ և դուրանը ծաղրող անհաւատների համախոհներ. մօտեցել են օրերը, երբ դուք ամէնքդ էլ պիտի ստիպուէք ձեր գլուխը օտարի առաջ ծուել, ձեր կրօնի վրայ թքել, ձեր չիբուխը օտարներից մուրալ և ձեր ծխած թամբաքուլի համար անհաւատներին՝ գլուխ խօնարհեցնել...

Ասաց և շարժուեցաւ ելնելու: Մոլլա Նէջէֆ Կուլին սակայն բռնեց նրան մեղմութեամբ և ասաց.

—Սպասիր, աղա Սէյիդ, նստիր քիչ. իզուր մեզ բոլորիս այդքան ցնցոտի սրտերի տէր ես համարում.



խէսփուշը կը մեռնի, բայց չի մուրայ օտարներէն ո՛չ թէ իր չիբուխը, այլ և ուտելիքը... Այդ այդպէս է խէսփուշը, իրաւ է, թուլամորթ է դարձել, բայց դեռ երբէք ստոր բան չէ արել և չի անիլ... Այսպէս չէ, ով ժողովուրդ... Դարձաւ նա ամէնքին.

Խուլ քրթմնջիւն բարձրացաւ խէսփուշների մէջ և մէկը նոցանից գոչեց.

—Ով կարող է ապացուցանել որ որևէ խէսփուշ մի ցած գործ, մի գողութիւն, մարդասպանութիւն է արել: Իրաւ է, նա արբում է, ավիտն է ծխում, բայց նա դրան պէտք ունի, որովհետեւ տեսնում է թշնամութիւն, տեսնում է անիրաւութիւն և անգոր է նրա դէմ ..

—Ճշմարիտ է. ասաց մի ուրիշը մութ անկիւնից— խէսփուշը ծխում է, որովհետեւ մոռանալ է ուզում... նա հանդարտ սրտով, արթուն մտքով անիրաւութիւններ տեսնել չէ կարող. .

—Այլ ևս իրաւունք չէ մնացել. վրայ բերեց երրորդը—այժմ էլ ուզում են մեր ծխած թամբաքուն օտարի ձեռքը տալ, տուրքի տակ դնել, մեր կրօնը ծաղրել... .

—Այո. խօսեց Սէյիդ Հաբիբուլլահը -- ձեր ծխած թամբաքուն, թիւթիւնը այժմ ինգլիզները կը մանրեն իրենց ձեռքով և կը ծախեն ձեզ թանգ գնով. այլ ևս ո՛չ մի միւսիլմանի ձեռք չէ կարող առանց ինգլիզի արտօնութեան ծխախոտ մշակել... Չը նայելով Շահի խօստումներին, այդ կատարուելու է. շուտով ձեզնից ոչ ոք չէ կարող իր չիբուխը լցնել միւսիլմանի ծխախոտով... Եւ այդ բոլորը, ոչ միայն այդ, այլ և ամբողջ մեր հաւատքը ծախուած է ինգլիզին, որովհետեւ նա ոսկով կաշառել է մեր իշխաններին և վէզիրներին... Բայց միթէ միւսիլմանը կարող է ընդունել որ իր ծխելիքը ծախէ իրեն ինգլիզը, անցկացնելով իր պիղծ ձեռքերից: Ամեն ինչի, որին կպչում է անհաւատի ձեռքը, պիղծ է միւսիլմանի համար, պիղծ է և անընդունելի... Մեր իշխաններն ու վեզիրները ծախել են զուրանը, պղծել մեր օրէնքները...

—Այս ինչ է, ընդհատեց մի ձայն, որ խօսում էր

մի երկրորդի հետ—ուրեմն դեռ չը վերջացաւ այդ. իրան է որ այսուհետեւ իմ թամբաքուն ես ինգլիզից պիտի առնեմ:

—Ի հարկէ, լիմար. պատասխանում էր միւսը— ինգլիզը իր խաչը նախ կը քաշի ծխախոտիդ վրայ և ապա քեզ կը ծախի:

—Նահլիթ, նահլիթ... գոռացին մի քանիսը— անհաւատներին են ծախել մեր երկիրը, հասել է վերջին օրերը...

Սէյիդ Հաբիբուլլահը, որ լռել էր լսելու համար այդ խօսակցութիւնը, լանկարծ ոտքի ելաւ, հանդիսաւորապէս առաջ պարզեց ձեռքերը և գոչեց մեծաձայն.

—Յանուն Քէլբէլայի մեծ մուշտէյիդի...

Հագիւ թէ արտասանել էր այդ բառերը, որ բոլորը ոտքի ելան և գոռացին գրեթէ միաձայն.

—Խօսիր, ինչ է ասում մեծ մուշտէյիդը:

—Յանուն Քէլբէլայի մեծ մուշտէյիդի, շարունակեց ուժգնութեամբ Սէյիդը—Հրաւիրում եմ ձեզ, բոլոր խէսփուշներիդ, ամեն մի հաւատացեալ ճշմարիտ միւսիլմանի. չը թողնենք որ անհաւատները տիրեն մեր երկրին և պղծեն մեր օրէնքները... Քէլբէլայի մեծ մուշտայիդը ասում է.—այն ծխախոտը, այն թամբաքուն և այն ուն է բանը, որին զիպչում է անհաւատը՝ նա պիղծ է և պիղծ պիտի համարուի... Ով ճշմարիտ միւսիլման է, թող միանայ ինձ և քշենք մեր երկիրը և մեր հաւատքը պղծող մարդկանց, լինեն նոքա Իրանցի կամ օտարերկրացի, իշխան կամ թագաւոր... Ղուրանը և իր օրէնքները աւելի բարձր են քան ամեն իշխան և թագաւոր... Թող օրհնեալ լինի մարգարէի անունը...

Եւ գիշերային լուսութեան մէջ՝ լսուեց փլատակներում մի խառնիճաղանճ խուլ աղաղակ, որ հասնում էր մինչև հեռուները.

—Սալաւիթ, սալաւիթ!...



Բայց այստեղ իսկ, հարկաւոր է դառնում մի փա-



կազմի՞՞ բանալ, պարզելու համար այն բոլոր պատմական կարևոր դէպքերը, որոնք տեղի էին ունենում այդ 1891 թուականի աշնանը, Պարսկաստանի մէջ, որոնք գրեթէ ամբողջ հետևեալ տարին սպառնացին յեղափոխելու երկիրը և որոնք մեծ կապ ունին մեր պատմածների հետ:

1890 թուին, Պարսկական կառավարութիւնը, երկրի ծխախոտի և թամբաքուռի մենավաճառը յանձնել էր մի անգլիական ընկերութեան: Երկու կողմերի միջև կազմած դաշնագիրը արտօնում էր անգլիացոց՝ շահագործել երկրի ծխելիքի արդիւնաբերութիւնը, վճարելով կառավարութեան, բացի զուտ արդիւնքի 1/4 մասից և մինչև այդ առնուող սահմանուած ծխախոտային տուրքերից, այլ և տարեկան 15,000 անգլ. օսկի շահ: Դորա փոխարէն ընկերութիւնը միմիայն ինքը պիտի իրաւունք ունենար արտօնել ծխելիք վաճառելու. ամէն արդիւնագործող միմիայն նրան կարող էր վաճառել ծրխելիքի բերքը: Պետութիւնը պարտաւորուել էր զօրեղապէս օգնել ընկերութեանն այդ յօդուածը գործարելու:

Դաշնագիրը կրում էր նասրէզդին շահի, արտաքին գործոց նախարարութեան ստորագրութիւնները ու կնիքները մի կողմից, իսկ միւս կողմից անգլիական դեսպանատան և ընկերութեան ներկայացուցիչ մայքօր Տալբօրի հաստատութիւնները:

Բայց անգլիական ընկերութիւնը, սկզբնական պատրաստութիւնների համար, դաշնագրի գործադրութիւնը յետաձգեց մի ամբողջ տարի և 1891 թ. ամռան միայն լայտարարեց ժողովրդին իր ստացած արտօնութիւնները և անմիջապէս գործի սկսաւ:

Այստեղ հարկ է ընթերցողին մի անգամ ընդ միշտ ի նկատի ունենալ այն, որ Պարսկաստանի մէջ երկու օտար պետութիւնների—անգլիական և ռուսական շահերը անդադար հանդէպ զալով միմեանց, գտնուում են անընդհատ բազմաման մէջ:

Երկու պետութիւններն էլ ճգնում են հնար եղածին չափ քայլեր առաջ դնել երկրի մէջ, տնտեսական բոլոր շուկաները գրաւել իրենց արդիւնաբերութիւններով և միւս կողմից էլ չէզօրացնել միմեանց ազդեցութիւնը, արգելք լինելով միմեանց ամէն պետական միջոցների:

րով և միւս կողմից էլ չէզօրացնել միմեանց ազդեցութիւնը, արգելք լինելով միմեանց ամէն պետական միջոցների:

Իրենց դեսպանների և հիւպատոսների միջոցով, այդ երկու մեծ պետութիւնները աշխատում են նոր արտօնութիւններ ձեռք բերել շահից և կառավարութիւնից, առևտրական մեծ շուկաների համար առանձնաշնորհումներ ունենալ, ազդեցութիւն վայելել նոյն իսկ դիպլոմատիքական գործերում: Դրա համար էլ նոքա չեն խնայում ո՛չ միջոց և ո՛չ էլ դրամ:

Այդ տեսակէտով աւելի լանդուզն և ձեռնարկող գտնուել է միշտ Անգլիան, որ միլիոններ է ցանում Պարսկաստանի մէջ. ահագին կաշառքներով շրջանում պարսիկ մեծ պաշտօնեաների՝ իր ձեռքն առնելու համար: Ռուսաստանը իր կողմից նոյնպէս ոչ մի ջանք, երբեմն իսկ խիստ միջոցներ չէ խնայում կամ արգելք լինելու և կամ այն նոյն արտօնութիւնները իր ձեռքն անցկացնելու համար:

Երկիրն այսպէս, իրապէս բաժանուած է երկու մեծ պետութիւնների մէջ և ասպարէզ է նրանց անտեսական զօրեղ մրցումների: Ամբողջ արևելեան Պարսկաստանը, սկսած Բուշիրից մինչև Թէհրան՝ անգլիական վաճառքը, լեզուն և ազդեցութիւնն է տիրապետում. հիւսիս արևմտեան մասերը ողողում են ռուսական ապրանքներով, գտնուում են ռուսաց ազդեցութեան տակ և Անգլիան, ըմբռնելով անհնարութիւնը, ոչ իսկ քայլեր է տնում որևէ շուկա կամ որևէ ազդեցութիւն ունենալ այդ կողմերում:

Բուն մայրաքաղաքում են կենդրոնանում երկու պետութիւնների ազդեցութեանց և շահերի շփման ծայրերը: Երկու բանկային զօրեղ հաստատութիւններ այնտեղ ճգնում են միշտ տիրապետել դրամական աշխարհը, միմեանց վարկը ձգել, շուկային տիրանալ, բարձր պաշտօնէութիւնը ձեռքի տակ առնել, պարսիկ ինքնակալից կորզել այս կամ այն մենավաճառը: Երկու դեսպանատները անընդհատ դաւեր են լսրում միմեանց դէմ, ճգնում են չէզօրացնել միմեանց ոտնձգութիւնները, և, իրար քայլերին արգելք լինելու համար, չեն խնայում դիմելու ամեն տեսակ միջոցների:



Բացի սրանից, ընթերցողին հարկ է գիտենալ նաև հետևեալը: Ամբողջ Պարսկաստանում, քաղաքական իշխանութիւնը գուցէ այնքան ազդեցիկ չէ, որքան կղերականը, որ միշտ շահերով բաժան է եղել մարմնակաւ իշխանութիւնից և ջանացել է դէմ լինել նրան՝ տիրապետող մնալու համար: Այդ իսկ նպատակով կղերականութիւնը, զարգացնելով կրօնական ֆանատիզմը ժողովրդեան մէջ, երբ սա որևէ հանգամանքում դժգոհ է մարմնական իշխանութիւնից — աշխատել է միշտ ժողովրդի կողմը բռնել:

Բացի կրօնական բազմատեսակ ծէսերի, ֆանատիկական պաշտամունքների, կղերականութիւնը կրթութեան գործն էլ պահել է իր ձեռքի մէջ և այսպիսով տէր է դարձել հասարակական կարծիքների, որը միշտ հիմնուում է կրօնական որևէ օրէնքի կամ աւանդութեան հիման վրայ:

Քաղաքական իշխանութիւնը անզօր է հանդիսացել կրօնի պատուէրներին որևէ կերպով դէմ դնելու մէջ: Մուշտէհիդների (կրօնապետ) պատգամները համարուել են սուրբ. ո՛չ մի Շահ, ո՛չ մի թնդանօթ չէ լաջողուել ու և է սէյիդի մոլեռանդութեանը արգելք հանդիսանալ: Կրօնական ցանցը այնպէս սեղմել է պարսիկ ժողովրդին, որ սա ո՛չ մի քալ չէ անում այլ ևս առանց կրօնաւորի, առանց կրօնի: Ո՛չ մի դէպքում պարսիկ ժողովուրդը այնքան միահամուռ ոտքի կանգնելու և նոյն իսկ իրեն զոհելու ընդունակ չէ, որքան ու և է մեծ կրօնաւորի հրամանի ժամանակ:

Քէլքէլալում նստող մեծ մուշտէհիդի պատգամները միշտ աւելի ազդեցիկ են եղել, քան շահի հրամանն ու սպառնալիքը: Եւ այդ է պատճառը, որ ամեն Շահ, եթէ չէ կամենում անմիջական ապստամբութիւն յարուցանել, պարտաւոր է միշտ հաշտ ապրել կրօնաւորութեան հետ և զիջանել նրա պահանջներին:

Արդ, ծխախոտի մենապաճառը՝ Շահը լանձնել էր անգլիացիներին, առանց կարծիք հարցնելու կրօնաւորութիւնից: Եւ յետոյ, մենապաճառը տրուած էր անգլիացոյց, հետևապէս ուսու կառավարութիւնը պիտի արգելք հանդիսանար: Այդ դէպքում թէ ուսու կառավար-

ութիւնը, թէ կրօնաւորութիւնը և թէ ժողովուրդը միացել էին անգլիացոյց և պարսիկ մարմնաւոր իշխանութեան դէմ ու պիտի ջանային ոչնչացնել տրուած արտօնութիւնը:

Եւ այդպէս էլ եղաւ: 1891 թիւ Օգոստոսին, անգլիական մենապաճառի՝ Թաւրիզում կայրած յայտարարութիւնները պատուում են և նրանց տեղ կայնում չեղափոխական, ուղղակի Շահի դէմ գրուած յայտարարութիւններ: Տեղական կառավարչապետ — էմիրը նիգամը, չը համաձայնուելով թագաժառանգի հետ՝ ձեռք առնուելիք միջոցների վերաբերութեամբ, տալիս է իր հրաժարականը և Շահը ստիպուած է իր մեծ պաշտօնեաներից մէկին — էմին էլ-հուզուրին ուղարկել Թաւրիզ՝ պալթող խռովութիւնները զաղարեցնելու:

Բայց այդ նոյն իսկ օրերին, Թաւրիզի ժողովուրդը, կրօնաւորութեան դրդմամբ, ուղղակի Շահին է տալիս մի երկար հեռագիր, որում նա պահանջում է «քրիստոնեաների չը լանձնել միւսիլմանների արտօնութիւնները, որովհետև դա դէմ է Աուրանի պատուէրներին»: Այդ հեռագրով ժողովուրդը յայտարարում է նաև, որ չը լսուելու դէպքում, նա վճռել է պաշտպանել իր պահանջներն ու Աուրանի հրամանը՝ ղէնքը ձեռքին:...

Թագաւորը կրիսիական գրութեան մէջ է: Իր կարիւնտից հեռագրով նա սխտում է բանակցել Թաւրիզի հետ: Բայց սեպտեմբեր 4 ին Թէհրանում լուր է ստացուում, որ մի սպառնալից ամբոխ, հաւաքուած թագաժառանգի պալատի առաջ, պնդում է պահպանելու Աուրանի օրէնքները և ետ խլելու անգլիացիներին տրուած արտօնութիւնը:

Դեռ ոչ մի բռնի միջոցներ տեղի չեն ունենում: Ամբոխը պահանջում է միմիայն ետ առնել քրիստոնեաներին տուած մենապաճառը:

Բայց պայմանագրութիւնը ստորագրուած էր և եթէ Շահը կամենար ոչնչացնել նրան, պարտաւոր էր 2 միլիոնի մի տուգանք վճարել անգլիական ընկերութեան:

Թէհրանի կառավարութիւնը մտածում է ղիմել առևտայ դեսպանատան և խնդրել միջամտութիւն՝ Թաւ-



րիզի խռովութիւնները հանդարտեցնելու, սակայն ուսական դեսպանատունը կտրական կերպով պահանջ է դնում նոյնը, ինչ որ ժողովուրդը—ջնջել անգլիական ընկերութեան տուած արտօնութիւնը:

Միւս կողմից անգլիական դեսպանատունը պնդում է իր պայմանագրութեան վրայ՝ տուգանքի սպառնալիքը մէջ տեղ բերելով: Եւհը երկու կրակի մէջ՝ շուտընդմնացել է: Մտածում է զօրք ուղարկել Քաւրիզ՝ խռովութիւնը զսպելու, բայց ուսաց դեսպանատունը յայտարարում է որ իսկոյն կը միջամտի, իր՝ Ջուլիֆայում ունեցած զօրքով: Եւ դա կասեցնում է նորից Եւհին:

Այս բոլորը դեռ յայտնի չէր Քէհրանի ժողովրդեան: Փոստում բռնւում էին և կամ ուղղակի լետածում Քաւրիզի սուրհանդակը. հեռագրատներում չէին ընդունում այդ խնդրին վերաբերեալ հեռագիր:

Սակայն, ո՞վ գիտէ ինչպէս, մի խուլ, անորոշ շշուկ արդէն հասել—սկսում էր տարածուել, երբեմն իրողութիւնը սաստիկ գունաւորած, երբեմն այլանգամ կած: Սուրհանդակի չը տալը, հեռագիրների չստանալը գործին աւելի խոշոր կերպարանք էին տալիս և Եւհը իր պալատում, մինիստրներն ու բոլոր մեծ պաշտօնէութիւնը երկիւղի մէջ՝ չը գիտէին ինչ անել:

Այդ դրութիւնը տեսել էր մինչև սեպտեմբերի կեսը: Եւհը այնուհետև թոյլ էր տուել ուսաց դեսպանատան՝ հեռագրելու Քաւրիզի ուսաց հիւպատոսին, որ մենավաճառի արտօնութիւնը կը ջնջուի, չը նայելով որ անգլիացիք շարունակում էին հնչեցնել տուգանքի սպառնալիքը: Դորա հետ միասին Եւհը հեռագրել էր Քաւրիզ իր որդուն թէ, հէնց որ տուգանքի վճարման բանակցութիւնները վերջանան, մենավաճառութիւնը պիտի ջնջուէր:

Սուրհանդակը այնուհետև բաց են թողնում, թագաժառանգը Եւհի վճիռը հաղորդում է ժողովրդին և Քաւրիզից ստացւում են խաղաղ լուրեր:

Բայց այս առ ժամանակեայ խաղաղութիւնը շատ նման էր փոթորիկի յառաջընթաց լուրթեանը. որովհետև հազիւ թէ Քէհրանում հասնում էր լուր, որ Քաւ-

րիզի ազգաբնակչութեան մտքերը սկսել էին խաղաղել— Եւհը միամտացած, ո՛չ միայն չէր աճապարում իր խոստումը կատարելու, այլ և աշխատում էր ձգձգելու անգլիական ընկերութեան հետ անելիք բանակցութիւնը մենավաճառը ջնջելու մասին:

Անշուշտ սկսել էին գործ տեսնել անգլիական ոսկիները, միացած տուգանքի սպառնալիքի հետ: Կաշառուած պաշտօնեաները ձգնում էին Ջահին համոզել յօգուտ անգլիական ընկերութեան. միւս կողմից ուս կառավարութիւնը պնդում էր վերջ տալ խնդրին: Մտածուեցան միջին ճանապարհներ: Ընկերութիւնը առաջարկեց Ատրպատականի համար սահմանուած անգլիացի պաշտօնեաների փոխարէն՝ նշանակել պարսիկ ծառայողներ և չորս ամսով լետածագել մենավաճառի գործադրութիւնը:

Ժողովուրդն ու կրօնաւորութիւնը, նկատելով որ խաղացնում էին իրենց, սկսեցին դարձեալ յուզուել: Ատրպատականին զիջած արտօնութիւնների լուրը հասնելով Սպահան և Երրագ, սեպտեմբերի 15 ին այնտեղ ևս տեղի ունեցան հետզհետէ սպառնալից կերպարանք ստացող ցոյցեր և այդ՝ նորից մտատանջութեան մէջ զրեց Նասրէդդին շահին:

Մինչ այդ, յանկարծ վրայ հասաւ փոթորիկի առաջին նշանը: Թագաւորը Քէլբէլայի մօշտէհիդից ստացաւ մի նամակ: Մօշտէհիդը ձեռքը Աուրանի վրայ, երկար նամակով ապացուցանում էր որ օտարներին տրուած ուէ մենաշնորհը՝ դէմ էր մահմեդական կրօնին: Նասպառնում էր վատ հետևանք, եթէ անմիջապէս չը ջնջուէր ծխելիքի մենավաճառը:

Եւհը թէև առ երևոյթս ցոյց տուաւ որ մօշտէհիդի նամակին չարժէր ուշք դնել, սակայն ներքնապէս յուզուած, իսկոյն հեռագրեց Բաղդադ իր հիւպատոսին՝ գնալ Քէլբէլա, մօշտէհիդի մօտ, յայտնել հանգամանքները, վճարելիք տուգանքի մեծութիւնը և համոզել չափաւորելու սուրբ մարտու համոզմունքները...

Այս բոլորը տեղի էր ունենում Հոկտեմբեր ամսին, մեր պատմութեան ժամանակ: Յրտերը ո՛չ միայն դեռ



չէին սկսել, այլ սկսելու նշաններ անգամ չէին ցոյց տալիս:

Փոթորիկը սակայն խուլ կերպով աճում էր ժողովրդեան խաւերի մէջ: Յայտնուեցին կրօնաւորութեան միջից զրգուողներ, համարձակ քարոզողներ և Փանատիկներ:—Ո՛չ մի հանդարտ միտք չէր մնացել, բացի գուցէ Շահի իրեն միտքը, որ դեռ յոյսը զրած անգլիացոց միամտացնելու և իր մինիստրների ապահովեցնելու վրայ, կարողանում էր որսի ելնել Թէհրանի շրջակայքը և չէր նկատում թէ ինչէր էին կատարում ո՛չ միայն երկրի զանազան անկիւններում, այլ նոյն իսկ մայրաքաղաքի մէջ:

Դեսպանատները, մանսուանդ անգլիականը, գուշակեցին շուտով որ մեծ փոթորիկներ են պայթելու և սկսեցին պատրաստութիւններ տեսնել:

Անգլիական դեսպանատունը ամրացրեց և նորոգեց իր պալատի շուրջը պատող աշտարակաւոր պարիսպները, փոքրիկ թնդանօթներ տեղաւորեց շէնքի զանազան կողմերում, զէնքեր ցրուեց իր հպատակներին և մի 50—60 հոգուց բաղկացած կանոնաւոր պահակ գունդ կազմեց դեսպանատան մէջ:

Նոյն իսկ Շահի փոքր որդին—Նայիրը Սալթանէնօրի տունը գտնուում էր հօր պալատին կից՝ միջնաբերդի մէջ, երևի աւելի լաւ տեղեակ լինելով գործերի ընթացքին, կամ գուցէ վախենալով, կարողացաւ իրաւունք ստանալ լիովին փակելու, պատ գնելու պալատը մտնող զանազան մանր դռների առաջ, այլ և վանդակի փոխարէն պարիսպ շինելու պալատի առաջ գտնուող մեծ պարտէզի շուրջը: Մի անգամ հրաման առած ամլացնելու միջնաբերդը, մեծ աճապարանքով նա սկսեց փակել տալ բոլոր անցքերն ու դռները, աշտարակների վրայի թնդանօթները մաքրել պատրաստել և կազմակերպեց պահակների մի զօրեղ գունդ լեռնական վայրենի ցեղերից: Այնուհետև միջնաբերդի երկու դռները փակոււմ էին սովորականից աւելի շուտ, մթնելուն պէս և գիշերով նրանց մօտից անցնողը ենթարկոււմ էր մանրամասն հարցուփորձի:

Ընդհանուր տիրութիւն էր տիրում ամէն տեղ:

շուտ և մտամոլոր էին երևում ո՛չ միայն մինիստրները, այլ և բոլոր պաշտօնեաներն ու մինչև իսկ աստիճանաւորները:

Ամէնքը նայում էին միմեանց վրայ կասկածանքով...

## VI

... Կանայք պատի տակից, իսկ Խոսրէվը փողոցի մէջ տեղից, ետ մնացած, սակայն գաղտագողի, աչքը միշտ նրանց, զնաց ուր նոքա զնացին. որովհետև աղախինը քիչ ետ էր մնացել և ասել էր երիտասարդին.

— Հետևիր մեզ և նշանակած տեղս սպասիր մինչև գամ իմաց տամ. խանումս ուզում է խօսել քեզ հետ...

Եւ Ալիէ խանումը իր աղախին Փաթմայի հետ շուկայից շուկայ անցնելով՝ դուրս եկան Սարչէշմա, քայլեցին դէպի Շահաբղիւլաղիմի թաղը և մտան նրա ծուռ ու մուռ փողոցները:

Խոսրէվը երբ այդ տեսաւ, պահ մի վարանեց: Նեղ, աւերակներով ու փլատակներով, աղբանոցի փոխուած բացուածքներ ունեցող այդ հեռաւոր փողոցների ամալութիւնը ուշքի բերեց նրան: Սիրտը սեղմուեց, սկսեց զղջալ, մինչև իսկ քայլերը դանդաղացրեց և վերջ ի վերջոյ մի աւերակի մօտ կանգ առաւ:

Երևի աղախինը նկատեց այդ, որովհետև բռնեց խանումի թևից, մի քանի րոպէ խօսեց նրա հետ, ապա, շուրջը նայելուց և ստուգելուց յետոյ որ անցորդ չը կար, արագ քայլերով մօտ եկաւ և ասաց Խոսրէվին.

— Միթէ աղան յոգնեց արդէն:

— Ո՛չ... շփոթուեց երիտասարդը—բայց այս օրտեղ էք տանում ինձ:

— Ախ այն, ճիճաղեց աղախինը—երևում է որ այս կողմերը չես եղել: Խանումի մօտ ենք գնում, բայց կողմնակի խուլ փողոցներով. իսկոյն դուրս կը գանք մեր տան առաջ... Սակայն, եթէ վախկոտ ես, ետ դարձիր. քեզ խնդրող չը կայ ..

Ասաց, առանց պատասխանի սպասելու դարձաւ և



միացաւ խանութին ու երկուսն էլ շարունակեցին իրենց ճանապարհը:

Խորքէ վր մի վայրկեան շուարած մնաց, լետոյ ամաչեց իր վախենալուց: Թոթուեց իրեն և հետևեց նրանց, վճռելով միշտ հեռուից գնալ՝ տեսնելու թէ ո՛ւր են հասնելու վերջ ի վերջոյ:

Փողոցից փողոց—աւելի փլուածքների և բացուածքների մէջ եղած շաւիղներով, երբեմն ուղղակի քանդուած պատերից անցնելով, երկու կանաչք քիչ լետոյ իջան մի նեղ ու խուլ փողոց, որ ծայրից ծայր միապաղաղ աղիւսէ պատ ունէր և հեռու մի փոքրիկ դռնակ: Հասկացաւ: Հարեմխանայի ետևի դռնով էին ուզում իրեն ներս մտցնել: Եւ վախ զգաց: Ըմբռնեց որ մի նշանաւոր մարդու տուն էր մտնելու. կեանքի մէջ առաջին անգամն էր այդ գիպուածը. թէև Այիշէի գեղեցկութիւնը գերել էր նրան, բայց վախը աւելի զօրեղ գտնուեց:

Կանգ առաւ փողոց դուրս հանող փլուածքի այս կողմը և սպասեց:

Աղախինը, որ թողել էր խանութին ծանր քայլելու դէպի փոքրիկ դուռը, դարձաւ, իջաւ փլուածքից երիտասարդի մօտ և արագ՝ ասաց.

—Սպասիր այստեղ. քեզ կը բերեմ կնոջ վերնագգեստներ և լետոյ ինձ հետ միասին կը մտնենք... Ներքինի չը կայ. մի ծերունի ծառայ է միայն, որ խանութի շունն է... Հագուստը քեզ կը բերեմ միւս դռնով...

Ու անհետացաւ, թողնելով երիտասարդին սրտատրոփ և վախով լցուած:

Երբ երկու կանաչք անհետացել էին, մի բոլոր մտածեց ետ դառնալ, փախչել: Սրտի ճմլումն աւելանում էր, մի տեսակ անհանգստութիւն էր համակում նրան: Նստեց մի գլորուած պատի կտորի վրայ և պահ մի մտածեց:

Թէ ո՛ւր էր—ինքն էլ չը գիտէր: Եահարգիւլաղի մի թաղումն էր—այդ հասկացել էր. բայց եթէ ետ գառնալ կամենար, ձիաքարշի գիծը գտնելու համար

անշուշտ նրան պէտք էր հարցնել առաջին պատահած անցորդի:

Միւս կողմից, հարեմխանան, այն հաճոյքը որ նորից պիտի տեսնէր գեղեցիկ Այիշային տնային կիսամերկ հագուստով, երեսը լիովին բաց, որ պիտի մանաւանդ ունենար այդ կնոջ իր գրկի մէջ—այնտեղ, այդ խորհրդաւոր պատերի ետևում, իր կեանքումը երբէք չը տեսած, մինչև այժմ իրեն յաճախ գրաւող կանանցում...:

Ու մնաց: Եւ տասնուհինգ բոլորից լետոյ նա, Փաթմա աղախինի հետ, դողդոջուն, գունատ՝ երեսի ծակոտկէն յուրանդի տակ, պարուրուած կապուտ սաւանով, հագած կանացի լայն շալվարը, ոտքերը մի դոյզ անյարմար կարմիր մուճակների մէջ—մտնում էր փոքրիկ դռնից ներս:

Հարեմխանայի այդ բազը սկսում էր մի հրաշալի, հովասուն և լաւ խնամուած պարտեզով:

Իռան վրայ նստած ծառան միայն գլուխը բարձրացրեց և ասաց.

—Այդ դու ես, Փաթմա:

—Ես եմ. խանումը եկել է:

—Նոր եկաւ. իսկ դու ինչո՞ւ էիր մենակ թողել նրան... որ խանը իմանայ... Հետինդ ո՞վ է:

Այս բոլորը նա ասում էր ո՛չ իբր քննողի պէս, այլ իբր հետաքրքրուողի: Ծերունի դռնապանը, իրաւ որ, Այիշէ խանութի շունն էր. մի խափած, ողորմելի ծերուկ, որ գրեթէ միշտ ննջում էր դռան ետևը կկղած:

—Խանութին ես Սար-չէշմէ թողի, որ այս նոր աղախինին գում բերեմ:

—Հո՛, նոր աղախին է... իսկ սիրուն է:

—Քեզ ինչ, ծերունի...

Ծիծաղեց Փաթման և երիտասարդի հետներս մտան: Այիշան Նասրուլլահ խանի չորրորդ և ամենափրելի կինն էր, բերուած Եիրաղից և առանձին արտօնութիւններ վախելու: Նրան տուած էր հարեմխանայի երկրորդ բազը, բոլորովին անջատուած առաջինից և միմիայն մի փակ դռնով նրա հետ կապուած:



Այդ բազում Այիշէն տէր և իշխան էր լիազօր-  
ունէր իր առանձին պարտէզն ու շատրուանով աւա-  
զանը, իր խոհանոցն ու սենեակները, իր աղախիններն  
ու սև ստրկուհին: Նասրուլլահ խանը ոչինչ չէր խնա-  
յել սիրած կնոջը հիւրի դարձնելու և նրա բնակարանը՝  
դրախտ:

Ճոխութիւն էր տիրում ամեն կողմ. թաւիշ, մե-  
տաքս և գորգեր, հագարներ էին նստել տանտիրոջ  
վրայ:

Այդ իսկ բազումն էր, որ ոտք կոխեց երիտասարդը  
և քիչ յետոյ մտաւ մի պերճ զարդարուած սրահ, որի  
դռան առաջ նա սառած մնաց հիացումից:

Մետաքսապատ մի բարձր ներքնակի վրայ, մէջքը  
փափուկ և ճախ բարձերի թիկն տուած՝ նստել էր ժըպ-  
տուն, գեղեցկութեան մի հրաշակերտ, թանգազին ակ-  
նեղէններով շողշողուն, տնային կիսամերկ, կուրծքն ու  
ոտքերը բաց հագուստով Այիշէ խանումը, որ հրաւի-  
րում էր պատանուն մօտ գնալ և տեղ բռնել իր կողքին:

Խոսրէվը մի վայրկեան հիացմունքից չը կարողա-  
ցաւ քայլ առնել: Յետոյ, Փաթմայի օգնութեամբ ա-  
զատուեց կանացի հագուստից և դողդոջուն մօտ գնաց:

—Մօտ նստիր, այստեղ... համարձակ և քաջող  
ժպիտով բռնեց նրա ձեռքից կինը և գրեթէ նստեց-  
րեց իր ծնկների վրայ:

Աղախինը դուրս գնաց, յետոյ ներս եկաւ ուրիշ  
երկուսի և սև ստրկուհու հետ, որոնք լուսամուտներե-  
րը փակեցին, բերին խմելիքներ, թէյ, քաղցրեղէն և  
ձեռները կուրծքերին կանգնած՝ մնացին դռան մօտ:

Խանումը և ոչ իսկ բանի տեղ էր դնում նրանց  
ներկայութիւնը ու շարունակում էր սիրալիր, նախ մօտ  
քաշել երիտասարդին, յետոյ նրա այտերը զգուել և  
հուսկ ուրեմն, առանց այլևայլութեան՝ զրկեց ու սկսեց  
համբուրել ամաչող երիտասարդին:

—Ի՞նչ որ կարծես ամաչում ես, խան... քրքր-  
ջաց նա—այդ ստրուկներին... մի ամաչիլ, նրանք իմ  
շներն են, ուրիշ ոչինչ... Անունդ Մէհտի խան է, չէ...  
—Այո...

—Այդքան միայն խօսելդ... տղամարդ չես. ուրի-

չը քո տեղը լինէր, այժմ կը գրկէր, համբուրներով կը  
ծածկէր ինձ, գեղեցիկ տողեր կասէր, ուրախութիւնից  
կը գոռէր... իսկ դ՞ու... կարծես աղջիկ չինես... լաւ,  
ես քեզ օրինակը տամ, խօսել սովորեցնեմ... էյ, գինի  
տուէք:

Եւ երբ աղախիններից երկուսը դուրս էին վազում,  
Այիշան ոստնեց, կրքոտ կերպով քաշեց դէպի իրեն Ե-  
րիտասարդին, զրկեց ու գոչեց.

—Չուարճայիր և ոչնչից մի քաշուել... իսկ եթէ  
վախենում ես, կասեմ քեզ որ առանց իմ հրամանի ոչ  
ոք, լսում ես, նոյն իսկ տանտէրը ոտք կոխել չէ  
կարող այս բազը...

Ապա գրկած երիտասարդին, դարձաւ Փաթմային  
ու ասաց.

—Շիրինի (քաղցրեղէն)... կանչիր Չոհրային և  
թող թառը (նուագարանը) բերէ...

Եւ այսպէս, հարեմխանայի կրքոտ կինը ամէն բան  
արաւ շփոթուած ու ամաչող երիտասարդին համար-  
ձակութիւն ներշնչելու համար:

Յետոյ, երբ երկնք, զգուանքները փոխադարձ էին  
սկսում դառնալ, երբ գինին ու երաժշտութիւն էր  
գայիս, երգ, պար, քրքիջ ու զուարճութիւնը ողողում  
էին սենեակը, Խոսրէվը արդէն լիովին մոռացել էր  
վախն ու ամօթը և համարձակ, արբշիւ կերպով ընկը-  
մում էր հեշտութեան մէջ:

Այիշէ խանումը կատարելապէս արբեցնում էր նը-  
րան «երկու շրթունքներով—բաժակի և իրեն»: Պարզ էր  
որ վարժ էր նա այդ բոլորին: Աղախիններն իսկ ժպի-  
տով և սովորած, զիտում էին իրենց խանումի նոյն  
իսկ չափազանց համարձակ, լկտիւթեան հասնող զգու-  
անքներն ու շարժուածքները:

Ամէն ինչ շատ լաւ էր գնում. խանումը արբե-  
նում էր, արբեցնելով Խոսրէվին. հեշտասիրական ծայ-  
րահեղ ցոյցերի մէջ՝ մի աղախինը նուագում էր, երկ-  
րորդը երգում դիմացնին, գետնի վրայ միմեանց ետե-  
ից սփռոց էին կազմում կերակուրներ, քաղցրեղէն,  
օշարակ և այլն, դրսում սկսում էր մթնել. ժամանակը սա-  
հում էր աննշմարելի:



Եւ անշուշտ Խոսրէվը իր կեանքի մէջ գուցէ առաջին և վերջին անգամ լիուլի կը ճաշակէր երազած գերագոյն հաճույքը, եթէ տեղի չունենար մի ինքնըստինքեան շատ սովորական, բայց չարագուշակ հետեանք ունեցող դէպք:

Որտեղից որ էր, երևի մօտակայքում գտնուող մի մզկիթի մինարէի վրայից, լանկարծ ներս խուժեց մի բարձր, հնչեղ ձայն, որ զիլ ձայնով կանչում էր.

— Ալլահ աքպէր...

Երեկոյեան ազանն էր: Հաւատացեալ իսլամներին երեկոյեան աղօթքի հրաւիրող մեծագոյն ձայնը:

Թէև արբած, բայց Այիշէ խանուժը նստեց, ձեռքը դէմքին քսեց ու ասաց բարձրաձայն

— Ալլահ աքպէր... Փաթմա՛, չը մոռանանք ճըշմարիտ միւսուլմանի պարտաւորութիւնները... փռիւր այն կողմ խալիք-նամազը (գորգ աղօթքի համար) և ես ու Շահգադէն կը կատարենք մեր երեկոյեան աղօթքը... գնացէք դուք էլ...

Աղախինները ցած դրին ամէն ինչ և դուրս գնացին: Փաթման բարեպաշտութեամբ փռեց փոքրիկ գորգը մի ինչ որ մետաքսէ փոքրիկ քսակից հանեց սուրբ հողից շինած փոքրիկ քարը, դրեց նրա վրայ և դուրս գնաց:

— Միասին աղօթենք, խան, դարձաւ Այիշէն Խոսրէվին:

Երիտասարդը լուռ, լրջացած ու շփոթուած՝ չը գիտէր ինչ ասել կամ անել: Որպէս կրակապաշտ պարսիկ, նա ոչ միայն չէր աղօթելու, այլ պիտի ջանար ներկայ չը լինել մահմեդականի աղօթքին:

Այդ շուարուժը Այիշէի ժպիտը շարժեց.

— Երևի դու էլ մեր այժմեան ջահիլների պէս շատ նախանձախնդիր չես... բայց գիտես, ես մօշտէյիզի աղջիկ եմ... և եթէ ուզում ես սիրուել ինձնից, ունենալ ինձ... առաջ աղօթիր... Յետոյ էլի կը դուարձանանք:

Խոսրէվը մնաց անշարժ և զգաց որ գունատուում էր:

— Միթէ այդքան խաթը չը շահեցի քեզ մօտ. մօտե-

ցաւ նրան Այիշէն, գրկեց ու սկսեց դգուել—իմ խաթըի համար... դէհ, ապա... միւսուլման դարձնեմ քեզ... կատակ մի կարծիր որ մօշտէյիզի աղջկայ սիրականն ես...

Երիտասարդի դէմքը կծկուեց և նա ոտքի ելաւ ու գունատ մոմուաց.

— Չեմ կարող...

— Չես կարող... զարմացաւ կինը— չես կարող... մայրդ ու հայրդ ուրեմն քեզ չեն սովորեցրել աղօթելը:

— Ո՛չ, չեն սովորեցրել... շտապեց ասել երիտասարդը՝ կասչելով այդ պատրուակից:

Այիշան ուրախ ծիծաղեց: Իմադրութիւնը բորբոքեցնում էր նրան:

— Ա՛յ քեզ բան... ասաց նա— ուրեմն ոչ միայն պիտի ինձ մօտ սովորես սիրել և զուարճանալ, այլ և աղօթելը... սա խօսարձանք եղաւ ինձ համար... Ապա, մօտ եկ և ինձ նման արա... ես քեզ աղօթելն էլ սովորեցնեմ:

Իրութիւնը անելանելի էր: Մի վայրկեան, միայն մի վարկեան Խոսրէվը մտածեց անել ամէն ինչ, կեղծել, որպէս խաղ, որպէս տուերեսս դերասանութիւն, զգալով որ շատ վատ բան էր լինելու եթէ չը կատարէր գեղեցիկ կնոջ կամքը: Բայց այդ վարկեանը երկար չը տևեց: Մօր, իր շատ սիրելի մօր հրաշալի դէմքը, հեզ և սիրող հայեացքը պատկերացաւ դիմացը. իր հօր պատուէրները, իր կրօնի ազատ, մեծ և վսեմ վարդապետութիւնը լիշեց, և, երբ Այիշէն ուզում էր քարշտալ նրան դէպի գորգը, ցնցեց զլուխն ու այս անգամ վճռականօրէն ասաց.

— Ո՛չ. չեմ կարող... չեմ ուզում...

Այիշէն ևս առ ևս զարմացած՝ թողեց նրա թևը և հետաքրքրուած՝ հարցրեց.

— Բայց ինչո՞ւ, դու միւսուլման չես, դու կուպաշտ, հրէայ, քրիստոնեայ ես... դու շահգադէ չես միթէ, քո հայրդ ու մայրդ անհաւատներ են... և այդպէս ձեռացնում ես քեզ իմ առաջ... երեխայ մի լինիր... եթէ ասեմ որ գրկիր ինձ, համբուրիր, եթէ ասեմ որ ոտներս համբուրիր...



— Ուրախութեամբ... բայց միւսիւմանի աղօթք՝ ոչ...

— Ինչպէս... դէմքը կնճռեց Ալիշան— ուրեմն իրաւ, դու միւսիւման չես... գուցէ բարբի ես դու... խօսիր, շուտ, ինչ ես դու...

Ու մի քայլ հեռանալով, սպառնալից, նայեց նրան: Երիտասարդը կռթնեց պատին և լուռ մնաց:

— Խօսիր, ճշաց Ալիշան— ասա, ո՞ւմ էր արդեօք որ համբուրեցի, գգուեցի. մի միւսիւմանի, թէ մի անհաւատ շան, մի բարբի կամ... Խօսիր, եթէ ուզում ես որ շարունակեմ քեզ սիրել, եթէ չես ուզում որ զրգջամ, պղծուած համարեմ ինձ...

Խօսքէվը մի քայլ արաւ դէպի դուռը և ասաց զուգոջուն.

— Թոյլ տուր ինձ հեռանալ... շնորհակալ եմ սիրուցդ... բայց... հրամայիր ինձ դուրս տանել այստեղից... մեղաւոր եմ որ գրաւուեցի, եկայ...

— Ա՛, ո՞չ... դու ինձ հետաքրքրում ես... ես քեզ ուզում եմ, հասկանում ես, ուզում եմ ամբողջ հոգովըս... ես միայն այսօրուայ համար չէ որ սիրում եմ քեզ, ես ուզում եմ որ դու իմը լինես միշտ... ամէ՛ն օր... դու միշտ պիտի գաս ինձ մօտ... ես Փաթմային կասեմ որ տունդ ճանաչի և ամէն անգամ երբ յարմար գտնեմ՝ գաս ինձ մօտ... ո՞չ. ես քեզ նման սիրունը չեմ տեսել, քեզ պէս ոչ ոքի չեմ սիրել... հասկանում ես...

Եւ այս ասելով, կրքոտ, տաք երկրի պակշոտ շեշտերով, նա մօտեցել էր, փարուել երիտասարդին, գրգուում էր նրան, ջերմ, աւփական համբուրներով ծածկում նրա շրթունքները, այտերը...

— Ասա... ասա որ դու միւսիւման ես: Հասկանում ես, ես մօշտէլիդի աղջիկ եմ, կրօնը ինձ համար մի պահանջ է դարձել, ես պիղծ եմ համարում այն, ինչ որ միւսիւմանի չէ, ես շուն եմ համարում և սատկացնելու արժանի այն ամէնին, ով միւսիւման չէ... խօսիր, ինչ ես դու... եթէ միւսիւման ես, աղօթիր ինձ հետ... չը գիտես՝ սովորեցնում եմ... իմ խաթրի, իմ սիրոյ համար... արա՛ ուզածս և պիտի տեսնես որ ո՞չ

մի կին ինձ նման չէ սիրել և չի սիրել քեզ... աղքատ ես— քեզ ոսկիներով կը լեցնեմ... պատուի ես ցանկանում— քեզ պալատ կը մտցնել տամ... խօսիր, ասա միայն որ դու միւսիւման ես...

Յետոյ մէկէն, թողեց նրան գրկից, կանգնեց քիչ հեռու և աւելի հանդարտ ձայնով ասաց.

— Լաւ ուրեմն, մի աղօթիր, ոչինչ... չեմ ուզում...

Խօսքէվը ազատ շունչ առաւ: Բայց շտապեց, որովհետեւ Ալիշան խորունկ և խիստ ձայնով շարունակեց.

— Սօհայն— ասաց նա— ամէն միւսիւման իր օրդուն փոքրութիւնից սովորեցնում է մի բան, մի գերագոյն բան, որ ապացուցանում է իսլամ լինելը... Արտասանիր ինձ քէլէմէլի շահադաթը (վկայութեան խօսքերը) և մի աղօթիր ու ես քօնն եմ ընդ միշտ... Արտասանիր...

Եւ ձեռքը պարզած՝ լուրջ սպասեց:

Երիտասարդը աւելի ևս գունատուեց:

— Ասա... գոչեց խստութեամբ Ալիշան— ասա ինձ հետ. «Ալլահիլլահուլ-ուլլահ»... կրկնիր... Մուհամէդը ըստուլ ուլլահ, Ալիէմ վէլիուլլահ... Չես արտասանում... ասա... դու միւսիւման չես ուրեմն...

Եւ կատաղի, ոտներով դէպի նա, բռնեց նրա երկու ուսազլուխներից ու ճշաց.

— Ի՞նչ ես դու ուրեմն. քրիստոնեայ... հրէայ...

Այլ ևս անհնար էլ ծածկուել և Խօսքէվը մեռելատիպ, երերուն և սոսկումից թուլացած, ասաց.

— Ես գէրը <sup>1)</sup> եմ:

— Գէրը... Անէ՛ծք... պիղծ, տասնհազար անգամ անի՛ծեալ, շուն, աղտոտ գէրը... Անէ՛ծք, անէ՛ծք...

Յետոյ ետ քաշուեց, թքեց, մի վարկեան կատաղի աչքերով նայեց նրան ու մէկէն, արագ վճռականութեամբ վազեց դէպի սենեակի մի կողմը՝ գոռալով.

— Ի՛նչ, մի գէ՛րը համբուրի, գգուի մօշտէլիդի աղջկայ... մի շուն անհաւատ այստեղ մտնի և կենդանի դնուրս գայ...

Խօսքէվը զգաց որ ամէն ինչ վերջացել էր և նը-

<sup>1)</sup> Կրակապաշտ պարսիկ



րան հարկաւոր էր մի կերպ դուրս նետուել այդտեղից ու արագ կերպով վազեց դէպի դուռը: Այիշէի ճիչը, լսուած միւս սենեակներից, ներս թափեց աղախիններին, որոնք սոսկամաք տեսան թէ ինչպէս գեղեցիկ տիկինը բարձերի տակից քաշոււմ-հանոււմ էր դամասկեան սուր դաշոյնը:

— Խանոււմ, հոգիս... գոչեց Փաթման փակելով Այիշայի դէմը— ինչ եղաւ քեզ...

— Գեբը է, գեբը է այդ շունը... ճչաց Այիշան, ճգնելով ազատուել նրա ձեռքից— Թողէք որ սատկեցնեմ նրան... ես համբուրեցի, գգուեցի մի գեբը, ես, մոշտէյիդի աղջիկս... սիրեցի մի գեբը...

Բայց Խոսրէվն արդէն դուրս էր ձգել իրեն սենեակից, շտապմամբ հագել էր կօշիկները, բագը ոստնել ու վազոււմ էր մթան մէջ՝ թագնուելու պարտիզի խուլ կողմերում:

Փախչելու ժամանակ նա լսում էր դեռ Այիշայի ճիչը, որ հայհոյում էր, հրամայում էր թողնել զարնելու, գոչում էր բռնել գէբրին, սատկեցնել...

Բայց գէբը պարտիզի մէջ այս այն կողմն էր վազում մի ելք որոնելու: Պատերը բարձր էին. միտք չը կար ծառերի վրայ մագլցելու: Ընտով անշուշտ ճրագներ դուրս կը հանէին, մարդիկ կը կանչէին, կը գրտնէին նրան...

Պէտք էր խուսափել, ամեն ճիգ գործել՝ դուրս գալու այդ սոսկալի որջից:

Եւ նա մի քանի անգամ փորձեց այս-այն կողմը, պատերին մօտեցաւ, խոր մթուժեան մէջ շօշափեց ամեն ինչ, փորձեց ելքի դուռը գտնել. գիտէր որ այնտեղ մի ծառայ կար, բայց և գիտէր որ դժուար չէր լինիլ յաղթել նրան, մի կողմը շարտել և անցնել:

Այդպէս, այս-այն կողմ վազելուց յետոյ, յանկարծ նրա ձեռքը դիպաւ մի դռան: Շօշափեց փակը, հրեց, յետոյ ձեռքը բարձրացրեց դռան վերը, քաշեց կապը և դուռը ետևի վրայ առանց աղմուկի բացուեց, յետոյ մի ծանր վարագոյր դէն հրեց և զարմացմամբ տեսաւ որ փոխանակ փողոցի, գտնուում էր մի ուրիշ աւելի մեծ և պարտիզային բագի մէջ:

Դուռը բացուելու ուրախութեանը յաջորդեց վհատութիւն: Զգաց որ ոյժերը թողնում էին իրեն և տեղնի տեղը կքւեց մի ծառի տակ: Բագի մէջ խոր լուծիւն էր տիրում, բայց սենեակների մեծ, գոյնզգոյն լուսամուտներից երևում էին ներսի ճրագները:

Այդպէս մնալը երկար չէր կարող տևել և երիտասարդը ուղղուեց ու մի ճար մտածեց: Նախ շուրջը նայեց, յետոյ յանկարծ իջելով որ կարող էին ճրագներ հանել իրեն որոնելու, խարխափելով նորից բագի այս այն կողմը գնաց և դուռը որոնեց:

Այդ միջոցին էր, որ բագի միւս կողմից ճոնչաց մի դուռ, յետոյ վարկենապէս դուրս ելնող լոյսի մէջ երևաց մի մարդ, որ զգուշութեամբ իջնում էր, աշխատում ոտնաձայն չը հանել և քալում դէպի բագի ամենաբարձր շէնքը:

— Անշուշտ դուռը այն կողմն է, մտածեց Խոսրէվը և ոտի ծայրերով հետևեց նրան:

Մարդը մտաւ շէնքի մէջ, եյաւ սանդուխքներից, ամենայն զգուշութեամբ բաց արաւ մի դուռ և ներս մտաւ մի մութ տեղ, ուր այլ ևս նրա ոտների ձայնը չէր լսոււմ, գորգեր փռած լինելուն համար: Խոսրէվը ջանաց աչքից չը կորցնել նրան: Մարդը բաց արաւ մի ուրիշ դուռ և կամենում էր մտնել այնտեղ, երբ յանկարծ, երևի լսեց ոտնաձայն իր ետևից, կանգ առաւ, դարձաւ ու կծկուեց խաւարի մէջ:

Խոսրէվն էլ կանգ առաւ: Երկար, երկուսն էլ շունչերնին պահելով՝ մնացին անշարժ, յետոյ մարդը զգուշութեամբ գնաց դէպի դուռը, և աշխատեց բանալ անձայն: Խոսրէվը շարժուեց: Այդ շարժումը բաւական եղաւ: Մարդը իսկոյն թողեց դուռը, ոստնեց դէպի նա, բռնեց թևից և սասց խռպոտ ձայնով.

— Ո՞վ ես դու, ասա, թէ չէ իսկոյն կսպանեմ: Խոսրէվը ուժգնութեամբ ցնցեց նրան և նույնպէս ցած ձայնով ասաց.

— Իսկ դու ո՞վ ես... ինձ սպանելու համար նախ քեզ նման թոյլ չը պիտի լինել և յետոյ, տես...

Ու արագութեամբ վերարկուի ետևից մի դաշոյն



Հանելով, ծալրը պարզեց դէպի մարդը:

—Մու ներքինի կամ ծառայ չես ուրեմն. հարցրեց սա—և օտար ես... իսկ ինչ գործ ունիս հարեմխանայի մէջ:

—Իսկ դու. եթէ տանուտէրն ես, ինչու այդքան զգուշութեամբ ես դուրս գնում հարեմխանայից. դու էլ ուրեմն օտար ես:

Մարդը լուսթեամբ մի շարժում գործեց, լետոյ լանկարծ լսուեց մի շփումն և վառուեց մի լուցկի:

Երկուսն էլ նայեցին միմեանց: Խորեվի դիմաց կանգնել էր իրեն հասակի մի պատանի:

—Ս'... արեց պատանին—ահա թէ ինչ. հօրս կանայք սիրականներ են մտցնում ներս:

—Եւ դու հօրդ կանանց մօտից ես դուրս գալիս գիշերով:

—Ես մօրս մօտ էի:

—Ստում ես. մօրդ մօտ՝ առանց ներքինի իմանալուն և մօրդ մօտից՝ այդպէս ծածուկ... Մու հօրդ հարձերից մէկի մօտն էիր...

—Թող լինի... բայց դու կը մեռնես, իսկ ես այս դռնից լետոյ քիրունը կանցնեմ...

Աւ լուցկին մարեց: Պատանին ոտքը վերցրեց գնալու: Վճռական բոպէ էր: Խորեվը հասկացաւ որ պատանին եթէ մի աղաղակ հանէր, իր վերջին բոպէն հասել էր: Ուստի և արագ վճռականութեամբ՝ ամուր բռնեց պատանու թևից, դաշոյնը դրեց նրա կուրծքին և ասաց.

—Եթէ մի քայլ ևս արել ես, կը զարնեմ:

—Սյդպէս, գոչեց պատանին—լաւ ուրեմն...

Եւ մի արագ շարժումով մերկացրած դաշոյնը դէմ տուաւ, նրանով մինչև իսկ քիչ ծակեց Խորեվին:

Մթան մէջ այն ժամանակ տեղի ունեցաւ մի կատաղի կռիւ երկու երիտասարդների մէջ: Խորեվը չէր ուզում զարնել, այլ աշխատում էր մի կերպ ազատուել հարուածներից. լետոյ մի յարմար բոպէում ետ-ետ գրնաց, հրեց դուռը և իրեն գտաւ մի լայն սրահի մէջ, որից լետոյ երևում էր լայն բազը և դիմացը՝ փողոցի դուռը՝ լուսաւորուած լապտերներով:

Եւ մինչ պատանին վազում էր նրա ետևից գոռալով, Խորեվը ոտնեց դէպի բազ և վազեց փողոց: Պատանին պնդեց նրա ետևից անդադար գոռալով.

—Բռնեցէք մարդասպանին, գողին...

Ծառաները երևի կամ քնած էին և կամ զբաղուած, որովհետև մինչև որ գռներ կը բացուէին, մինչև որ աղմուկ և շարժում կը յառաջանար, Խորեվը փողոց էր մտել և վազում էր սաստիկ արագութեամբ, իսկ պատանին էլ նրա ետևից:

Բանն այն է, որ պատանին իսկոյն իր նախանձի զրգամբ մտածել էր թէ անշուշտ դա իր սիրուհու մի ուրիշ սիրեկանը պիտի լինէր, իր հակառակորդը, որ այժմ տեսել էր ամեն բան և եթէ կենդանի մնար, կարող էր հօրը պատմել և ո՞վ դիտէ ինչեր կը ծագէին զբանից:

Ու նոյն արագութեամբ, մթան մէջ պնդեց նրա ետևից: Քիչ լետոյ երկուսն էլ դուրս գնացին մի նեղ փողոց, այնտեղից Խորեվը ոտնեց մի աւերակի մէջ և ջանաց խուսափել, մտածելով որ ծառաները սրերով ետևիցն էին ընկել:

Բայց ծառաները գեռ հագիւ փողոցի դուռը ելած, չէին իսկ տեսել թէ այդ ինչ փախչողներ էին և ո՞ւր անհետացան:

Աւերակի մէջ, Խորեվը դայթեց, ընկաւ, լուսահատարար մտածեց որ հասել էր մեռնելու բոպէն, բայց մեքենայօրէն դառնալով տեսաւ որ ետևից եկողը միայն պատանին էր, անմիջապէս կանգ առաւ, մտաւ մի պատի ետև, թողեց որ մօտենար և երբ հասել էր, ձեռքի քարովը այնպէս խփեց նրան, որ պատանին ընկաւ:

Խորեվը այն ժամանակ փորձեց փախչել, բայց պատանին բռնել էր նրա ոտքը ընկնելիս և հայհօլում էր:

Պէտք էր վերջ տալ այդ բոլորին, կարող էին ձայները լսել: Կռացաւ, սեղմեց պատանու կոկորդը, լետոյ դաշոյնը բարձրացրեց, ուժգնութեամբ մինչև դասապանը խրեց նրա կուրծքը, սոսկումով ցատկեց ու դուրս թռաւ աւերակներից:



Ու առանց ետ նայելու, կարծես դարձեալ պնդում էին ետեւից, մագերը ցցուած, աչքերն արիւնով լի, փոշոտ ու զառանցանքի մէջ լինողի նման՝ վազեց ու վազեց, ինքն էլ չը գիտենալով թէ ո՛ր էր գնում և կամ ո՛րտեղ էր գտնուում...

## VII

Այիշէի խանութին տենդալին զառանցանքների մէջ անկողին էին մտցրել ուժով: Աղախինները երկու ժամ էր որ ճգնում էին նրան հանդարտեցնել, ուշքի բերել, բայց նա անընդհատ ճչում էր, դաշոյնն էր ուզում, երիտասարդին կանչում...

Մինչ այդ, յանկարծ, գիշերային լուռութեան մէջ հեռուից լսուեց մի երկար աղաղակ որ եկաւ ցնցելու բոլորին:

Փաթման ոտքի ելաւ խանութի սնարի մօտից և ասաց.

— Ի՞նչ է այն:

Յետոյ դարձաւ միւս աղախիններին և հարցրեց.

— Գտնա՞ք անպիտանին:

— Չը գտանք... մտել է միւս հարեմխանէն:

— Կորսուեցանք... ձեռքերը գլխին խփեց Փաթման— երեւի այդ նրա ձայնն էր, ներքինիները սպանեցին նրան... Մուտ փակէք միջին դուռը և ուրացէք, հասկանում էք, ուրացէք որ այստեղ տղամարդ մտած լինի:

Բայց, ինչպէս երեաց, և՛ դռնապանը իր քնած տեղից, և՛ միւս բազի կանաչք, ներքինին ու ծառաները, այլ և ընդունի<sup>1)</sup> աղաները լսել էին նոյն աղաղակը, որովհետև իսկոյն մի մեծ շարժում յառաջացաւ ամբողջ տան մէջ:

Իսկապանը ներս վազեց, միւս բազից դուռը ձե-

<sup>1)</sup> Տղամարդկանց մասը բնակարանի մէջ: Կանանց մասը կոչուում է Էնդէրուն: Բառացի նշանակութեամբ՝ ընդունի— դուռը և Էնդէրուն— ներս:

ձեցին, լսուեցան ծառաների իրարանցում, միմեանց կանչելը, աղաների բարձրաձայն հարցերը...

Քիչ յետոյ դարձեալ, և, այս անգամ աւելի մօտից, լսուեց նոյն աղաղակը: Այնքան նա մեծ էր ու կատաղի, որ ամէն դէմք գունատուեց:

Վաղուց էր որ ամենքը գիտէին թէ ինչեր էին կատարուում Պարսկաստանում: Թաւրիզի, Շիրազի և Սպահանի ցոյցերը ծխախոտի մենավաճառութեան դէմ՝ ամենքը լսել էին:

Անշուշտ թէհրանումն էլ նոյնն էր կատարուում— մտածեցին Նասրուլլահ խանի տանը: Մի քանի ծառաներ փողոց դուրս թռան, աղաները (Նասրուլլահ խանի եղբայրն ու որդիները) տանիքի վրայ բարձրացան վերարկուով և սպիտակ անդրավարտիկներով, իսկ հարեմխանայի առաջին բազի կանաչք ներքինին ուղարկեցին ընդունի՝ իմանալու եղածը:

— Մենավաճառի դէմ է, հանդարտեցէք... յորդորեց նա կանանց:

Բայց երրորդ անգամ աղաղակն արդէն մօտենում էր և տանիքի վրայ կանգնած աղաներից մէկը— լաւ լսեցին նաև կանաչք ու ծառաները— կանչեց.

— Այս կողմն են գալիս... բայց ինչո՞ւ, քնչ կայ այս կողմը...

Եւ իրարանցումը տան մէջ սաստկացաւ: Մարդիկ գիտէին որ ժողովուրդը զայրացած էր նաև պաշտօնէութեան, և մենավաճառը օտարներին տուող պաշտականների դէմ: Նասրուլլահ խանը Շահի գանձապահներից մէկն էր: Չը լինի արդէն ժողովրդի կատաղութիւնը այն կէտին էր հասել, որ մտադիր էին մեծ պաշտօնեաների տների վրայ յարձակուել:

— Այս կողմն են գալիս... կանչեց փողոցից մի ձայն ևս:

— Հօսէյն, Այի, Աբպէր... ձայնում էր տանիքի աղաներից մէկը կռացած դէպի փողոցը— շներ, ո՛ր էք կորել, եկէք դռները ամրացրէք...

— Մահմուդ, դու քաջ ես. ասում էր աղաներից միւսը իր ետևում կանգնած ծառային— փողոց վազիր,



գնա այդ աղաղակի կողմը և տես ովքեր են, ուր են գնում, ինչ են ուզում...

Ո՛չ միայն Մահմուդը, այլ և մի քանի ուրիշ ծառաներ էլ, լետոյ դրացի տնից ելնելով 4—5 հոգի ևս, ոմանք ուղղակի պատերից ցած թռնելով՝ վազեցին մըթութեան մէջ, դէպի աղաղակի կողմը:

Ազմուկը Նասրուլլահ խանի քիրունի կողմիցն էր գալիս—արտաքին մեծ դուան լայն փողոցից, կրկնում էր պարբերաբար ու մօտենում էր հետզհետէ ուժգին, աւելի կատաղի դառնալով:

Ազաները առանց կատակի՝ սկսեցին վախենալ: Ոմանք ցած իջան գէնքեր պատրաստելու, իսկ տանուտէրի բացակայութեան ժամանակ նրա եղբայրը, որ հրսկում էր, հրամայեց ծառաներին՝ յամենայն դէպս բոլոր եղբորորդիներին, կանանց ու երեխաներին իմաց տալ, որ եթէ իրաւ, վտանգ չիկէր, կարողանային կողմնակի դռներով ազատուել և ուրիշի տները գնալ:

Իրարանցումը մեծանում էր փողոցում: Ամեն տան տանիքների վրայ սկսեցին ստուերներ երևալ. փողոցի մէջ վազող-վազողի էր:

Տասը բոպէից լետոյ Նասրուլլահի խանի ծառաներից մէկը շնչաւպառ տուն էր ընկնում և գոչում.

—Փախէք, մեր տան վրայ են գալիս...

Այս ձայնը բաւական եղաւ շարժելու ամենքին: Անի, խառնաշփոթութիւն, ազմուկ տիրեց տան բոլոր մասերում:

—Խօսիր, հարցնում էր տանտիրոջ եղբայրը գունատ՝ կանգնած շնչասպառ ծառայի առաջ—ինչ կայ, ինչու մեր տան վրայ են գալիս, ինչ ունին...

—Խէսփուշներ են... և որքան ցնցոտի, լօթի որ կան քաղաքում... Մի ինչ որ զիակ ունին հետները... Բահերով, կացիններով են գալիս... Հայհոյում են, սպառնում են բոլոր պաշտօնեաներին, խաներին սպանել, տները թալանել...

Եւ իրաւ, փողոցի ծայրից լսում էր նորից այնպիսի սոսկալի օւնոց, որ Նասրուլլահ խանի եղբայրը ոտտնեց ու շտապամբ վազեց հարեմխանայի կողմը:

—Շուտ... գոչեց նա վազելով — ետևի դռներից

դուրս, բոլորդ... փախէք, գալիս են...

Աննկարագրելի թէ ինչ եղաւ լետոյ: Կանայք մոռանալով որ առանց սաւանի են, երեսները բաց, շատերը կիսամերկ—ճշտով փախչում էին, ոմն մի արկղիկ կորզած, միւսը շփոթուելուց՝ վերմակ էր քարշ տալիս հետը, աղախինները կաթսաներ էին տանում, ծառաները՝ ինչ որ պատահում էր: Ցատկում էին պատուհաններից, կոխտում թուփ, բոյս, իրար հրում, տղամարդիկ քիչ էր մնում կոխ տային կանանց, մի ծառայ մինչև իսկ դէն շարտեց հարեմխանայի դռնից անցնող իր խանուաներից մէկին և չը նայելով նրա ճիչերին՝ փախաւ...

Երկու երեք հոգի ճգնեցին բանալ Ալիշէ խանուամի բազի դուռը՝ ձեծեցին, բաց անօգուտ: Ներսից փակել էին, որովհետև այնտեղ էլ իրարանցում էր. դէպի աւերակներն էլնող նեղ դռնից աշխատում էին թանգազին իրեղէններ դուրս կրել աղախինները, իսկ Փաթման և սև ստրկուհին մտած իրենց խանուամի երկու թևը, մի սաւանով փաթաթում էին նրան և ճգնում դուրս տանել:

—Ո՛չ, թողէք... գոռում էր Ալիշէն — չեմ գնալ... ո՛չ...

Ու ճշում էր, դիմադրում:

Այդպէս ժամանակ էր ահա, որ փողոցի ծայրում երևացին եկող խուժանի վառուող կերոնները. լետոյ թնդաց կատաղի աղաղակը և խէսփուշներից առաջնորդուած մի ահագին բազմութիւն ցնցոտիների՝ կանգ առաւ Նասրուլլահ խանի մեծ դուան առաջ:

Խէսփուշներն այնքան շատ չէին, որքան նրանց հետևող ցնցոտիները, լօթիները և կատաղի ամբօխը, որ հաւաքուել էին քաղաքի ամեն կողմերից:

Չէր երևում ո՛չ մի կանոնաւոր հազմուած մարդ, չը կար և կամ ամբօխի մէջ էր ծածկուած Մոլլա-Նէջէֆ կուլին: Ամենքից առաջ քալում էր Սէյիդ Հարիբուլլահը, որ երբեմն, աղաղակները լռելու ժամանակ, դառնում էր, բարձրացնում ձեռքերն ու մի քանի բառով գրգռում հետևողներին:

Երբ հասել էին Նասրուլլահ խանի դուան ա-



առջամբոխը կանգ առաւ, կերոնների լոյսով դիակը դրին դռան առաջ, Սէյիդ Հաբիբուլլահը կանգնեց նրա մօտ, ձեռքի կացինով ուժգին հարուածեց դուռը և գոռաց.

— Ե՛յ դուք, անհաւատներ, ժողովրդի արիւնը ծրծող լրբեր, բացէք դուռը և տուէք մեզ մարդասպանին...

— Տուէք մեզ մարդասպանին... կրկնեց ամբօխը: Բայց երբ լուռ սպասեցին պահ մի, տան կողմից ո՛չ մի պատասխան դուրս չեկաւ: Այն ժամանակ Սէյիդը դարձաւ ամբօխին և ասաց.

— Ահա՛, նայեցէք այդ տանը... Ա՛յտեղ է այն աւազակներից մէկը, որ պղծում է մեր օրէնքը, մեր հացն ու ջուրը օտարի ձեռքն է տալիս և նրա պոռնիկ կանայք սպանում ու դուրս են նետում իրենց որջերից մեր երիտասարդներին... Յանուն Մեծ Մարգարէի, ջարդեցէք դռները, թալանեցէք տունը, կոտորեցէք բոլորին և թող Աստուծոյ օրհնութիւնը ձեզ վերայ լինի...

Ասաց, ոստնեց դէպի դուռը, կացնի մի ուժգին հարուած տուեց ու ետ քաշուեց...

Բարձրացաւ կատաղի օռնոց բազմաթիւ բերաններից, լետոյ դուռը ճռնչաց հարուածների տակ, փշրուեց մի քանի բոպէի մէջ և ամբօխը միմեանց հրելով ու կոխկրտելով ներս ընկաւ...

Այդ խաժամուժի մուտքը հարուստ տան մէջ, ջարդն ու թալանը, ուրախ աղաղակներն ու ամանեղէնների փշրուելը մի սոսկալի տեսարան էր, որ վերջանում էր միայն այն ժամանակ, երբ մի հրդէհ, ամեն կողմից վառած, լուսաւորում էր դատարկ սենեակներն ու լցում էր ամեն ինչ՝ որ վառուող էր ընդարձակ շէնքում:

Տան մէջ ոչ ոք չէր մնացել: Ամբօխը գոհ էր և զբաղուած էր թալանով, բայց խէսփուչներն ու Սէյիդ Հաբիբուլլահը գոհ չէին: Վերջինս, հարեմխանայի բազի աւազանի մօտ կանգ առած, սպասում էր տեսնելու մարդասպանին և կամ սպանուածին իբր վրէժ՝ մի քանի դիակներ: Բայց երբ տեսաւ որ արիւն չը կար և

խուժանը իրենց թալանն էր դուրս տանում առանց արիւն թափելու, ելաւ աւազանի կողի վրայ ու մեծաձայն գոչեց.

— Ե՛յ, թալանող անասուններ, որ միմիայն աւարի վրայ ընկնել գիտէք և մոռանում էք վրէժը... Ո՛ւր է մեր հաւատքը օտարին ծախողի դիակը, ո՛ւր է մարդասպանի գլուխը...

— Ոչ ոք չէ մնացել տան մէջ, աղա Սէյիդ, ասաց մօտ կանգնածներից մէկը— փախել են բոլորը...

— Եւ մենք նրանց տունը կրակի տուինք. գոչեց մի խէսփուչ:

— Լա՛ւ ուրեմն... արեց Սէյիդը իջնելով— բաւական վրէժ առինք, այժմ գնանք ուրիշ կողմ...

Ու առանց մի խիլ խակ վերցնելու աւարից, Սէյիդ Հաբիբուլլահը դուրս եկաւ տնից խէսփուչների գլուխն անցած, որոնք աւարներով բեռնաւորուած՝ ժողովուեցան, և ինչպէս մտել էին, այնպէս էլ աղաղակներով դուրս գնացին:

— Գնանք, գոռում էր Սէյիդը կացինը ձեռքին ցնցելով— ժամանակ է բոլոր անհաւատներին ոչնչանելու, այսօր վրէժի օր է...

Այս վերջին բառերն էին, որ լուեցան թաղում և խուժանը դուրս գնաց, թողնելով որ հետզհետէ մեծացող հրդէհը լափէր ամբողջ փողոցի կէսը բռնող շքեղ շէնքը ամեն կողմից...

VIII

Այս բոլորը պատահում էր աշնան վերջերին, երբ զեռ բոլորովին ձիւն չը կար Թէհրանում, եղանակն էլ տաք էր գարնան պէս:

Քէլբէլայի մեծ մօշտէյիդի հրամանը, որ հաղորդում էր Սէյիդ Հաբիբուլլահը խէսփուչներին, միմիայն միւս օրն էր յայտարարոււմ քաղաքի մէջ:

Եւ այդ յայտարարութիւնը, պէտք էր տեսնել, թէ որպիսի ապշեցուցիչ հետեանք ունեցաւ. հետեւանք, որ գուցէ երբէք տեսնուած չէր այդքան որոշ և ո՛չ մի երկրում:



Հազիւ թէ մի խումբ մոլլաներ ու սէյիդներ թէ մղիթներէի, թէ հրապարակների և թէ՛ շուկաների մէջ համարձակ ու բարձրաձայն հաղորդում էին այդ հրամանը, որ անմիջապէս և միահամուռ բոլոր ծխախոտ վաճառողները դարձնելով կողպեցին իրենց խանութները, բոլոր դայուները ցուցանման՝ փշրուեցին կամ մի կողմ դրուեցան, ամէն պապիրոս գետին ընկաւ ու տրորուեց և ամէն, բացարձակապէս ամէն՝ մարդ դադարեց ծխելուց:

Մենավաճառը վե՛րացնելու համար էր մօշտէյիդի այդ առաջարկած, հրամայած ծալրագոյն միջոցը:

Ո՛չ միայն շուկաներում հրամանը այդպիսի լանկարծական հետեանք առաջացրեց, այլ շուտով մօշտէյիդի պատուէրը կայծակի արագութեամբ մտաւ նոյն իսկ Շահի հարեմխանան, ուր նոյնպէս փշրուեցան ծխափողներն ու ղէյլուները. Շահի— իրեն շրջապատում անգամ դադարեցին ծխելուց, թէ և զգուշացան ցոյց անելու ձեռով նետել պապիրոսները, ոտի տակ տրորել ծխախոտ, փշրել ղէյլուներ — ինչպէս այդ անում էին ամէն փողոցի մէջ, շուկայի ամէն խանութ, ամէն անկիւն...

Մեծ մօշտէյիդի հրամանի տարածուելու և ժողովրդի ցոյցը մի հինգշաբթի օր էր:

Այդ օրն իսկ քաղաք պիտի մտցնէին Խէլարդէշտում բռնուած ապստամբ Սէյիդին, որին Սլէմգիր առնուն էին տալիս, և որ լայտնի կերպով քարոզել էր ապստամբութիւն կրօնը պղծող պետութեան դէմ, կիտել էր իր գլխին հարիւրաւոր մոլեռանդների ու ճանապարհի վրայ արիւն և աւեր սփռելով՝ մայրաքաղաքի վրայ էր ուզում գալ:

Նասրէդդին շահը իր սովորական արագ վճռակա՜նութեամբ իսկոյն մի վաշտ զօրք էր ուղարկել, ապրտամբները ջարդուել էին, Սէյիդ Սլէմգիրը բռնուել և այդ օր՝ հանդիսով քաղաք էր բերում:

Վաղ առաւօտեանից ամէնքը շապում էին թօփխանէի հրապարակը՝ ապստամբ գերիի մուտքը տեսնելու:

Սակայն և այդ օրը կատարում էր թօփխանէի մօտ գտնող կրթութեան հրապարակում՝ սովորական շաբաթական զօրահանդէսը:

Շրջապատուած մի ստուար շքախմբով, թագաւորի որդին, որ զօրաց ընդհանուր հրամանատարն էր, Իէրը-ալմաս ծառուղու դարբասից արդէն երևում էր: Դուան կողքին շարուած տասնի չափ թնդանօթաձիգ սուսերամերկ պահակներ անմիջապէս բարե բռնեցին, վեց շեփորներ կերկերացին և արքայորդին ծանրաքալլ մեծաւորական ականակներ նետելով ամէն կողմ, անցաւ խոնարհած գլուխների միջով ու քալլեց դէպի կրթութեան հրապարակը:

Բայց այդ ի՛նչ արանդակ խաժամուժ էր, որ խռնուած՝ սպասում էր Իէրուէգա Ղազուին դարպասի կողքին:

Կիսամերկ, ցնցոտի, հաշմանդամ կանայք, մանուկներ, ծերեր ու երիտասարդներ վիրայից դէմքով, բօբիկ ու աղտոտ, բռնել էին խոնուած ամբոխի երկու շարքի առաջ: Հրում-հրմշտկում էին միմեանց, ոտնատակ տալիս թուլերի, աշխատում էին իրար առաջ կանգնել, միմեանց ետ թողնել...

Պարզուեցին ձեռքեր, երբ աղան մտաւ շարքի մէջ, բարձրացան աղաղակներ: Ֆէրրաշները, որոնք քալլում էին առջևից, աշխատեցին իրենց երկար փայտերով ետ մղել նրանց, կանայք խուպոտ ձայնով շչացին... և արքայորդին ստիպուեց անցնել նրանց միջով:

Չը նայելով կատարուող յուզումներին, Թէհրանի բազմաթիւ մուրացիկները այդ օրն իսկ չէին կամեցել կորցնել, և, ինչպէս սովորութիւն էր դարձել, քաղաքի ամեն կողմերից, լուսածագից առաջ անգամ կիտուել էին այդտեղ «աղայի» անցնելուն սպասելով, որովհետև արքայորդին էլ սովորութիւն էր դարձրել անցնելիս միշտ նրանց մի բուռը զրամ նետել:

Դա սովորական բան էր և մուրացիկներից բացի, շաքիչ մարդիկ էին առ հասարակ հաւաքում հինգշաբթի օրերը արքայորդու անցնելու ճանապարհի վրայ:

Բայց այդ օրը, բացի մուրացիկներից, հրապարակի վեց դարբասներից կոյտ առ կոյտներս էր լցւում բազմութիւնը, տեղ բռնում դատարկ կողմերը և սպասում Սլէմգիրի բերելուն:

Սկզբում, քանի դեռ «աղան» չէր անցել, ամբո-



խի և արքայորդու անցած ճանապարհի վրայ շարուած մուրացիկներին պահակները զսպուած էին պահում: Իսկ երբ անցաւ, գրեթէ վազն ի վազ սահեց նա այդ այլանդակ շարքի միջով, նետեց աջ ու ահեակ մի քանի բուռը դրամ—այն ժամանակ պահակները ետ քաշուեցին և տեղի ունեցաւ մի խայտառակ խառնուրդ:

Գետին ընկնող իւրաքանչիւր դրամի վրայ նետուել էին տասնեակ մուրացիկներ: Կին, տղայ, ծեր, երիտասարդ, խառնուել էին իրար ահռելի և միանգամայն զզուելի կատաղութեամբ: Թաւալում էին ցետի մէջ, բռունցքներով ծեծուում, խածնում էին, ոտնատակ տալիս իրար... ձիչ, հայհոյանք, օւնոց, աղմուկ...

Կանանց ցնցոտի սաւանները ընկել էին, տղայք, խրուած ցետի մէջ՝ ոտնատակ էին գնում:— Մի կողմում մի երիտասարդ գետին էր տապալել մի կնոջ և աշխատում էր նրա բուռն մէջ եղած դրամը կորզել: Կինը գալարում էր, հայհոյում, կծոտում. երիտասարդը հարուածում էր, զզգզում: Մի ուրիշ կողմ երկու ոտաբոբիկ ծերուկներ ճգնում էին հասնել՝ մարդկանց ոտների միջով սպրտող պատանուն, որ յաջողուել էր բաւական դրամ ժողովել ու փախչել:— Մի այլ տեղ երկու կանայք պատին էին սեղմել մի ծերուկու, ճչում էին որ շատ էր ժողովել և որ իրենք կիսամերկ էին, որ այդ գծուծը չը պէտք է գրկէր իրենց: Ապտակ, կամիթ, թուք ու ցետ էին կարկտում նրա վրայ. իսկ ծերուկին անզրգուելի, բռունցքը զրպանի մէջ դրամով, լուռ՝ թոյլ էր տալիս որ ծեծեն, բզկտեն իրեն, բայց ոչ փախչում էր և ոչ էլ ձեռքը զրպանից հանում...

Գտել էր ամբոխը իր զուարճութիւնը: Եւ մարդիկ, ոչ իսկ մտածելով միջամտելու, հեռու կանգնած՝ քրքրջում էին, յաղթողին քաջալերում կանչերով, ծեծուողին ծաղրում սուր խօսքերով:

Մարդկային խորին, ահաւոր թշուառութեան այդ տեսարանը, ստամոքսային անասնական այդ կռիւր ժամանց էր սպասող ամբոխի համար:

Ոչ ոք տեղիցը չը շարժուեց, մի քանի, աւելի այդպիսի բաների սիրահարները, մօտեցել գննում էին, մինչև որ վերջ ի վերջոյ պահակների սպաներից մէկը

գոռաց մուրացիկներին.

— Դէ՛հ, բաւական է, անամօթներ, կորսուէք գնացէք...

— Թողէ՛ք, ձայնեց նրան ամբոխից մէկը—մեզ զուարճացնում են:

Մուրացիկները և ոչ իսկ ուշադրութիւն դարձրին սպային, զօրքերն էլ փորձեցին քշել նրանց, գոնէ բաժանել կռուողներին, բայց հայհոյանք միայն ստացան: Նոյն բանին արժանացաւ նաև հրապարակի կարգապահ Հօսէյն-նայիբը, որ փայտը ձեռքին գորգուալով մօտ վազեց ու սրա-նրա մէջքին հարուածներ իջեցրեց...

Եւ գուցէ դեռ երկար շարունակուէր այդ, եթէ յանկարծ չը լսուէր Լալազարի կողմից երաժշտութեան ձայն, լետոյ մի աղմուկ, որ ալիձև տարածուեց ամբողջ հրապարակում.

— Բերում են, բերում են...

Մուրացիկները իսկոյն ոտքի ելան, ամբոխը սեղմուեց դէպի Լալազարի բերանը և վարկենապէս ամեն ինչ լռեց:

Դարպասից մտնում էր նախ երաժշտութիւնը, որ նուագում էին պարսկական կօզակները, լետոյ երևացին 50 այլ կօզակներ՝ իրենց գնդապետի հետ և հուսկ ուրեմն, հարիւրի չափ փոշոտ, աղտոտ, ցինուորների մէջ տեղում՝ երևաց սպիտակ ձիու վրայ նստեցրած ապրտամբը, որի ձեռքերը կսպուած ետևից՝ շղթան բռնել էր մի սպայ, իսկ ոտները ամրացրած էին ձիու փորի տակ:

Երիտասարդ մարդ էր. չը նայելով սպիտակ հագուստի վրայ դրոշմուած ցետին և փոշուն, չը նայելով հսպարտ փաթոթի կեղտերին և զզգզուած դրութեանը, նրա դէմքը պարզ երևում էր լուսաւորող արևի մէջ:

Ամբոխը սառած, լարուած հետաքրքրութիւնից՝ զիտում էր այդ դէմքը: Սէյիդը ուղղաձիգ, սառը և անտարբեր նայում էր ուղիղ իր առաջ և մի տխուր, բայց արհամարհական ժպիտ խաղում էր նրա կիսաբաց շրթունքների վրայ:

Աւազանի մօտ երաժշտութիւնը լռեց, ամբոխը ետ



քաշուեց և կօզակներն խուճըը իր գերիին հետ մտան Կէրը-Էլմաս ծառուղին: Ժողովուրդը խռնուեց այն կողմ, դարձեալ աղմուկ բարձրացաւ և ամբողջ լայն փողոցը մինչև պալատի դուռը, ազստամբը և ոչ իսկ ուն է քաջալերական բառ լսեց ամբոխից:

Սակայն երբ Շահի մզկիթի առաջից ծուռւմ էին, այստեղ կատարուեց մի դէպք, որ շանթի ազդեցութիւն ունեցաւ:

Յանկարծ մզկիթից դուրս թուաւ մի սպիտակազգեստ երկարահասակ սէյիդ, հրեց հրմշտկեց ամբոխին, ոստնեց պատից դուրս ցցուած պատուանդանի վրայ և գոռաց գերիին.

— Աղջոյն Սէյիդ Միրզա—Քիզա Ալէմգիրին... .

Ալէմգիրը նայեց այն կողմ, գունատուեց, լետոյ ժպտաց և ասաց բարձրաձայն.

— Աղջոյն, սէյիդ Հաբիբուլլահ, ուրախ եմ որ վերջին անգամ տեսնում եմ քեզ... Ես խաղս կորցրի... .

— Իսկ մէնք՝ դեռ ոչ... գոչեց Սէյիդ Հաբիբուլլահը և դառնալով դէպի խռնուող ժողովուրդը, որօտացող ձայնով գոչեց.

— Ով սիրում է Աստծուն և նրա Մեծ Մարգարէին, լանուն Քէլբէլայի մեծ մօշտէյիդին!...

Իսկոյն ձայները լսեցին և ամբոխը կանգ առաւ: Կօզակների գնդապետը ըմբռնեց որ մի նոր բան է կատարուելու յօգուտ գերիին, անմիջապէս դարձաւ ու գոռաց կօզակներին.

— Յառաջ, վազբով... մտրակեցէ՛ք գերիին ձին... .

Բայց Սէյիդ Հաբիբուլլան տեսաւ այդ, կաճակի արագութեամբ նետեց իրեն պատուանդանից ցած և պայթելու չափ բարձր ձայնով գոռաց.

— Մի թողնէք, մահմեդականներ, Քէլբէլայի մօշտէյիդին նախքան է, որ բռնել-սպանել են ուղում... .

Այդ խօսքերը բաւական եղան ալէկոծութեան համար: Հազարաւոր ամբոխը դռոհ տուաւ դէպի կօզակները, որտեղից որ էր երևան եկան գաւազաններ, սրբեր... . Կօզակներն մի խուճըը մտրակեց ձիերին, միւսը նիզակները դէպի ետ՝ դէմ տուին... . Իսկ Սէյիդ Հաբիբուլլահը, որ ոտքի էր ելել ընկնելուց, ձեռքերով շի-

փոր կազմեց բերնի կողքերին և գոռաց դէպի ամբոխը.  
— Հասէ՛ք, խէսփուշներ... .

Իսկոյն ամբոխի գլխների վրայով գրեթէ, գանազան կողմերից դուրս նետուեցին մի խուճը ալլանդակ ցնցոտիներ, որոնք վրայ տուին կօզակներին: Աղմուկ, ճիչ, ոտի տակ ընկնողների աղաղակները, փայտերն ու նիզակները, նետուած դաշոյններն ու բռուկնքները խառնուեցին միմեանց ահուելի կատաղութեամբ:

Կօզակները, մի սպայի հրամանի վրայ՝ անմիջապէս ձիերի գլուխը դարձրին, լետոյ միմեանց սեղմուեցին— փողոցի լայնքը բռնելով և նիզակները հաւասարապէս դէմ տուին խուճող ամբոխի առաջ... .

Մինչ այդ, նրանց ետևի կողմում գնդապետը մի ուժգին հարուած տուաւ սրի տափակ կողմով Ալէմգիրի ձիու մէջքին, և խուճըը գերիին հետ սրարշաւ իջան, ձիերովն ուղղակի պալատի դռնով ներս ընկան և մեծ դարբասը շառաչիւնով փակուեց նրանց ետևից... .

Պալատի դռան մօտի պահակները անմիջապէս դուրս լեցուեցին, պարսպի վրայ երևաց նայիբը— Սալթանէի գլուխը և չէր անցել տաս-տասնհինգ րոպէ, որ ամբոխը ջարդուած, ծակծկոտուած, մինչև իսկ տեղացող գնդակներից հալածուած՝ քշուեց երկու կողմից պալատի փողոցների մէջ և կէս ժամ լետոյ պալատի ամբողջ թաղի դարբասները շառաչիւնով փակուած էին բոլոր անցորդների առաջ:

Ալէմգիրը կորսուած էր այլ ևս, ժողովուրդը, Սէյիդ Հաբիբուլլան և սկզբից դարանի կեցած խէսփուշները չը կարողացան ազատել նրան, շնորհիւ տեղին:

Սէյիդ Հաբիբուլլահը տրորուած, հրուած ու ջարդուած դուրս նետուեց ամբոխից և ուշքի եկաւ միայն այն ժամանակ, երբ տեսաւ որ Էնդէրոււնի դռնից դուրս՝ գտնուած է Նասրի խիավանում:

Կանգ առաւ, յուսահատաբար ձեռքերը ծնկներին խփեց և քիչ մնաց լաց լինէր: Այնքան լաւ պատրաստուած գաւազրութիւնը, շնորհիւ ամբոխի խռնուելուն և այդ պատճառով էլ՝ իր ուշանալուն՝ անյաջող եղաւ:

ձգնել էր պատուել ամբոխը մօտ գնալու կօզակներ-



րին, գերին, բայց ամեն անգամ ետ էր հրել նրան ժողովուրդը իր հեղեղումով և նա հազիւ հազ, արիւնքերտինք մտած՝ կորոզացել էր հասնել կօզակներին Ծահի մէջիդի կողքին... և ահա ամեն ինչ այժմ ոչնչացել էր, ժողովուրդը փչրուել էր տեղի նեղութիւնից, դէմ տուած զօրեղ զինուորական շղթայից և հալածուած էր թողնելով պալատ մտցնելու Ալէմգիրին, որտեղից անշուշտ նա ողջ չէր դուրս գալու:

Յուսահատաբար կքուեց մի ծառի տակ և ծունկները տրորելով շուրջն էր նայում:

Խէսփուշներն անգամ չը կային: Ամբօխի հոսանքը ցրուել, միմեանցից բաժանել էր նոցա ևս...

## IX

Մինչ այդ, Սէլիդ Ալէմգիրին, որ իսկապէս կոչուած էր Աղա-Միրզա Բիգա, մտցրին արտաքին բազից դէպի ներս՝ Ծահի սրահը, ուր թագաւորը իր մինիստրների հետ նստած խորհրդի սրահում՝ սպասում էր:

Պահ մի աղմուկը, հրացանաձգութիւնը ցնցել էր նոցա, ամենքը վախեցած ու շփոթուած շարժուել էին դուրս վազելու, բայց շուտով լայնուեց նսիբը՝ Սալթանէն և հանդարտեցրեց՝ տեղեկացնելով Ծահին եղածները, հաղորդելով որ խուժանը արդէն ցրուած է և Արքի (պալատի թաղի) դարբասները փակուած ու պաշտպանուած նրանց առաջ,

Ծահը դէմքը կնճռեց, պահ մի լռեց, յետոյ խիստ ձայնով ասաց,

— Եւ ո՞վ էր այդ սէլիդը որ զրգռում էր ժողովրդին:

— Յայտնի չեղաւ, Զերդ Մեծութիւն...

— Լաւ, ներս բերէք ապստամբին:

Ներս բերին Ալէմգիրին, որի ոտները շղթաներից ազատել էին, բայց ձեռքերը դեռ ետեւից կապուած էր և չուանի ծալրը բռնել էր Սաադը-գօվիէն— այն պաշտօնեան, որ ուղարկուած էր ապստամբի դէմ զօրքով:

— Սֆֆէրիմ... ասաց շահը խորը գլուխ տուող պաշտօնեային— բարաքեալահ... Այժմ քանդիր դորա

ձեռքերը և գնա ինքդ հանգստացիր...

Յետոյ երբ քանդել էին և Սէլիդ Ալէմգիրը անշարժ մնում էր դռան մօտ, Ծահը ակնոցները դրեց աչքին և պահ մի սկսեց խոր գննել նրան օտից մինչև գլուխ:

Սէլիդը մնում էր լուռ, անշարժ և քիչ գլուխը խոնարհեցրած:

— Սջայիբ... (զարմանք) խօսեց վերջապէս Ծահը — սո՛ է այդ նշանաւոր՝ Ալէմգիր կոչուողը... սա խօ մի ջահել լակոտ է...

Յետոյ դարձաւ նրան և ասաց խստութեամբ.

— Դո՛ւ ես, որին Ալէմգիր անունն են տուել... Խօսիր... Դո՛ւ ես Ալէմգիրը, որ յանդգնեցար իմ դէմ ելնել... Պատասխան տուր:

Ալէմգիրը մի վայրկեան նայեց Ծահին ուղղակի և ասաց.

— Ինձ այդպէս են կոչում... Իսկ ես՝ ոչ:

— Իսկ դու ո՞չ Իսկ ի՞նչ ես կոչում դու քեզ, ապրստամբ, թէ՛ մարգարէից ուղարկուած:

— Ես ինձ կոչում եմ Սէլիդ Միրզա Բիգա, մարգարէի սերունդից...

— Հը՛մ... Իսկ ո՞վ է ուրեմն այդ Ալէմգիր ասածը...

Սէլիդը դարձեալ լուռ մնաց մի րոպէ և գլուխը կրճքի վրայ խոնարհած, յետոյ նայեց ինքնակալին ու խորունկ շեշտով խօսեց.

— Թող Աշխարհիս աղօթարանը <sup>1)</sup> թոյլ տայ ինձ մի քանի լաւ խօսքեր ասելու նրան: Խօսքեր, որոնք ո՛չ թէ իմ— Սէլիդ Միրզա Բիգայի կողմից են, այլ իսկական ալէմգիրի, բուն ալէմգիրի կողմից...

— Սջայիբ... դարձաւ Ծահը Սաղրազամին— ուրեմն այս մարդը ինքն-իրեն ալէմգիր չէ ուզում կոչել... տեսնում էք, բաւական համեստն է եղել հարամզադան...

Ու ծիծաղեց: Պալատականներն էլ ծիծաղեցին:

— Ո՛չ, Զերդ Մեծութիւն, խօսեց Սէլիդը— ես ինձ այդպէս ո՛չ անուանել եմ և ո՛չ կանուանեմ... Այդ

<sup>1)</sup> Ծահին տրուող սովորական տիտղոսը:



մեծ անունը իրաւամբ միմիայն մէկին է պատկանում  
աշխարհումս և այդ «միմիայն մէկը» — ժողովուրդն է...

Շահը, որ ժպիտը դէմքին սպասում էր շողքոր-  
թութիւն լսելու իր հասցէին և արդէն մտքում ողոր-  
մելի էր գտնում ապտամբին, ապշեց լսելով այդ խօս-  
քերը: Մարտուեց ամբողջ վրայ և մի «հըմ» արձակեց:  
Յետոյ նորից ակնոցը ցցեց բթին և աւելի ուշադրու-  
թեամբ սկսեց զննել խօսողին:

— Այո՛, շարունակեց սէյիդը — աշխարհում միմիայն  
մի հատ ալէմզիր (աշխարհակալ) կայ, ամէն տեղ, հիւ-  
սիսից հարաւ, արևմուտքից արևելք միմիայն նա է որ  
խսկական աշխարհակալն է... ժողովուրդն է այդ և ա-  
հա այդ նո՛յն ալէմզիրն է որ խօսեց իմ բերանով՝ մեր  
իրաւունքները բռնաբարող, մեր կրօնը պղծող և  
մեզ օտարին ծախողների դէմ...

Շահը իջեցրեց ակնոցը և լուզուած ոտքի ելաւ:  
Յետոյ մի քանի քայլ առաջ գնաց ու ասաց.

— Մտրդ, դու բաբի չէս արգեօք:

— Ո՛չ երբէք, Ձերդ Մեծութիւն... ես մարդ եմ  
և այս բոպէիս Ալէմզիրի, խսկական Ալէմզիրի բերանը...  
Շատ եղաւ մեզ այս բոյրը, թագաւոր, շատ եղաւ,  
խնայիր քո ժողովրդին, խնայիր երկիրը և խնայիր մեր  
սուրբ կրօնը... ժողովուրդը, ճշմարիտ է ուղտ է համ-  
բերատար, բայց երբ չափազանց են տանջում նրան —  
առիւծի է փոխուում... Բո պաշտօնեաները, ո՛վ Աշ-  
խարհիս աղօթարանը, քո մեծամեծները խաբում են  
քեզ և ոսկիների փոխարէն օտարին ծախում մեր երկի-  
րը ու կրօնը, մեր իրաւունքներն ու արտօնութիւնը...  
Գալիս է այն օրը, երբ պարսիկը իր հողի մէջ օտար,  
ստրուկ և ֆակիր կը համարուի... Այս բոպէիս իսկ  
թագաւոր, նա մռնչում է սաստիկ ցաւերից, տառա-  
պում է, ուտելու հոց չունի... պաշտօնեաներդ եզիդ-  
ների նման կեղեքում են նրան անհաշիւ ու անգթօրէն.  
Խլեցին մեր ամէն ինչը... Ո՛չ տուն մնաց, ո՛չ իրա-  
ւունք և ո՛չ շարժուելու տեղ... Այժմ զուբանն են  
ծախում ինզլիզին՝ նրանց ոսկին առնելով... Զգուշա-  
ցիր, թագաւոր, Ալէմզիրը գարթնել է, քիչ յետոյ կը  
մռնայ կտտաղութիւնից, ճանկերը կը պարզի և այլ

ևս ո՛չ որ նրան դէմ դնել չէ կարող...

— Բայց... բայց... ասաց Շահը ևս քանզև լու-  
զուած — այս սէյիդը լիմար չէ եղել և հիտնալի էլ  
պարսկերէն է խօսում...

Յետոյ դարձաւ մինիստրներին և ասաց քմծի-  
ծաղով.

— Տեսնում էք ինչպէս գիտէ ձեր կերած կաշառք-  
ների մասին, ձեր կեղեքումները, ագահութիւնը... Բարա-  
քեալլահ Սէյիդ... դէ՛հ, տեսնենք, էլ ուրիշ ինչ գի-  
տես... գուցէ և այն գիտես որ եթէ ինզլիզներից ետ  
վերցնեմ տուածս արտօնութիւնը, պիտի միլիոններով  
տուգանք վճարեմ... ինզլիզը, խօ գիտես, կատակ չի  
սիրում անել... հը՛, գիտես այդ...

— Ձերդ մեծութիւնը ծիծաղել է սկսում ինձ վը-  
րայ... թո՛ղ լինի. ես և ամբողջ ժողովուրդը գիտենք  
այդ... բայց ժողովուրդը համաձայն է վճարել  
այդ միլիոնները, միայն թէ օտարների չը տրուի  
մեր իրաւունքները, չը սահմանափակուի մեր աղա-  
տութիւնը...

— Այդպէս... իսկ դու ունիս այդ միլիոնները:

— Ալէմզիրը ունի... ասաց հպարտութեամբ Սէյի-  
դը — նա կը տայ... ժողովիւր նոցա մեծերին, կանչիր  
նոցա առաջնորդներին և պիտի համոզուես որ ժողո-  
վուրդը իր շորերն իսկ կը ծախէ, միայն կուզենայ իր  
իրաւունքները պահպանել և չը ծախել նրան օտարա-  
հաւատներին...

Շահը մի վայրկեան լուռ նայեց նրան, լետոյ դար-  
ձաւ Սադրազամին և ասաց.

— Յիմար չէ, ես ու իմ Աստուածը... խելօք է  
ձեր բոլորիցդ... խելօք է և լաւ խորհուրդներ է տա-  
լիս. Սադրազամ, աչքի առաջ ունեցիր...

Ապա մէկէն դարձաւ Սէյիդին և ասաց խստու-  
թեամբ.

— Իսկ դու չէս այն, որ ասել է թէ պիտի կոր-  
ծանել իմ թագաւորութիւնը, դու չէս նա, որ գալիս  
էր ինձ դէմ կուռելու: Ասա՛, ուրանում ես այդ:

— Ոչ, թագաւոր, ճիշտ է, այդ ես էի... բայց քո  
նոյն իսկ մէկ պաշտօնեայի լանցանքի պատասխանա-



ուռութիւնը ընկնում է քեզ վրայ, իսկ քո պաշտօնեաները...

— Լսում էք, մարդիկ, զոչեց Շահը պալատականներին, ապա դարձաւ Սէլիդին և ծիծաղելով աւելացրեց.  
— Աֆֆէրիմ, երևի գիտես որ մեռնելու ես և դրա համար վճուել ես այդպէս խօսել:

— Եթէ գիտենայի որ կապրեմ— դարձեալ այս նույնը և աւելի խիստ խօսքեր կասէի...

— Եւ պիտի ապրես... քայլեց դէպի նա Շահը— պիտի ապրես, սակայն մինչև այն օրը, երբ ապացուցանեմ քեզ թէ Սլէմզիբը կոչածդ ամբօխը մի նախիբ է, որին ուզածս ժամանակ և ուզածս տեղը կը քշեմ. կը ջարդեմ, կը ոչնչացնեմ... և այն օրը, երբ Սլէմզիբը ասածդ ոչխար դառնայ ոտներս լզելու չափ, այն օր ես նրան կը բերեմ քո կախաղանի տակ՝ քեզ վրայ ծիծաղել տալու համար... և այժմ, զնա... Տարէք դրան բանա.

— Զգուշացիր, թագաւոր, խօսեց սէլիդը, երբ սպասաւորներից մէկը նրան էր մօտենում՝ դուրս տանելու— Սլէմզիբը գօրեց է և... անյաղթելի...

— Կը տեսնենք, կը տեսնենք... Տարէք և լաւ պահպանեցէք դրան... ուրիշ ասելիք ունիս...

— Ոչ. միայն այն, որ Սլէմզիբը պիտի մանչայ... և վայ ձեզ այն օրը. կամ կը փշրուէք և կամ նա իր պահանջածը կատանայ...

— Սյդ մասին կը խօսենք քեզ հետ կախաղան զնայուց մի ժամ առաջ...

Սասց Շահը, ձեռքով նշան արաւ դուրս տանելու, յետոյ մէջքը դարձրեց և մտաւ իր առանձնասենեակը:

Սլէմզիբը կոչուող սէլիդին տարան: Շահը ներս մտնելիս նշան արաւ Սադրազամին իր հետ զնայու և որովհետև բարձրաձայն էր խօսում, սրահի մէջ եղածները պարզ կերպով լսեցին սոյն խօսքերը.

Եւ ո՛չ մէկը, Սադրազամ, ո՛չ մէկը այդ սէլիդի չափ խելք չունիք... իրաւունք ունէր նա. պիտի գայ մի օր, երբ Սլէմզիբը— ժողովուրդը ձեր ազահաբար կերածները բոլոր ձեր քթիցը կը հանի... հեռացէք բոլորդ...

Սյդ ժամանակ էր ահա, որ Սադրազամը ցած ձայնով մի բան ասաց նրան, որից յետոյ պալատականները սոսկումով ոստնեցին՝ լսելով Շահի զայրալիր աղաղակը:

— Ինչպէս... գոռում էր ինքնակալը կատաղի— արդէն .. և ժողովուրդը լսում է, կատարում է...

Պալատականները վախեցած միմեանց երեսի նայեցին: Հասկացել էին: Սադրազամը Շահին հաղորդել էր մօշտէլիդի արգելքը ծխելու մասին և ժողովրդական ցուցերը, պատմել էր նաև Աշտիանցու— Թէհրանի մեծ մօշտէլիդի համակամութիւնը այդ խնդրում:

Պահ մի խոր լուռութիւն տիրեց. ամէնքի աչքը սևեռուած էին Շահի առանձնասենեակի բաց դռանը:

— Կանչել իսկոյն Հաջի-Մուհամէդ Հասան թաջիրբաշուն, <sup>1)</sup> պատժել նրան, որ թող է տուել խանութները փակել... Աքսորել նրան...

Պալատականների դողը բռնեց. ինքնակալը սաստիկ զայրացած էր երևում:

— Թո՛ղ... լուռեց քիչ յետոյ նորից նրա ձայնը— Թո՛ղ այդպէս լինի... Ո՛չ մի խօսք այլ ևս... Կանչել տուր Նայիբը-Սալթանէին... աքսորել թաջիրբաշուն...

Յետոյ, երբ դարձեալ լուռութիւնը տիրեց, սենեակից գլխիկոր դուրս եկաւ Սադրազամը և գունատ՝ ձեռքով արեց ամէնքին իսկոյն հեռանալու:

Բոլորը ոտերի ծայրերի վրայ շտապեցին դուրս ելնել սրահից:

Փոթորիկը սկսուած էր. ամէնքը տխուր, մտախոհ և լուսաբեկ էին, զգալով որ մօտեցել են ծանր օրերը:

## X

Սկսել էր մանր ձիւնել և ցրտերը վրայ էին հասնում. բայց այնպիսի ցրտեր, որոնք միայն մի կամ երկու օր էին տևում, այն էլ ոչ աւելի քան զէրօից մի քանի աստիճան ցած: Տաք չէր— ահա բոլորը, այլ և

<sup>1)</sup> Վաճառականապետ, որ պետութեան կողմից ճանաչուած է իրր դատաւոր վաճառականների և նրանց արածներին պատասխանատու:



ցելս էր, անտանելի ցելս՝ մանաւանդ լւրծուն դարձած շուկաներում և աղտոտ փողոցներում:

Պալատի շուրջը միայն քիչ մաքուր էր, այն էլ որովհետև քարած չէր մեծ մասամբ, հալած ձիւնից ցեխանում էր և եղած աղբի ու տերեւների մնացորդների հետ զգուելի կոյտեր գոյացնում պատերի տակ:

Չը նայելով դրան, Դեկտեմբերի այդ ցուրտ օրը մայրաքաղաքի զանազան կողմերից հասնելով՝ պալատի առաջ չորիներից ցած էին իջնում զանազան կրօնաւորներ՝ շրջապատուած հետիոտն խումբ-խումբ ծառաներով: յետոյ քղանցքները ժողովում և ներս էին մտնում:

Շահը քաղաքումը չէր և Սադրազամը ազգային ժողով էր գումարում, ուր հրաւիրուած էին բարձր ազնուականութիւնից, բարձր հոգեւորականութիւնից և միջին դասակարգից մի քանի յայտնի հարուստ ու ազդեցիկ մարդիկ:

Սկզբից նա յայտարարել էր որ ժողովը կայանում է՝ որոշելու համար թէ որտեղից և ինչպէս պէտք էր վճարել անգլիական մենավաճառի ընկերութեան տուգանքը, քանի որ ըստ հրամանի Շահի, մենավաճառը ջնջւում էր:

Այդ բոլորը կատարուած էր մի շարք կարևոր դէպքերի իբր արդիւնք: Ժողովուրդը յուզուած էր և ցոյցերը էր արդէն սկսել: Կրօնաւորութիւնը արձակ համարձակ գրգռուած էր ժողովրդին՝ ոտքի ելնելու:

Սգտուելով մենավաճառի դէպքից, Պարսկաստանի այդ եթէ ոչ առաջին-գոնէ երկրորդ Շահը—կրօնաւորութիւնը սեղմել էր իր շարքերը, կազմակերպուել, զաղտնի ընկերութեան զօրեղութեամբ ցանցերը մեծացրել, գործակալներն ու դրդիչները բազմացրել և մտադիր էր մի կտրական հարուած տալ Շահի տիրապետութեան և մի անգամ ընդ միշտ զգացնել իր զօրութիւնը:

Սէյիդ Մերզա Բիգա Ալէմգիրը ձեռնարկել էր յայտնի ապստամբութեան՝ նրա քաջալերութեամբ, և, չափազանց ոգևորութեամբն ու արագ, առանց լայն պատրաստութեան գործի սկսելը՝ ոչնչացրել էր նրա շարժումը: Սէյիդ Հարիբուլլահը Քէյրէլայի մեծ մօշտէյիգի

նայիքներից (գործակալ) էր և Թէհրանի բարձր կրօնաւորութեան յանձնարարութեամբ էր ոտքի հանել խէսփուշներին...

Կրօնաւորութիւնը ժողովրդի օգտի զիմակի տակ, յանուն նրա, յենուած ուսուց դեսպանատան քաջալերութեան վրայ ևս, այժմ այն աստիճան յանդգնօրէն հրապարակներում, մղկիթներում և շուկայում ապրտամբութիւններ էր կազմակերպում, որ Սադրազամը ըմբռնեց կացութեան ծանրութիւնը:

Զինու ոյժով անհնար էր դէմ դնել. զօրքն անգամ ընդունակ էր դառնալու մեծ-մօշտէյիգի կողմը, քանի որ, ինչպէս նկատուեց, զօրապետից սկսած մինչև յետին զինուորը ամենայն հպատակութեամբ լսում և կատարում էին մօշտէյիգների հրամանը, փշրել էին իրենց ծխափողները, զայլունները և համարձակութիւնը այն աստիճանի էին հասցրել, որ չէին քաշուած փողոցներում, բազմութեան մէջ՝ հայհոյել մինիստրներին, թագաւորին...

Այս բոլորը շատ լուրջ հետևանքների կարող էին հասցնել: Հնար չկար ուրեմն որևէ միջոցաւ չէզոքացնել կրօնաւորութեան ազդեցութիւնը: Մնում էր մի կերպ զիջանել գոնէ, նախ յուզումները դադարեցնել, սպառնացող ընդհանուր ապստամբութեան դէմն առնել:

Եւ Շահը հեռացել էր քաղաքից ու չը նայելով ուսուց դեսպանատան նամակին վերագառնալու, որովհետև ժողովուրդը մտածում էր քրիստոնէաների կոտորած յառաջացնել—նա ներս չեկաւ, լուր ուղարկեց դեսպանատան որ հոգ չանեն և հրամայեց Սադրազամին շտապել ժողովը գումարելու:

Ուրբաթ օր էր ժողովի օրը նշանակուած, Դեկտ. 19-ին: Ժողովուրդը ներկայացնող այդ խորհուրդը գումարում էր Շահի դիւանխանէն, որ երէկուանից պատրաստուած էր դրա համար: Սադրազամը առաւօտ շուտով պալատումն էր բոլոր միւս մինիստրների հետ և ընդունում էր եկողներին:

Հետզհետէ սենեակ էին մտնում սպիտակ փաթոթներով ախօնդներ, կապոյտ և կանաչ ապարօշներով



սէյիդներ, խոնարհուած Սաղրազամի և մինստրների առաջ, մի քանի բոպէ փոխադարձ հաճոյախօսութիւններ անուծ և երբ սրահը լիքն էր, մեծ մինիստրը իր կողքին կանգնած մի բարձր կրօնաւորի դարձաւ և ասաց.

— Ինչպէս էք կարծում, չը սկսենք:

— Ինչպէս Զերդ վսեմութիւնը կը ցանկալ. բաւական ժողովուել են:

— Այո, գրեթէ բոլորը կան:

Եւ դառնալով խումբ առ խումբ միմեանց հետ խօսողներին, ասաց բարձրաձայն.

— Աղաներ, սկսենք... համեցէք տեղ բռնէք...

Ամբողջ տասնևհինգ բոպէ տեւեց մինչև միմեանց հրամային վեր ու վար, յետոյ տեղաւորուեցին այնպէս, որ Սաղրազամի աջ կողքը բռնել էին երկու յայտնի ախօնդներ, ձախը մի նշանաւոր սէյիդ, յետոյ մինիստրները, ապա միւս կրօնաւորները և ամենից ցած՝ մայրաքաղաքի յայտնի հարուստ վաճառականներն ու սեղանաւորները:

Բոլորը նստել էին դետին, պատերի տակ փռուած թաւշեայ ներքնակների վրայ:

Երբ տեղաւորուեցին և մի քանի բոպէ լուութիւն էր տիրել, մեծ վեզիրը շարժուեց, գրպանից կլոր փաթաթած մի թուղթ հանեց, դարձաւ ժողովականներին և ասաց.

— Աղաներ, Աշխարհիս աղօթարան, Իրանի մեծ Շահընշահը — որի կեանքը Աստուած երկար պահպանէ...

— Ամէն... ասացին ամենքը:

— ... Բարեհաճեց լսել մեծ մօշտէյիդների և ժողովրդեան խնդիրը և վճռեց լուծել անգլիական ընկերութեան տուած ծխախոտի մենավաճառը... Թաւրիզում արդէն դա կատարուած է և եթէ այդ ընկերութիւնը դեռ պահուած է իր ծառայողները և առևտրականներից առած թամբաքուն — պատճառը, ինչպէս բոլորդ գիտէք, այն է, որ Աշխարհիս աղօթարանը ստորագրութիւն է տուել Անգլիային, եթէ ջնջի մենավաճառը, իբր վարձատրութիւն՝ պիտի հատուցանէ նրանց կրած վնասները... Եւ իրաւ, դուք էլ լաւ տեսնում էք որ ինգլիկները ամբողջ Իրանում մեծ ծախսեր են արել

և չեն կարող թողնել այնպէս ու առանց մի օգուտի՝ հեռանալ: Բացի դրանից, Իրանը չի կամենալ որ իր ինքնակալը տուած խոստումը չը կատարի, այլ և Ինգլիզը երեխայ չէ, որ մենք ձեռքիցը ամեն բան խլենք, իրեն էլ գլխին խփենք ու երկրից դուրս ձգենք... Մի խօսքով, հարկաւոր է այդ մարդկանց վնասները տալ և ճանապարհ ձգել... Այնպէս չէ, աղա... դարձաւ նա կողքի բարձր կրօնաւորին:

— Ի հարկէ. շտապեց ասել մոլլան — այդ այդպէս է. ինչքան որ անհաւատ է ինգլիզը, բայց երբ մենք վնաս ենք տուել նրանց, պիտի վճարենք...

— Այսինքն, աւելացրեց միւս կողքի սէյիդը — նախ պիտի ետ տանք ի հարկէ առածներս, յետոյ վնասներն էլ վճարենք...

— Իսկ ինչ է նրանց պահանջը. խօսեց ցածի կողմից մի սէղանաւոր — եթէ մի քանի հազար թումանի...

— Ո՛չ, ժպտաց Սաղրազամը — այստեղ մի քանի հազարը ոչինչ չի անիլ... միլիոններ են պէտք:

— Անշուշտ, խօսեց մեծ մոլլան — Աշխարհիս աղօթարանը իր գանձարանում լի փող ունի — որին Աստուած միշտ լի պահի — և կը վճարի ու Իրանը կազատի անհաւատների պղծումներից...

— Մի քանի միլիոնը ինչ բան է Զահնշահի միլեարդներով լի գանձարանի առաջ. խօսեց մի ուրիշ մոլլա — վճարենք և պրծաւ գնաց:

— Շահի գանձարանը, ասաց Սաղրազամը — այնքան հարուստ չէ որ կարողանայ մի անգամով 12 միլիոն թուման տուգանք վճարել...

— Ինչպէս... կանչեց ներքևից մի վաճառական — 12 միլիոն... Իս խօս ամբողջ Իրանն արժէ...

— Ասա աստաֆրուլա՛հ <sup>1)</sup> Հաջի Միրզա Լիւթֆի, ձայնեց մի սէյիդ. Իրանը միթէ այդքան քիչ ես գնահատում...

— Տասներկու միլիոն!... ձայնեցին ամեն կողմից: Յետոյ գլուխներ սկսեցին դէպի միմեանց կռանալ, փսփոսոց լսուեց այս-այն կողմից և վերջապէս մոլլանե-

<sup>1)</sup> Քաւ լիցի:



րից մէկը քիչ բարձր ձայնով ասաց.

—Մթթե անգլիացիք արդէն իրենց պահանջը արել են թղթով:

—Թղթով ո՛չ, սակայն ինձ տեղեկացրել են և Աշտարհի աղօթարանը գիտէ որ պահանջուած գումարը դորանից պակաս չէ լինելու:

Այստեղ սկսեց մի վիճաբանութիւն, որ հետզհետէ տաքացաւ և ընդհանուր դարձաւ: Աիճուճ էին թէ անգլիական ընկերութիւնը խսկապէս այդքան պիտի վնասէր և թէ ինչ ունի նա արած, որ պահանջում է այդպիսի խոշոր գումար: Եղան առարկութիւններ, տաքացան, հայհոյեցին անգլիացիներին և հուսկ ուրեմն հասան այն հարցին, թէ որտեղից և ինչ միջոցներով կարելի էր ձեռք բերել պահանջուած գումարը:

Այն ժամանակ մինիստրներից մէկը, որ անշուշտ սկզբից ունէր Սադրազամի խօսքը, զգուշութեամբ մէջ ձգեց մի նոր հարկ սահմանելու և կամ անգլիացիներին երկրի մէջ մի ուրիշ արտօնութիւն տալու խնդիրը:

Այս վերջին կէտը հանդիպեց զօրեղ զիմադրութեան, մանաւանդ երբ Քէլբէլայի մօշտէհի զիմադրողներից մէկը խօսութեամբ գոչեց.

—Սե՛ծ մօշտէհիդը պահանջ է դնում ո՛չ միայն իլիւ օտարների ձեռքից թամբաբուլի մենավաճառը, ա՛յլ և բոլոր այն արտօնութիւնները, որոնք արուել են անհաւատներին... Իրանի մէջ միմիայն Իրանցին իրաւունք ունի երկիրը շահագործելու և ուրիշ ոչ ոք:

Պահ մի ամենքը լռեցին՝ լսելով ամենքից և մանաւանդ ժողովրդից պաշտուած մօշտէհի հրամանը:

—Նոյնը և ես կասեմ. ասաց Թէհրանի մօշտէհիդ Միրզա Հօսէյին Աշտիանու գործակալը:

Աշտիանին ինքը չէր կարողացել պալ, որովհետև շատ ծեր էր:

Խնդիրը կենդրոնացաւ ուրեմն միմիայն եկամուտի նոր աղբիւրներ գոյացնելու վրայ:

Եւ այստեղ էր ահա, որ յանկարծ մի երկարահասակ սէյիդ, բարձրացրեց գլուխը և ձայնեց.

—Թող շնորհ անի ինձ մե՛ծ Սադրազամ Էմին-Սօլթանը և պատկառելի ժողովը՝ լսելու:

Իսկոյն ամէն շուրջ դադարեց և ամէնքը սէյիդի կողմը դարձան:

—Ո՛վ է դա, հարցրեց Սադրազամը կողքի կրօնաւորին—ես դրան չեմ կանչել և չեմ էլ ճանաչում:

Կրօնաւորը ժպտալով խոնարհուեց ու ասաց.

—Այդ սէյիդը ինձ—ճառայիդ հետ է եկել... Քէլբէլայի մե՛ծ մօշտէհիդից յատկապէս եկած գործակալն է... Սէյիդ աղա Հաբիբուլլահ...:

Սադրազամը գունատուեց և շրթունքը կծեց: Ահա թէ ինչ. մե՛ծ մօշտէհիդի կողմից յատուկ գործակալներ են մտնում մայրաքաղաք և իրեն այդ յայտնի չէ: Յետոյ, զէմքը կնճուեց և խստութեամբ նայեց մինիստրներից մէկին:

Բայց սէյիդը ելել էր տեղիցը, ցցել երկար հասակը, ձեռքը պարզել և խօսում էր այսպէս.

—Միակ մի հատ հնարք կայ: Մենք ոյժ չունինք անհաւատներին վճարելու մեր երկրից, ոչինչ չը տալու նրանց... Ինգլիզներն են էլ շատ լաւ գիտեն մեր թողլ լինելը և եթէ նոյն իսկ վնաս էլ կրած չը լինեն, կանեն մեզնից այդ միջոցները... Պիտի տալ—ահա միջոցը. և պիտի տան այդ գումարը՝ նախ Շահնշահի գանձարանը և երկրորդ այն մարդիկ, որոնք մեր արտօնութիւնները ինգլիզներին տալու համար մե՛ծ փողեր են վերցրել...:

Այս խօսքերը շանթի նման ընկան ժողովականների վրայ: Մինիստրները շարժուեցին, Սադրազամը ուզեց օտքի ելնել, բայց սէյիդը դարձաւ զէպի նա և գոչեց.

—Ես չեմ գրպարտում. սկսած ձեզնից, Էմինը Սուլթան, մինչև վերջին մինիստրը հարիւր հազարներով կաշառքներ էք ստացել ինգլիզներից... Նախ վերադարձրէք այդ գումարը, իսկ մնացածը ժողովուրդը պատրաստ է տալ...:

Սադրազամը զայրացած օտքի ելաւ, նոյնպէս և մինիստրները, յետոյ բոլոր ժողովականներն էլ և խառնուեցին իրար: Մե՛ծ մինիստրը մի ակնարկ նետելով եղածի վրայ, զգաց որ ամէն ինչ կորսուած էր և շտապեց կողքի դռնով դուրս նետուել: Նրան հետեւեցին



մինխտրները, որոնցից լետոյ սրահի մէջ բարձրացաւ մի աղմուկ. սէյիդ Հաբիբուլլահի ձայնը երբեմն գերիշխում էր, երբեմն մի ուրիշ մոլլայի գայրացկոտ խօսքերն էին լսուած և հուսկ ուրեմն, խառն ի խուռն, ժողովականները միմեանց հետ վիճելով՝ սկսեցին դուրս գնալ, նստել ջորիները և շտապով հեռանալ պալատից:

Մինչ այդ, Սադրազամը շտապով մտել էր խորհրդարանին կից սենեակը, սպասել որ մինխտրներն էլ գային, լետոյ փակուած էր դուռը և գունատ՝ ասուած նրանց.

— Ամեն ինչ վերջացաւ, աղաներ... պէտք է հեռագրել Շահին քաղաք մտնելու...

Սյդ միջոցին լսուեց մի աղմուկ դրսից, լետոյ դէպի բազը տանող դուռը ուժգնութեամբ բացուեց և մի սպասաւոր ներս մտաւ շտապով ու Սադրազամին տուաւ մի հեռագիր ու ասաց.

— Կազուինից է. հրամայել են ասել որ շատ կարևոր է:

Սադրազամը դողդոջուն ձեռքով պատուեց ծրարը և երբ կարգացել էր, ամէնքը նկատեցին թէ նա ինչպէս աւելի գունատուեց և սկսեց դողալ:

— Աղաներ, խօսեց նա մի վարկեան լուսթիւնից լետոյ, դառնալով մինխտրներին— Ղազուինում խռովութիւն է... Քաղաքապետը փախել է և Թէհրան է գալիս...

Յետոյ ծախեց թուղթը, գրպանը դրաւ, խոնարհուեց ու աւելացրեց.

— Ես գնում եմ Շահի մօտ... Իմաց տուէք այս բոլորը Նայիրը-Սալթանէին...

Ու թողնելով միւսներին խորին անձկութեան և օարսափի մէջ, դուրս նետուեց սենեակից...

Յիրաւի Ղազուինում սկսել էր ժողովրդի գործնական ցոյցը, որ նմանում էր ուղղակի ապստամբութեան:

Մի մոլլա էր եղել սկզբնապատճառը: Բազարում տեսնելով որ մէկը ծխում էր դէլուն, գայրացած խփել ու ջարդել էր ծխելիքը և ծեծել ծխողին: Սա գնացել էր քաղաքապետին գանգատ: Քաղաքապետը ուղարկել էր ֆէրրաշներ՝ բռնելու մոլլային, բայց մոլլան գրգռել

էր ժողովրդեան և այնպէս լաւ, որ ահագին ամբոխը վրայ էր տուել քաղաքապետի պալատի վրայ և սպանացել սպանելու նրան:

Եւ այդպէս էր ահա, որ քաղաքապետը ստիպուել էր փախչել քաղաքից, այն էլ շնորհիւ Չահից այնտեղ աքսորուած Թէհրանի թաղիքաշի Հաջի Սօհամէդի: Ամբոխը թողել էր անցնելու իր օգտի համար աշխատող Հաջի Սօհամէդին կառքով, իսկ նրա կողքին դուռնաւ և մեռեալի պէս նստած քաղաքապետին, լաւ չը նկատելով ծածկուած կառքի խորքում, կարծել էր Հաջիի ընկերներից մէկը...

## XI

Թէև սովորաբար մութ և ամալի են լինում Թէհրանի շուկաները գիշերով և նրա երկար անցքերի բնակիչներն են կազմում նախ՝ շների վոհմակները, լետոյ՝ այս-այն կողմ հսկող ղարուղաններն (բազարի պահապաններ) և վերջապէս ստուերների պէս պատերի տակով սահող-անցնող խէսփուշները—սակայն այդ գիշեր բոլորովին ուրիշ կերպարանք ունէր նա, մանաւանդ պալատին մօտ գտնուող շարքերում:

Ընդարձակ կամարների տակ սոսկալի աղմուկով հնչում էին շների ձայները, որովհետև շարժուն ստուերների խմբեր, լուսաւորուած մի մի աղօտ լոյս սփռող լապտերով՝ արագութեամբ երթեկեկում էին միմի խորշերում, լսուած էին մարդկային աղմուկ, միմեանց հեռուից ձայնելու կոչեր և որը աւելի անսովորն էր— մէկէն հնչում էին ոտնաձայներ որևէ մութ կողմից և խաւարից բարձրանում էին օւնոցներ, բացականչութիւններ ու խառնիխուռն, անորոշ, բայց սպառնազին ազադակներ:

Յետոյ, այդ բոլորը ալիքի նման հոսում էր դէպի մի խորութիւն, անցնում դէպի մի այլ շարք և գնում աւելի հեռուները:

Պահնորդ այլ ևս չէր երևում. այլ ևս չէին լսուում նրանց զգուշացնող կանչերը. միայն շներն էին վրդովուած. հարիւրաւոր շներ, որոնք միահամուռ հա-



չոցներով, արձագանք տուող կամարների տակ, խառնելով իրենց ձայնը մարդկային աղմուկներին՝ դժոխային կերպարանք էին տալիս շուկաներին:

Աղմուկը աւելի շատ էր Սէբեգէ-Մէյդանից ուղիղ դէպի ներքև պարզուող երկար ու լայն շուկայի մէջ: Շուկայի բերնից սկսած, յանկարծ հրապարակ էին ուտնել մթութիւնից հարիւրաւոր այլանդակ դէմքեր, որոնց առջևից քայլում էր մի մոլլա, — կարպետի մէջ փաթաթուած ու վիզը նրա մէջ թաղած սևադէմ անձ և մի ինչ որ հսկայ կիսամերկ, որ ձեռքի փայտն էր ճոճում օդի մէջ և խանութների տախտակեայ փեղկերին ահաւոր հարուածներ իջեցնում աջ ու ահեակ:

Իսկ մոլլան զիլ ձայնով գոռում էր անընդհատ. այնպիսի զիլ, սուր ձայնով, որ շներն անգամ սարսափով կծկւում էին պատերի տակ:

Արոշել որևէ նախադասութիւն այդ ժխորից, այդ խօսուային աղմուկներից՝ շատ դժուար էր հեռուից: Ամէն ինչ խառնուում էր իրար և մանաւանդ արձագանքի թնդիւնը կամարների տակ, ձայնային մշուշի նման ամէն ինչ խեղտում էր իր ծալքերի, ցնցումների մէջ և խառնուփնթօր տանում հեռուները:

Բայց Սոյլա Նէջեֆ Կուլին զիտէր թէ որոնց էր առաջնորդում. եթէ աղմուկում էր, խօսքերի հեղեղ էր զուրս վիժում կոկորդից, այդ՝ ոչ թէ հասկանալի մի բան ասելու համար էր, այլ միմիայն քաջալերելու, ոգևորելու իր աղաղակներով:

Ու յաջողում էր. ոչինչ խաղաղ չէր մնում շուկայի մէջ. խլրտում, վազք, դռների վրայ փայտի ուժգին հարուածներ...

— Է՛յ, փողոցայիններ, է՛յ խէսփուշներ, լութիներ, է՛յ մոխրատան ցնցոտիներ, է՛յ ճշմարիտ միւսիլմաններ. զարկէ՛ք, փշրէ՛ք, գոռացէ՛ք... այսօր կո՛ւր կայ, կոտորած կայ, այսօր փառքի օրն է, յանուն մեծ մօշտէլիդի...

Ահա նրա բոլոր խօսքերը, որոնք կրկնում էին, եռապատկում և որոնցից իւրաքանչիւրը արտասանում էր նա աւելի և աւելի բարձր, զիլ, ահանջ խրլացնող ձայնով...

Երբ այդպէս հարիւրաւոր ամբօխը մոլլայի կատաղի աղաղակներով հասել էր շուկայի մէջ տեղը, ձէթէ ճրագի աղօտ լոյսի մէջ երևաց, որ բոլորը գրէթէ զինուած էին ոչ միայն երկար ցուպերով, այլ և սրերով և մինչև իսկ հրացանի սուլիներով, որոնց ով գիտէ որտեղից էին ձեռք բերել և ցցել երկար փայտերի ծայրերին ու նրանցով աջ ու ահեակ ծակոտում էին ինչ որ պատահում էր — պատ, խանութի դուռ, հաջող շքերի. կործանում էին ձէթի ճրագները, քարու քանդանում տեղ-տեղ վերևից կախուած լապտերները...

— Յառաջ, ցնցոտիներ, գոռացէ՛ք, աղմկեցէ՛ք, է՛յ, խէսփուշներ, հոգիներդ կը հանեմ եթէ որևէ պատ կանգուն թողնէք այն անիծեալ շէնքից... դէ՛հ, գոռացէ՛ք «սալաւթ»...

— Սալաւթ... օւնում էր ամբօխը...

Շուկայի շարքերի հանգուցում նրանց միացաւ մի ուրիշ խումբ ևս նոյն տեսակ աղմուկներով, սակայն աւելի կանոնաւոր և աւելի լաւ զինուած: Նրանց առաջնորդում էր մի սէլիդ, որ ձեռքում ճոճում էր կեռ ու երկար սուր և թնդացող ձայնով կանչում.

— Քայլեցէ՛ք, հաւատացեալներ, այսօր կրօնի լաղթանակի օրն է...

Երբ խմբերի զլխաւորները մօտեցան միմեանց, Սէլիդը բռնեց մոլլայի թևը և շտապով հարցրեց.

— Շատ էք:

— Չորսից հինգ հարիւր:

— Լաւ զի՛ուած:

— Փայտ, սուր, սուլին, ատրճանակ...

— Իսկ բահ, կացին:

— Նրանք ետևից են գալիս... մօտ 50 հոգի...

— Լաւ... գոռացէ՛ք, թող աւելի շտտանան...

— Իսկոյն կը յարձակուենք...

— Իսկոյն... քանի դեռ շէնքը չեն պաշարել զինուորներով...

— Սալաւթ գոռացէ՛ք, է՛յ ցնցոտիներ... դարձաւ մոլլան իր ետևից եկող ամբօխին — ծեծեցէ՛ք պատ, դուռ, շներին զարկէ՛ք, աղմկեցէ՛ք...



— Յառաջ, դարձաւ Սէյիդը իր ետևից եկողներին  
— քար ու քանդ անենք բռնաւորների անիրաւութիւն-  
ները:

— Ու քալեցին դժոխային խառնուրդով, անասելի  
աղմուկներով:

Այս բոլորը այնքան յանկարծակի էր կազմուել և  
այնքան ահաւոր էր, որ ո՛չ մի դարուղի չէր համար-  
ձակուեց շարժուել տեղից: Սէբգէ-մէյդանից դուրս գրտ-  
նուող գիշերային պահակները գգացին որ շուկայում  
ինչ որ բան է կատարուում, իսկոյն իմաց տուին պալա-  
տի շրջապատից ներս եղած զօրախմբին, յետոյ հնչեց  
մի շեփոր Արքի միջից և հուսկ ուրեմն պալատի թաղի  
զանազան կողմերում կերկերացին ուրիշ շեփորներ ևս...

Մինչ Արքը <sup>1)</sup> զարթնում էր, սպաները քնաթա-  
թախ իրար անցած՝ չէր գիտէին եղածը, մինչ բուն պա-  
լատի միջից հարց էին տալիս եղածի մասին և շտապով  
զարթեցնում էին քաղաքագետ—զօրաց հրամանատար  
արքայորդուն... շուկայի միջի զինուած խուժանը, որ  
Սէբգէ-մէյդանի դռան փակուած լինելուն համար նետ-  
ուել էր Զարախանայի փողոցի կողմը—դէպի բանտե-  
րը, արդէն կուտակուում էր նրա պատի տակ և կացին-  
ների հարուածների ձայնը հասնում էր մինչև Շահի  
հարեմխանան...

Յարձակումը բանտի վրայ էր: Երկար չը տևեց.  
տասնևհինգ րոպէի մէջ ջարդել էին դռները, ներս խու-  
ժել, պահապաններին ծեծել, փախցրել և չէր անցել  
ալ ևս տաս րոպէ, որ խուլ աղմուկներից յետոյ յան-  
կարծ մթան միջից փողոց դուրս բերին ձեռքերի վրայ  
բարձրացրած մի սէյիդի և ահաւոր աղմուկը որոտաց.

— Սալաւաթ...

— Սալաւաթ... հնչեց ամէն կողմից:

Յետոյ ամբոխը սկսեց ջարդ ու փշուր անել ամէն  
բան, բայց մէկէն առաջնորդող սէյիդը գոռաց.

— Աերջացաւ... ով սիրում է Սարգաբէին, թող

ետ քաշուի, Ալէմգիրը ազատուած է...

Ապա շտապով մօտ քաշեց մուլլային, մի բան ա-  
սաց նրան և յանկարծ Նէջէֆ-Կուլին ցցուեց երկու  
ոտքի վրայ ու ձայնեց.

— Խէսփուշներ, ինձ մօտ...

Ամեն կողմից սահելով կամ ոտնելով շրջան կազ-  
մեցին խէսփուշները, առին իրենց մէջ մուլլային, սէյի-  
դին և ազատուած բանտարկեալին, ճղեցին ամբոխը և  
անհետացան մթին փողոցներում:

Եւ ժամանակն էլ էր. դիմացից լսուում էին արդէն  
ոտնաձայներ, բարձրանում էր մի մուլթ, պատի նման  
շարժուն գիծ և փողփողում էին հրացաններ:

Զինուորներ էին, որոնք մի սպայի հրամանի տակ  
սուլինները դէմ տուած՝ գալիս էին ամբոխի վրայ:

Ամբոխը, մնացած առանց առաջնորդողների և աղ-  
մուկներով քաջալերողների, խառնիխուռն տեղի տուաւ,  
սպայի հրամանի վրայ ցրուեց կողմնակի նեղ փողոցնե-  
րում և քիչ յետոյ զինուորները հրացանները իջեցրած՝  
միմեանց երեսի էին նայում.

— Բայց ինչ եղաւ, գոռաց սպան—ինչո՞ւ էին ե-  
կել և ինչո՞ւ այսպէս շուտ ցրուեցին:

— Բանտի վրայ էր. ասաց մի զինուոր:

Մօտ վազող բանտի պաշտօնեաները դողդոջիւն  
պատմեցին եղածը:

Գռները ջարդել էին, փշրել Սէյիդ Միրզա Բիգա,  
Ալէմգիր կոչուող բանտարկեալի շղթաները, յետոյ ո՛չ  
մի վնաս չը տալով, ո՛չ մի կաթիլ արիւն չը հոսեցնե-  
լով, ձեռքերի վրայ էին բարձրացրել ազատուածին և  
անհետացել:

— Ո՛վքեր էին, ինչ ամբոխ էր, ո՞վ էր առաջնոր-  
դողը...

— Խէսփուշներ էին...

Սպան դէմքը կնճուեց, հրամայեց զինուորներին  
նրա մտնել, իսկ ինքը պալատ գնաց՝ սպասող Նայիբը-

<sup>1)</sup> Ամբողջ պալատի թաղը, որ պարսպապատ է:



Սալթանէին լուր տանելու:

Շահն էլ զարթնել էր և յուզուած ման էր գալիս սրահում, սպասելով լուրերի:

Նալիբը-Սալթանէն գունատ առաջ եկաւ և պատմեց եղածը:

— Այդպէս. ասաց Շահը— ազատեցին նրան... ուրեմն նա իրաւունք ունէր...

Յետոյ մտախոհ նստաւ, ձեռքով արաւ որդուն՝ հեռանալու և մոմոաց.

— Իրաւունք ունէր հարամզադան .. ես դեռ չեմ ճանաչում ժողովրդին... Ալէմգիրը շարժուած է...

Այս դէպքերն էին տեղի ունենում ահա այն գիշերը, որի լուսանալուց յետոյ էր որ կատարուեց Պարսկական նորագոյն պատմութեան մէջ կարևոր և հետաքրքիր կէտ կազմող դէպքը— ժողովրդի ապստամբութիւնը իր ինքնակալի դէմ:

## XII.

Վաղ առաւօտից ամբոխը խռնուել-բռնել էր պալատի շուրջը: Արքի դռները կիսաբաց էին թնդանօթների հրապարակի կողմից, իսկ զինուորները պստ էին կազմել ներսից. մինչև իսկ մի քանիսը բարձրացել էին դարբասի գլխի բարձր աշտարակների վրայ և այնտեղից դիտում էին ժողովրդի շարժումը:

Այդ միևնույն դրութեան մէջ էր նաև վարի կողմի — Մէյդանը— շահ կոչուող հրապարակի վրայ բացուող դուռը: Մէրգէ-Մէյդանի կողմից, շուկայից ելնելով խրոնուած էին փողոցի մէջ ամէն տեսակ մարդիկ և անցուդարձը լիովին կանգ էր առել:

Յուզուած մտքերը մի պատրուակ էին որոնում և այդ պատրուակը Շահը— ինքը տուաւ:

Անհամբեր, կատաղած գիշերային անցքից և մանաւանդ սաստիկ զայրացած որ ժողովուրդը խել էր Ալէմգիր սէյիդին բանտից, Շահը մտածել էր մի կտրական հարուածով ամէն ինչ վերջացնել և առաւօտ շուտով իր Միրզա Իսսահ, Թէհրանի նոր փոխ-քաղաքապետին՝

ուղարկել էր Թէհրանի մեծ մօշտէյիդի Աշտիանու մօտ: Բացի դրանից նա գիշերով հրամայել էր զարթեցնել և պալատ կանչել Սադրազամին և բոլոր միւս նախարարներին, գոռացել էր, հայհոյել անխտիր ամենքին, խիստ նախատել իր որդի— Նալիբը-Սալթանէին, որ չէր կարողացել ապստամբ սէյիդին մի ապահով տեղ թագցնել, օտները գետնին էր խփել և գոչել:

— Այսօր իսկ վերջ տալ բոլորին, ապա թէ ոչ՝ բոլորդ ձեր պաշտօններից կը զրկուէք...

Միրզա Իսսահը, սիրտը գող ելած Շահի իրեն լանձնած կարևոր պատգամաւորութիւնից, մենակ, առանց թիկնապահի անգամ գնացել էր Աշտիանու մօտ.

Հարիւրամեայ ծերունի մօշտէհիդը, չը նայելով նոր լոյսը բացուելուն՝ զարթուն էր: Քաղցր ժպիտով ընդունեց Շահի պատգամաւորին, հրամայեց կողքին նստել, հրամայեց թէյ բերել և ասաց.

— Ներեցէք որ անկարող եմ զայլուն հրամցնել... հարամ է ծխելը...

Փոխ-քաղաքապետը քիչ կարմրեց, մի քանի խօսք կակաղեց, յետոյ գլուխը կախ, առանց ծերունու երեսին նայելու՝ ասաց.

— Ես ի հարկէ, իմ կողմից. . ոչինչ, ոչինչ չունիմ ասելու. Հազրաթը Մէհտիի ջաննիչին <sup>1)</sup> մեծ մօշտէյիդի հրամանը՝ հրաման է, Աստծոյ պատգամ... Բայց, գիտէք... Աշխարհիս աղօթարան Շահընշահը, — որի կեանքը Աստուած երկար անէ, որ ինքը, ինչպէս գիտէք, բարեպաշտ, մեր սուրբ կրօնի համար ջերմեռանդ...

— Ի հարկէ, գիտեմ, ժպտաց ծերունին միջահատելով — և ինձ շատ ցաւեցնում է նրա լամառութիւնը... Ինքն էլ, փառք Աստուծոյ, լաւ գիտէ որ շէրիաթին դէմ է, ուղղակի կրօնին դէմ օտարահաւատներին ծախել մեր իրաւունքները, միւսիլմանի սեփականութիւ.

<sup>1)</sup> Նշանաւոր մօշտէհիդները համարուած են անհետացած իմամ Մէհտիի հողին կրողը: Ջաննիչին՝ նշանակում է հոգեկիր:



նր... Եստ, շատ եմ ցաւում... բայց ինչ արած, կրօնը աւելի մեծ է, Ղօրանը աւելի յարգելի՝ քան ամէն թագաւոր...

—Բայց. առարկեց փոխ-քաղաքապետը—Աշխարհիս աղօթարանը ցանկանում է այս բոլորին վերջ տալ... Ինքներդ գիտէք և տեսաք որ նա ջնջեց մենավաճառը, ուրեմն էլ ինչ է մնում, չէ որ նա կատարեց կրօնի պատուէրը, ժողովրդի պահանջը... Իսկ ժողովուրդը, ձերդ սրբութիւնը դեռ չէք ուզում ծխել... Ծխող մարդու համար—աւելացրեց նա ժպտելով—գիտէք, շատ դժուար է այսքան երկար դիմանալ առանց բարկանալու, խենթութեան նման բաներ... այ, ժողովուրդն էլ հէնց այդպէս է... չը ծխելուց...

Մօշտէհիդը լրջացաւ, նայեց նրան պահ մի, լետոյ ասաց.

—Ձերդ վսեմութիւնը Եահի կողմից հրաման ունի ինձ տալու:

—Ո՛չ, Աստուած ո՛չ անի, ինչո՞ւ հրաման... Կբէլը ալամը միայն խնդրում է ձեզ սկսել ծխելու և օրինակ լինելու ժողովրդեան, որ այս բոլոր խռովութիւնները... Գիշերս, օրինակ, բանտի վրայ են տուել, պահապաններ սպանել, մի ապստամբի ազատել...

—Լսել եմ. ասաց մօշտէհիդը—բայց ոչ մի կաթիլ արիւն չէ թափուած... Իսկ ազատուողը Քէլբէլայի մեծ մօշտէհիդի նախնի է, որին չէր կարելի բանտարկել... Եահը այդտեղ էլ սխալ է գործել... բայց ես չեմ ծրխիլ... Քէլբէլայի մեծ-մօշտէհիդին է պատկանում վերացնել արգելքը. և այդ արգելքը կը վերջանայ, եթէ օտարականների ձեռքից ամէն ինչ խլուի և մեր, ժողովրդեան իրաւունքները վերադարձուի մեզ...

Փոխ քաղաքապետին, մօշտէհիդի լկտրուկ և քիչ խիստ ձայնով ասուած այդ խօսքերից ետոյ, մնում էր միայն ոտքի ելնել և մեկնել, սակայն նա նստած մնաց և գլուխը մտախոհ՝ խոնարհեց կրծքի վրայ:

Դա զարմացրեց կրօնապետին. և երբ երկուսն էլ քիչ լուռ էին մնացել, ասաց.

—Ուրիշ էլ ասելիք ունիք... աղօթքիս ժամանակն է...

Փոխ-քաղաքապետը ոտքի ելաւ ծանրութեամբ, լեարդ գունատ խոնարհուեց և հազիւ լսելու ձայնով մըմնջաց.

—Աշխարհիս աղօթարանը հրամայեց ինձ յայտնել որ եթէ չէք ուզում ծխելը սկսել, հարկաւոր է ձեզ հեռանալ քաղաքից և գնալ իր նշանակած տեղը...

—Ա.քսո՞ր... ժպտաց մօշտէհիդը—ինչ կայ... Ասացէք Եահին որ ես կը գնամ, որովհետեւ ծխել չեմ կամենում...

Յետոյ վերցրեց գետին դրուած Ղօրանը և բաց արաւ: Փոխ-քաղաքապետը խոնարհուեց և դուրս գնաց:

Սակայն մօշտէհիդը սենեակում մենակ չէր. բացի դրանից, բաց դռներից բոլոր ծառաները ամեն ինչ լսել էին: Եւ չէր անցել կէս ժամ, որ լուրը տարածուել ցնցում էր ամբողջ քաղաքը:

Ժամը 10 ի մօտերը արդէն լի էր թէ Թօփխանէի հրապարակը և թէ Արքը շրջապատող փողոցները: Աշտիանուն աքսորելու լուրը բերնէ բերան անցաւ—տարածուեց, լուզուած ամբոխը, շարքերը սեղմած և սպանազին՝ իրար անցան, մուլաններ ու սէլիդներ բացարձակ քարոզում էին յարձակուել պալատի վրայ, գնալ Եահի մօտ, իրենց բողոքն ու պահանջը դնել...

Ապստամբութիւնը սկսում էր մեծ, ահաւոր չափերով:

Գեսպանատները սկսեցին լեցուել քրիստոնեաներով, անգլիական դեսպանատունը զինուեց, թնդանօթներ հանեց ու լեցրած՝ պատրաստեց իր դռան աշտարակների վրայ, իսկ Մենավաճառի ընկերութեան գրասենեակը անմիջապէս դատարկուեց, որովհետեւ մի սպանազին ամբոխ, արդէն ազազակել սկսած՝ քալում էր դէպի շէնքը:

Պալատում Եահը իր պարտէզն էր իջել, անհանգիստ քայլում էր ծառուղու մէջ, ձեռքի փայտով ծառերի բները ծեծում անխօս և մռայլ, մինչ Սադրագամն ու մինիստրները միմեանցից հեռու սպասում էին



և ոչ ոք չէր համարձակուում մի բառ արտասանել:

Այսպէս տեղեց մի քանի ժամ, դրսից փոքր առ փոքր ամբոխի ձայնը բարձրանում էր և ժամը 1 ի մօտերն արդէն մի ահաւոր աղաղակ գալիս էր ցնցելու պալատը:

Բազարի մուտքից, Սէբլէ-Մէյդանից տրուեցաւ ժողովրդեան առաջ գնալու նշանը:

Մի սէյիդ էր այդ, մի երկարահասակ երիտասարդ, որ ճղեց բազմութիւնը, ելաւ մէյդանի դռան պատուանդանի վրայ և գոռաց.

—Յանուն Մեծ մարգարէի, Իմամ Մէհտաբի և նրա ջաննիշին Քէլբէլայի և Թէհրանի մեծ մօշտէհիդներին!...

—Սալաւաթ... կանչեց ամբոխը:

—Գնանք Շահին մեր ասելիքը ասելու և թող կործանուին այն մարդիկ, որոնք անհաւատներին են ծախում մեր երկիրը... Քայլեցէք...

Յետոյ ոստնեց ցած և համարձակ գնաց դէպի Արքի մեծ դուռը, որ բացուում էր ճիշտ պալատի վրայ՝ Մէյդանը—շահի կողմից:

Ամբոխի բուռն հոսանքից կիսաբաց դուռը ճռնչաց, և ժողովուրդը, հազարաւոր զուլխներ, ահագին աղաղակներով խուժեցին ներս, ետ մղելով պահակ զինուորներին:

—Դէպի պալատ, միւսիլմաններ, ով սիրում է Հազարաթը Մուհամմէդին... Կանչեցէք, ես Ալի...

—Ես Ալի... օռնաց ամբոխը և քայլեց:

Պալատի մեծ դուռը կողպած էր: Սէյիդը քայլեց դէպի Նայիբը Սալթանէի փողոցը՝ ամբոխը ետևից, սակայն այնտեղ մի գունդ զինուորներ, այն էլ Չահի լեռնական կատարի թիկնապահները, մի խիտ պատ կազմած, սուրները դէմ տուին...

—Ճանապարհ, գոռաց սէյիդը նրանց—եթէ դուք էլ անհաւատ եղիդիներ չէք, ճանապարհ առէք...

—Ե՛տ գնացէք, գոռաց մի սպայ—հրաման չը կայ այս կողմից:

—Լաւ ուրեմն, ժողովուրդ, դարձաւ սէյիդը ամբոխին—եթէ այս կողմից ճանապարհ չը կայ, ուրիշ

կողմով գնանք... Յառաջ միւս փողոցներով...

Ամբոխը «Ես Ալի» աղաղակները բերնին դարձաւ, Արքի դռնից դուրս եկաւ, յետոյ, փողոցում մի կատարի վազք սկսեց երկու ճիւղերով: Մի ճիւղը սէյիդի առաջնորդութեամբ պտոյտ գործեց Շէմս-Իւլ Իմարէթի շուրջը և Էնդէրուանի դռնից ներս խուժեց, իսկ միւսը մի ինչ որ կարճահասակ մոլլայի հետ Ջաբբախանայի փողոցից վրայ տուաւ Արքի երկաթապատ դռան, փըշրեց, պահակներին ոտքի տակ առաւ, միմեանց կոխտեց և Գէրը-Էլմաս ծառուղու միջով հասաւ միանալու առաջինին:

Սէյիդը՝ Հաբիբուլահն էր, իսկ մոլլան՝ Նաջաֆ-կուլին իր յաւիտենական անբաժան Սէյիդ խանի և ամենայանդուզն խէսփուշների հետ:

Պալատի դռնից խուժանը մղուեց դէպի Նայիբը Սալթանէի տան առաջ: Այդտեղ, մինչև այդ ոչ մի գէնքի չը դիմող ամբոխն արդէն կատարեց, երբ դարձեալ դէմ եկաւ այս անգամ շահի ձիււորուած թիկնապահներին.

—Ես Ալի, գոռաց Սէյիդ Հաբիբուլահնը, յետոյ գետնից մի քար վերցրեց և նետեց դէպի զինուորները: Նշանը բաւական էր. իսկոյն քարերի մի կարկուտ էր, որ գնաց տեղալու զօրքի գլխին, իսկ մօտ կանգնածները սկսեցին փշրել արքայորդու տան լուսամուտները և յառաջանալ:

—Յառաջ, օռնում էին ետևից սեղմողները—պալատ մտէք...

Ստեղծ հեշտ էր, բայց Մուհինը—նիզամը, թիկնապահների սպան, սուրն էր հանել և գօչում էր ամբոխին.

—Ե՛տ գնացէք, թէ չէ կը հրամայեմ կրակել...

—Չե՛ս համարձակուիլ, անհաւատների ընկեր, Եղիդ...

կանչում էր նրա զիմացը Սէյիդը:

—Ե՛տ ասում եմ... սպառնաց սպան:

—Յառաջ, ժողովուրդ:

—Կրակ...

Ու հետևեց հրացանների պայթիւն. նեղ փողոցը



լցուեց ծուխով, ճիչերով... Մի խառնաշփոթու թիւն  
Պաշտօնէն գրան. ամբօխը երեսը դարձրեց ու սկսեց ց ետ  
քննուել...

— Կրակ... ետ քաշուեցէք... զինուորներ, այս-  
տեղ... կրակ...

Ահա թէ ինչ էր լուում երբեմն հրացանների  
պայթիւնի, խառնի խուռն աղաղակների, ճիչերի, հայ-  
հոյանքների մէջ...

— Յառանջ, խէսփուշներ, դաշոյններով...

Մուլլալի զիլ կանչն էր: Առաջին ընկնողներից մէ-  
կըն էր եղել: Գնդակը ճիշտ կրճքում, ետ մղուեց, ըն-  
կաւ մի գործաւորի վրայ, մի խուլ աղաղակ արձակեց,  
կքուեց... և մի վարկեանում ոտքերի տակ գնաց, խու-  
սափող ժխորի ոտքերի տակ...

Մինչ այդ, պալատում սոսկումը քարացրել էր ա-  
մէնքին: Բայց ոչ. դրամատիքական այդ ծայրահեղ ըո-  
պէնքերին, չը պակասեց ծիծաղելին ևս:

Շահը մտած խոր, ներքին սենեակները, լուռ նըս-  
տել էր մի անկիւնում՝ թմրածի նման: Սատրաղամը  
մի քանի անձերով շրջապատուած՝ կճկուել էր Գիւլիս-  
տան այգիի պատի տակ և ձեռքի թղթերն էր շուռ ու  
մուռ տալիս: Լուսթիւնը թագաւորում էր ամեն տեղ  
պալատում. ոչ ոք չէր խօսում. ամէնքը սրել էին ա-  
կանջները գէպի փողոցը:

Իսկ այդ բոլորի մէջ յանկարծ ներսից երևում են  
վեց սենեկապաններ գլխից մինչև ոտք զինուած որսի  
հրացաններով և առաջնորդած Միրզա-Սէհմէդ խան  
շահի սպասաւորից, անցնում են կոկոզավիզ ու կանգ-  
նում հարեմխանայի դռանը:

Ծիծաղելի էր տեսնել նրանց երկփողեան ողորմելի  
գէնքերը, նրանց գունատ գէմքն ու դողդոջիւն շըր-  
թուռները և այդ բոլորի հետ կոկոզավիզ կեցուածքը:

Եօթ հոգով ուզում էին պալատը պաշտպանել...

Գրսում հրացանաձգութիւնը շարունակուում էր ճիչերի,  
խառնիխուռն աղաղակների հետ, սակայն ամբօխը ետ-  
ետ էր գնում, որովհետև տեղացող գնդակները փուում  
էին նրանցից համարձակներին. մանաւանդ որ զինուոր-

ների գնդերը սկսում էին գրէթէ պաշարել նրանց ե-  
րեք կողմից, սեղմելով դէպի Էնտէրուռնի շատ նեղ  
անցքը:

— Կրակ... գեռ լուում էր սպայի ձայնը:

Բայց այլ ևս չէր լուում և ոչ իսկ Մուլլալի զիլ  
աղաղակները:

Ջարգուած, պատերի սեղմած, հրած-հրմշտկուած,  
տեղացող գնդակների կարկուտից սարսափահար՝ շտա-  
պել էր նա կճկուել, ոտքերի միջով անցնել և գրէթէ  
կիսամեռ դրութեան մէջ էր, որ գնաց ընկնելու Նասրի  
խիաւանի մի սրճատան մէջ: Խէսփուշների փոշին ան-  
գամ չէր երևում, ամբօխը կոխտեւրտարել էր նրանց-  
մի քանիսները գետնի փոշին էին լզում, շատերը վի-  
րաւոր, հայհոյելով այս-այն կողմն էին անհետացել և  
Սէյիդ խանը, դժբաղտ օպիում ծխողը, ճիշտ մի ծաւի  
տակ, գնդակահար՝ մեռել էր փոքրիկ փոսի մէջ, գըն-  
դակի պէս ինքն իր վրայ ժողովուած:

Եւ դեռ հրացանները պայթում էին, փողոցը ծը-  
խով, ճիչերով լեցնում...

Պահ մի ևս, և մի փոքրիկ թնդանօթի փողը ե-  
րևաց պալատի աշտարակի վրայ...

Քիչ յետոյ Արքը դատարկուել էր, թողնելով փողոց-  
ների մէջ բազմաթիւ զիակներ...

Սակայն պարսիկ ժողովուրդը լաղթել էր:

Ճշմարիտ է, զոհեր և շատ զոհեր էր տուել նա,  
բայց այդ զոհերի գնովն էր որ յաշողուեց իր իրաւունք-  
ները ետ կորզել:

Շահը վախեցաւ, զգաց որ լիրտւի, Ալէվախը երբ  
զարթնում է և մռնչում, կարող է ոստումներ ևս  
գործել ու իր ճիրանների տակ բզկտել այն ամէնը,  
ինչ որ իր իրաւունքներն է բռնաբարում:

Ու Մենավաճառը ջնջուեց, միւս օրից իսկ լիովին  
լուծուեց, վճարելիք տուգանքը մի կերպ կատարուեց:  
Շահը մի ընծայ ուղարկեց Աշտիանուն, աղաչեց Քէլ-  
բէլայի մօշտէհիդին և չէր անցել 20 օր, որ մուռնե-



տիկները շուկաներում ու հրապարակներում յայտարարեցին Մենալաճառի ոչնչացումն, հետևապէս՝ ծխելու արտօնութիւն մօշտէհիդի կողմից:

Փողովուրդը իր արեան գնով ետ էր ստացել կորզուած իրաւունքները:

Սէյիդ Միրզա Րիզան իրաւունք ունէր-Ալէմգիբը անյաղթելի էր... և այն՝ միմիայն իր յամառ, աննկուն և որը գլխաւորն է՝ ոգու ամբողջ ու միահամուռ ձգտման ոյժով...





